

1908

ԱՐԱՐԱՏ

5

ՄԱՅԻՍ-ՅՈՒՆԻՍ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մ Ա Յ Ի Ս—Յ ՈՒՆ Ի Ս 1908 թ.

1. ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ. Բաղուածք յօրագրութեանց Սինոդի 448—455
2. ԿՐԾՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ.—ԿԵԱՆՔԻ ԲԱՆԱԼԻՆ. Գ.

Վ. Յովսէփեան 456—461
3. ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ.—ՎԵՐԱՆՍՐՈՂՈՒԹԵԱՆ

Կարեքը Հայոց Եկեղեցու համար Երուսաղմ վարդապետ 465—486
4. ՄԱՅՐ ԱԹԱՌ.—ԼԱՐԵՐ և ՇԱՀԻ հրովարտակը . 487—489

ԳՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
5. ԴՐԱԿԱՆ աղնարկներ. ՄԻՆԱՍ ԲԵՐԲԵՐԵԱՆ . . 490—500
6. Աշխարհաբարի Հոլովները. Մ. ԱՐԵՂԵԱՆ . . 501—510
7. ՍԵՐՈՆ ՀԱՒԵՐ (բանաստ.) Յ. ՊԵՏՐՈՍԵԱՆ . . 511
8. Ինտելիգենցիա և կրօն լիոխ. ԼԵՈՆ վարդապետ . 512—536
9. Gloria Victis, Ելիզա ՅԷԶԿԵԼԻԹԱՐԳԵՄ. Ն. ԲԻՐԵՂԵԱՆԵՅ 537—563
10. ՍԵՐԱՍ ԹԱՒԱԼ ԲԱՆԱՍՏ. Յ. ՊԵՏՐՈՍԵԱՆ . . 563
11. ՏԻՄՈԹԷՈՍ ԿՈՒՂԻ հայ Թարգմանութեան ժամանակը

և Ս. ԴՐԵՔԻ ԵՐՐՈՂԵ ԿՈՄ «ՆՈՐԱՐԵՐ» հայ Թարգմա-

նութիւնը Գ. Տ. ՄԻՐՅԱՆ 564—589
12. ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—ԿԵՐԵՐ և ՊԱՍԿԵԼԻՐ մեր մէջ.

Ե. ԹԱՂԵՍԵԱՆ 590—594. Начальная Русск.

Хрестоматія 1-ая и 2а книжка Ս. ՄԱՆԴԻ Գ. 594—596
13. ՏԱՃԿԱՀԱՅՔ.—ԷՋՄԻՆԻՆ և Կ. ՊՈԼԻՍ * * . . 597—599
14. ՄԱՆԵՐ ԼՈՒՐԵՐ 600—603
15. ԱՅԼ և աՅԼԵ 603—605
16. «ԱՂԵԼԼԵ»-ի յօրեղեան 606
17. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա Ր Ա Ր Ա Տ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

Ս. ԷԶՄԻԱՆԻ

1908-ՌՅԾԷ

Տարի ԽԱ.

ՄԱՅԻՍ-ՅՈՒՆԻՍ

Համար Ե.-Զ.



Ս. ԷԶՄԻԱՆԻ

Ելեհրաւարժ Տպարան Մայր Աթոռոյ

ՀԱՅԱՍՏԱՆ

ԿԵՆՏՐԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ


ՄԱՍԻՍԻ ՎԵՐՈՒՆՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Հ ր ա մ ա ն ա լ

ԱՄԵՆ. Տ. ՏԵՂԱԿԱԼԻ

Հայրապետության Հայոց



ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

—

ՔԱՂՈՒԱԾՔ ՅՈՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՈՒԻ

— Ի 10-ն մարտի Սինոդն հրամայեաց՝ առեալ ի նկատ՝ զի զԽոսրով վարդապետն ղյանձնեալ ի դատ մարմնաւոր իշխանութեան՝ անյարմար է կարգել ի պաշտօն վանահօր Հառիճոյ վանից մինչ ցաւարտ դործոյ մեղադրանաց նորա ի մարմնաւոր դատարանի՝ ուստի փոխել զօրագրական վճիռ Սինոդիս 131-ն դեկտ. անցեալ ամի, թողլով զԽոսրով վարդապետն ի վանս Ս. Էջմիածնի առայժմ, պատուիրելով դանձապահի Սինոդիս շարունակել զտուչութիւնն միաբանական սննդադրամոց նորա, առանց ռոճկի, ի միոյն Յունուարի տարւոյս ցառանձին տնօրէնութիւնն Հ. 218:

— Ի 14-ն մարտի Սինոդն հրամայեաց՝ ունելով առաջի աչաց՝ զի Մարիա Վասիլենա Զանկեիչ և Նատալիա Նիկոլաենա Բրիլիին ըստ թոյլտուութեան Նահանգապետի Տփլսեաց և ըստ տնօրէնութեան կոնսիստորիային Հայոց

Վրաստանի, նաև ըստ սահմանեալն կարգի, մտեալն են ի ծոց եկեղեցւոյ Հայոց և ապա թէ պսակեալ ըստ ծիսի նոյն եկեղեցւոյ՝ ուստի զպսակադիր քահանայս ճանաչել արդար և անպարտ։ Հ. 225։

— Ի նմին թուի Սինօզն հրամայեաց՝ ունելով առաջի աչաց՝ զի Թերթոն Գօգելաշվիլի ընկալեալ է ի ծոց եկեղեցւոյ Հայոց ըստ մակագրական թոյլտուութեան Նահանգապետին Տփլսեաց և տնօրէնութեան կոնսիստորիային Հայոց Վրաստանի և ապա թէ մտեալ է յամուսնութիւն ըստ ծիսի եկեղեցւոյ մերոյ՝ ուստի զմկրտող և զպսակող զնա քահանայս ճանաչել արդար և անպարտ։ Հ. 229։

— Ի 17-ն մարտի Սինօզն հրամայեաց՝ ազատ համարել զՏ. Արիստակէս վարդապետն ի պաշտամանէ հիւրընկալի Մայր Աթոռոյ և յայդ պաշտօն կարգել զՏ. Ներսէս վ. Տէր Միքայէլեան, պատուիրելով Վանական Կառավարութեան յանձնել նորոգ կարգելոյն զամենայն կահ-կարասիս, զանկողինս և զայլ իրս հիւրատան պատշաճն ցուցակաւ։ Հ. 232։

— Ի 19-ն մարտի Սինօզն հրամայեաց՝ զԴաւիթ քահանայն Քէշիշեան Հին Խրիմու և զՍարգիսն Ներսիսեան յանձնել ի գատ մարմնաւոր իշխանութեան ըստ 1525, 1549 և 1552 յօդ. Պատժ. Օր. և զկնի վճռահատութեան և եթ գատարանին լսել զզեկուցումն վասն խնդրոյ վաւերականութեան պսակի Աղնուի Նղիազարեանց ընդ Սարգսի Ներսիսեան։ Հ. 239։

— Ի նմին թուի Սինօզն հրամայեաց՝ թողլով զբըն նութիւն նախահաշուի ագարակի Մ. Աթոռոյ առանձին զեկուցման՝ պատուիրել զիւղատնտեսին առնել զանհրաժեշտ բարեփոխութիւնս ի բարեկեցութեան ծառայողաց ագարակի նկատմամբ բնակարանի, մահճակալի (թախտի), խոտեայ ներքնակի, բաղանեաց և բժշկական օգնութեան նոցա, այլ և տալ իւրաքանչիւրոյն ի ծառայողաց յաւելեալ սննդադրամ երկ երկու ռուբլիս յամիսն սկսեալ ի միոյն այսր մարտի։ Հ. 240։

— Ի 21-ն մարտի Սինոդն հրամայեաց՝ շրջաբերականաւ տալ կոնսիստորիայից Հայոց հրահանգ, ի փոփոխումն շրջաբերականի յ2-ն օգոստոսի 1906 ամի, զինախ՝ պսակ հայ լուսաւորչականի ընդ անձին Օրթոդոքսի պարտի անպայման կատարել ըստ ծիսի Օրթոդոքս եկեղեցւոյ, և երկրորդ՝ զաւակունք, ծնեալք յայդպիսի պսակաց, պարտին մկրտել ըստ ծիսի Օրթոդոքս եկեղեցւոյ, յորժամ մին յամուսնոց շարունակէ մնալ Օրթոդոքս. բայց ի դէպս անցանելոյ վերջնոյս ևս ի դաւանութիւն Հայատանեայց եկեղեցւոյ զաւակունք կրտսերագոյնք քան զ14 ամս սլարտին հետեւել հաւատոյ ծնողացն, այն է դաւանութեան մերս եկեղեցւոյ, իսկ աւագագոյնք քան զ14 ամս պարտին մնալ Օրթոդոքս մինչ ցարբունս հասակի, զինի որոյ կարեն ազատ ընտրել զդաւանութիւն ըստ ցանկութեան իւրեանց: Հ. 248:

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ հաւան գտեալ ընդ առաջարկ Տ. Տեղակալի՝ զմին ի սանուց Հոգևոր ձեմարանի Ս. Էջմիածնի, որք պահպանին ծախիւք Մայր Աթոռոյ, համարել որդեգիր նորին պայծառապատուութեան Տ. Փոխարքային կոմս Իլարիոն Իվանովիչ Վօրօնցով—Դաշկովի: Հ. 252:

— Ի 26-ն մարտի Սինոդն հրամայեաց՝ ծանուցանել փոխ—Թեմակալին Երեւանայ, եթէ անթոյլատրելի է միանգամայն տալ ումբը կենսաթոշակ ի վիճակային արգեանց: Հ. 274:

— Ի 28-ն մարտի Սինոդն հրամայեաց՝ բաշխել զ31 խալուար ցորեանն ի շտեմարանէ Մ. Աթոռոյ չքաւորաց Վաղարշապատ գեղջ ըստ ցուցակին, հաստատելոյ ի ձեռն տանուտեառն հասարակութեան Վաղարշապատայ այնու պայմանաւ, զի իւրաքանչիւր երեքին անձինք ի ցուցակագրելոցն երաշխաւորք լիցին վասն իրեար փոխադարձաբար առ ի դարձուցանել զփոխառեալ ցորեանն ի շտեմարան Մ. Աթոռոյ, ի ժամ կալօրէից յայսմ ամի: Հ. 282:

— Ի 28-ն մարտի Սինոդն հրամայեաց թոյլ տալ

Կոնսիստորիային Երևանայ ընդունել զՅովակիմն Խաչատրեանց ի կոչումն հոգևոր և առաջադրել փոխ-թեմակալին Երևանայ ձեռնադրել զնա ի քահանայ Արքիմ Գեղջ Ծարուր-Դարալագեազ գաւառի: Հ. 285.

— Ի նմին թուի Սինօգն հրամայեաց՝ ունելով ի նկատի զյայտարարութիւն Կոնսիստորիային Շամալուոյ և զվերջին հեռագիր նորին, դադարեցուցանել զՄեսրոպ քահանայն Տէր Ոսկանեանց ի քահանայագործութենէ և առաքել զնա յապաշխարութիւն ի վանս Սեանայ վեցամսեայ ժամանակաւ: Հ. 286.

— Յ 2-ն ապրիլի Սինօգն հրամայեաց՝ թոյլ տալ Կոնսիստորիային Վրաստանի ընդունել զՅարութիւն Տէր Խաչատրեան ի հոգևոր կոչումն և առաջադրել առաջնորդի թեմին ձեռնադրել զնա ի քահանայ Բարանա գեղջ գաւառին Ղազարի: Հ. 299.

— Ի 4-ն ապրիլի Սինօգն հրամայեաց՝ թոյլ տալ Կոնսիստորիային Աստրախանի ընդունել զԳառապարն Մեղ-նիկեանց ի հոգևոր կոչումն և առաքել զնա վասն ձեռնադրութեան ի քահանայ Ղարաշալի գեղջ յո յարմար համարեսցի Ատեանն: Հ. 308.

— Յ 9-ն ապրիլի Սինօգն հրամայեաց՝ կարգելով զԶաքարիա վարդապետ Լալայեանց ի կատարող պաշտաման վանահօր վանուցն Ճալէթու, հայցել զհաւանութիւն Նահանգապետին Գանձակայ առ ի հաստատել զնա ի պաշտաման վանահօր: Հ. 317.

— Ի 28-ն ապրիլի Սինօգն հրամայեաց՝ դարձուցանելով զվկայական Խուրշուդի Տէր Ղազարեանց՝ պատուիրել Կոնսիստորիային Երևանայ ընդունել զնա ի հոգևոր կոչումն և փոխ-թեմակալին Երևանայ ձեռնադրել զնա ի քահանայ Ղոյթուր գեղջ, գաւառին Դարալագեազի: Հ. 338.

— Ի նմին թուի Սինօգն հրամայեաց՝ պատուիրել Կոնսիստորիային Երևանայ ընդունել զՅովհաննէսն Ծաղի-

կեանց ի հոգևոր կոչումն և փոխ-թեմակալին Երևանայ ձեռնադրել զնա ի քահանայ Շէնգաւիթ գեղջ գաւառին Երևանայ: Հ. 341.

— Յ 30-ն ապրիլի Սինօզն հրամայեաց՝ առեալ ի յարգանս զխնդիր հայ հասարակութեան Աստրախան քաղաքի և ունելով առաջի աչաց, զի վասն երից լրացուցիչ կէտից ի նախագծի կանոնադրութեան թեմական դպրանոցին Աստրախանի նախարարութեան ներքին Գործոց հարցեալ էր զեզրակացութիւն ի Տէր հանգուցեալ Կաթողիկոսի ամենայն հայոց, խնդրել ի նախարարէ ներքին Գործոց թոյլ տալ բանալ հետզհետէ զնոր բաժանմունս ի դպրանոցին ի վերջան զԲ.-ն ըստ ծրագրի և կանոնադրութեան թեմական դպրանոցին Ն. Նախիջևանի և Բեսարաբիոյ, իսկ զառաջարկութիւն կանոնադրութեանն ի հաստատութիւն թողուլ ցընտրութիւն կաթողիկոսի ամենայն հայոց, որ և ունի տնօրինել ըստ խնդրոյս զարժանն: Հ. 345.

— Յ 7-ն մայիսի Սինօզն հրամայեաց՝ ծանուցանել Սոփիայի Բէգլարեանց ի ձեռն Կոնսիստորիային Վրաստանի, եթէ թոյլտուութիւն պօսակի զրկելոցն յիրաւանց մտանելոյ ի նոր ամուսնութիւն վերապահեալ է կաթողիկոսի ամենայն հայոց: Հ. 360

— Ի նմին թուի Սինօզն հրամայեաց՝ կարգել ի պաշտամանս անդամոց վերաստուգիչ յանձնաժողովոյ, զԲենիկ, Ղլեոն և զՆերսէս վարդապետս՝ յանձն առնելով նոցա, նախագահութեամբ Բենիկ վարդապետի, յամսոյ ամիս ստուգել զամենայն դրամական հաշիւս հաստատութեանց Մ. Աթոռոյ, այն է՝ Ճեմարանի, վանական կառավարութեան, տպարանի, ագարակի և հիւրատան և վարդինս ստուգութեան առաջի առնել Սինօզիս զՏէր Բաբգէն վարդապետն, զԿ. Տէր Գրիգորեան և զԱ. Օհանջանեան ազատ կացուցանել յանդամութենէ Յանձնաժողովոյն ըստ խնդրոյ իւրեանց: Հ. 365.

Ամուսնալուծութիւնք

— Ի 14-ն մարտի Սինօդն հրամայեաց՝ հաստատելով զեզրակացութիւն կոնսիստորիային Երեւանայ՝ լուծանել զպսակ Յովակիմայ Բաբայեանց, բնակչի Վերին Խաթունարի գեղջ, և տալ միայն առն իրաւունս նորոյ ամուսնութեան: Հ. 230:

— Ի 17-ն մարտի Սինօդն հրամայեաց՝ հաստատել զեզրակացութիւն կոնսիստորիային Երեւանայ, լուծանելով զպսակ Յովհաննու Օբտուեանց, բնակչին Ղուլիբէկ-Դիդա գեղջ, գաւառին Նախիջևանի, ընդ Ուլտանայի Ստեփանեան, տալով միայն առն իրաւունս նորոյ ամուսնութեան: Հ. 236:

— Ի 19-ն մարտի Սինօդն հրամայեաց՝ հաստատելով զեզրակացութիւն կոնսիստորիային Նոր-Նախիջևանի և Բեհարաբիոյ, լուծանել զպսակ Եփրոսինեայ Կրտսէնիկեան ընդ վերաբնակելոյն ի Բաքու քաղաքին Երուանդայ Պալեան, տալով իրաւունս նորոյ ամուսնութեան կնոջն այժմ և եթ, իսկ առն՝ ղին լարկանելոյ զնա ընդ միամեայ եկեղեցական ապաշխարանօք: Հ. 237:

— Ի նմին թուի Սինօդն հրամայեաց՝ ըստ միջնորդութեան կոնսիստորիային Երեւանայ՝ չեղեալ համարել զպսակ Դանիէլի Ղազարեանց, գաղթականի, Վանեցւոյ, ընդ Ջարուհւոյ Ղևոնդեան, թոյլ տալով երկոցունց ևս մտանել ի նոր ամուսնութիւն, քանզի պսակ նոցա չէ կատարեալ օրինական կարգաւ՝ ըստ ծիսի Հայաստանեայց եկեղեցւոյ: Հ. 238:

— Ի 21-ն մարտի Սինօդն հրամայեաց՝ հաստատելով զեզրակացութիւն կոնսիստորիային Նոր-Նախիջևանի և Բեհարաբիոյ՝ լուծանել զպսակ բնակչի Մոսկուա քաղաքի Մովսիսի Սահարեկեանց ընդ կնոջն Եղիսաբէթի, թոյլ տալով միայն առն մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում. իսկ զկինն Եղիսաբէթ և զՅովհաննէսն Սահարեկեանց արկանել ընդ եկեղեցական ապաշխարութեամբ վեցամսեայ ժամանակաւ ըստ 15 յօդ. 34. Պատժ. Օր: Հ. 251:

— Ի 24-ն մարտի Սինօդն հրամայեաց՝ ոչ գտանելով զօրինական հիմն վասն լուծման պոսակի Բաքուաբնակ Կոստանդնի Այտինեանց ընդ Ուլտանայի Աւաքեւեան Այտինեանց՝ մերժել զինդեր ամուսնոցն, որ վասն լուծման պոսակի նոցա, պատուիրելով կոնսիստորիային Շամախւոյ անօրինել յորդորել զամուսինսն գալ ի հաշտութիւն և ի համաբնակութիւն ընդ մեանս: Հ. 359:

— Ի նմին թուի Սինօդն հրամայեաց՝ հաստատելով զեզրակացութիւն կոնսիստորիային Երեւանայ, լուծանել զպսակ չեղիքնազի Կարապետեան ընդ Յակովբայ Սուքեասեան ի պատճառս անյայտ բացակայութեան առն և թոյլ տալ կնոջն մտանել ի նոր ամուսնութիւն: Հ. 260:

— Ի 25-ն մարտի Սինօդն հրամայեաց՝ հաստատելով զեզրակացութիւն կոնսիստորիային Շամախայ՝ լուծանել զպսակ Հռիփսիմեայ Սաղաթէլեան, ընակչուհւոյ Շուշի քաղաքի, ընդ Յարութիւնի Վարդապետեան և տալ միայն կնոջն իրաւունս նորոյ ամուսնութեան: Հ. 269:

— Ի նմին թուի Սինօդն հրամայեաց՝ ոչ դատանելով զօրինական հիմն լուծման պսակի Մկրտչի Մուսաբէկեանց, ընակչի Երեւան քաղաքի, ընդ Շուշանկան Խաթակնեան, մերժել զխնդիր առն, որ վասն լուծման պսակի նորա, պատուիրելով կոնսիստորիային Երեւանայ տնօրինել յորդորել զամուսնինսն դալ ի հաշտութիւն և ի համաբնակութիւն ընդ միմեանս: Հ. 270:

— Ի նմին թուի Սինօդն հրամայեաց՝ հաստատելով զեզրակացութիւն կոնսիստորիային Երեւանայ՝ լուծանել զպսակ ընակչի Իմրու գեղջ, գաւառին Էջմիածնի, Մկրտչի Թադէոսեան ընդ կնոջն Նիգեարի Խոսրովեան, թոյլ տալով առն մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում: Հ. 271:

— Յ 2-ն ապրիլի Սինօդն հրամայեաց՝ հաստատելով զեզրակացութիւն կոնսիստորիային Նոր-Նախիջևանի լուծանել զպսակ Սրբուհւոյ Տահրէճեանց ընդ առն Յովհաննիսի Տահրէճեանց, թոյլ տալով առն մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում: Հ. 300:

— Ի նմին թուի Սինօդն հրամայեաց՝ ոչ դատանելով հիմն ինչ վասն լուծանելոյ զպսակ Չարէխեան ամուսնոց՝ զխնդիր ընակչուհւոյ Նոր-Նախիջևան քաղաքի Աննայի Չարէխեանց թողուլ առանց հետեանաց: Հ. 301:

— Ի նմին թուի Սինօդն հրամայեաց՝ հաստատելով զեզրակացութիւն կոնսիստորիային Նոր-Նախիջևանի, լուծանել զպսակ Իսկուհւոյ Թումրուխեան ընդ առն Վարդերեսի Թումրուխեան, թոյլ տալով կնոջն և եթ մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում: Հ. 302:

— Ի նմին թուի Սինօդն հրամայեաց՝ հաստատելով զեզրակացութիւն կոնսիստորիային Ղարաբաղի, լուծանել զպսակ Շամամայ Աթանասեան, ընակչուհւոյ Օրօբան գեղջ գաւառին

Նուխույ, ընդ անդարձ արտորեալ առն Յակոբջանայ Արզու-
մանեանց և թոյլ տալ կնոջն մտանել ի նոր ամուսնութիւն
ընդ այլում: Հ. 303.

— Յ 9-ն Ապրիլի Սինօդն հրամայեաց՝ համեմատ օրագրա-
կան վճռոյ Սինօդին, որի 6-ն նոյեմբերի 1902 ամի, լուծանել
զպտակ բնակչի Արաղի գեղջ, նահանգին Կարուց, Արմենակայ
Գրեգորեան ընդ Հերիքնաղի Յովհաննիսեան, թոյլ տալով միայն
առն մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում: Հ. 320.

— Ի նմին թուի Սինօդն հրամայեաց՝ հաստատելով զեղ-
րակացութիւն Կոնսիստորիային Երեւանայ լուծանել զպտակ
բնակչուհւոյ Բլիւեր գեղջ, գաւառին Եջմիածնի, Մագթաղի
Նիկողայոսեան ընդ Գրեգորի Թովմասեանց և առն միայն թոյլ-
տալ մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում: Հ. 322.

— Յ 30-ն Ապրիլի Սինօդն հրամայեաց՝ հաստատելով զեղ-
րակացութիւն Կոնսիստորիային Հայոց Վրաստանի—լուծանել
զպտակ բնակչի Գոմ գեղջ գաւառին Ախալքալաղայ, Գալստի
Փիլոսեան ընդ կնոջն Սալվիի Յովհաննիսեան առ անյայտ բա-
ցակայութեան նորին, տալով առն իրաւունս մտանելոյ ի նոր
ամուսնութիւն ընդ այլում: Հ. 343.

— Յ 2-ն մայիսի Սինօդն հրամայեաց՝ համեմատ եղրակա-
ցութեան Կոնսիստորիային Հայոց Վրաստանի—լուծանել զպտակ
Նիկողայոսի Մելիք-Նուբարեանց ընդ հաւաղիայ, թոյլ տալով
կնոջն և եթ մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում: Հ. 348.

— Ի նմին թուի Սինօդն հրամայեաց՝ առեալ ի նկատ
զիտոստովանութիւն կնոջն զանհաւատարմութենէ իւրմէ, լու-
ծանել զպտակ Կարապետի Գալֆայեան ընդ կնոջն Թագուհւոյ,
առն և եթ թոյլատրելով մտանել ի նոր ամուսնութիւն ընդ
այլում: Հ. 349:

— Ի 5-ն մայիսի Սինօդն հրամայեաց՝ համեմատ եղրակա-
ցութեան Կոնսիստորիային Ն. Նախիջևանի լուծանել զպտակ
Յակովբայ Պապեանց ընդ կնոջն Շուշանկան, թոյլ տալով կնոջն
և եթ մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում: Հ. 358.

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

ԿԵԱՆՔԻ ԲԱՆԱԼԻՆ

Հաւատ սիրով աջողեալք
Գաղ. Ե. 6.

Ա.

Մարդկային կեանքը հոսանուտ է և անցաւոր: Մեր աչքի առաջ ծնւում է երեխան, կատարելութեան հասակը թեւակոխում և ապա անհետ խորասուզւում մահուան ծովի անյատակ խորութեան մէջ: Այս է կեանքի արտաքին տպւորութիւնը: Եւ այսպէս է ոչ միայն անհատի, այլ և ազգերի համար: Ո՛ւր են հին աշխարհի թագաւորներն ու աշխարհակալները, որոնց ձիւս սմբակների տակ կանաչ արտերն ու մարգագետինները փռելից անապատ էին դառնում: Ո՛ւր է գեղեցիկ Յունաստանը, արուեստի և բանաստեղծութեան չքնաղ հայրենիքը, ուր աշխարհի տէր Հռոմը իւր տիեզերակալ կայսրերով և զօրապետներով, անմահ ճոխութեամբ և հարստութեամբ: Անցել են: Անցել են Աթէնքի գեղեցիկ կոյսերը, որոնք Աթենասի և Աստղիկի գաղափարն են տուել յոյն արուեստին, անցել են Հռոմի պերճ և ազնուաշուք պատրիկները՝ կեանքի վայելքները ճաշակող եպիկուրեան հանճարով և ճոխութեամբ: Մենք կարող ենք աւելի հեռուն սաւառնել. նոր պեղումների և ուսումնասիրութիւնների շնորհիւ ընդարձակուել է մեր հայեացքը զէպի պատմութեան խորին անցեալը, անհունութեան և անորոշութեան սահմաններից տեսանելի են դարձել արդէն հին Նգիպտացիների, Ասորեստանցիների, Հետիտների, Բաբելացիների և Պարսիկների կեանքն իրենց արուեստի, քաղաքակրթութեան և գիտութեան բարձր զարգացմամբ, աշխարհակալական ձգտումներով և նուաճումներով: Անցել են և սրանք, Նգիպտոսի փարաւոններն ու Ասորեստանի հզօր արքաները իրենց

չքեղ և զարմանալի պալատներով ու տաճարներով: Ի՞նչ է մարդկային կեանքը յաւիտենականութեան մէջ. քամոյց պոկուած աշնանային մի տերև կամ արևի ճառագայթների առաջ չքացող մի կաթիլ ցօղ: Անցաւոր է փառքը, հարստութիւնը, արտաքին զօրութիւնը, վայելքը և ամենայն ինչ ահաւոր ժամանակի տեղութեան մէջ:

Եւ այս անցաւորութեան, դաժան մահուան դաղափարը կլինէր յաղթական, տիեզերքի վերայ իշխող, մարդկութիւնը իւր կեանքին վերջ կդնէր յուսահատութեամբ, եթէ նորա սրտի խորքում հաստատուած չլինէր մի ուրիշ հակոտնեայ զգացում, անյագ ծարաւ դէպի վսեմը, դէպի գաղափարական աշխարհը, յաւիտենական անժանօթը, որից կենդանութեան աղբիւրն է բղխում—հաւատ առ Աստուած, բարին, ճշմարիտը և գեղեցիկը: Այս հաւատն ու զգացումն է, որի շուրջն է պտըտում տիեզերական և անհատական պատմութիւնը իւր լաւագոյն տենչերով և իղձերով, հոգեւոր ազնիւ պտուղներով: Հանենք այդ երակը և ահա կեանքն ու պատմութիւնը կլինի աննպատակ և անհասկանալի, ճիւղաղական մի զօրութիւն, որ կոչուած է միայն իւր ծնունդներին անողոք կերպով տանջելու և ոչնչացնելու:

Բ.

Մարդկային հոգուն յատուկ է թափանցել կեանքի խորհուրդների մէջ: Իսկ կեանքը բանականութեան համար անապատի աւազների մէջ թաղուած մի լուռ սփինքս է: Պէտք է գտնել այդ գաղտնիքը: Մեր միտքը թռչչենք է գործում ըմբռնելու գոյութեան սկիզբն ու նպատակը, տիեզերքը, իւր արտաբուստ անողոք, ոչինչ չխոստացող, մեքենական օրէնքներով, որի մի մասնիկն ենք կազմում և մենք: Տանջալից է որոնման այդ ուղին, բայց յատուկ բոլոր մտածող, զգացող էակներին: Ի՞նչ է կեանքը: Ի՞նչու ենք ծնուել: Աւելի բանաւոր: չէ ինքնասպանութիւնը: Ի՞նչ է բարին և չարը, մեղքն ու արդարութիւնը, ճշմարտու-

թիւնը, Իհնչու պէտք է խեղդենք մեր մէջ եսական և անձնական վայելքի, շահասիրութեան շարժառիթները, աւելի բնական չէ, որ հզօրը իւր գազանական բնազդներով ոչնչացնէ իրենից թոյլերին, ինչո՞ւ մեր ազնիւ ետը, խիղճը բողբոջում է դորա դէմ: Ահա մտքեր ու հարցեր, որ զարթնում են մտածող մարդու հոգու խորքերից, ինչպէս անտառապտտ լեռների ձորերից ու խոռոչներից բարձրանում է մէզն ու մառախուղը և նրանց կատարը ծածկում:

Կենդանարար այն լոյսն ու ջերմութիւնը, որ փարատում է մեր հոգու վերայ նստած մէզն ու մառախուղը, այն բանալին, որ լուծում է կեանքի առեղծուածը, նպատակ և բովանդակութիւն տալիս նորան, հաւատն է: Առանց հաւատի գիտութիւնն անկարող է մեր հոգու ձգտումներին և տենչերին բաւականութիւն տալ, լուծել կեանքի նպատակը: Նա միայն առարկայական քննութեան հետ գործունի, նա ընդարձակում է մեր ծանօթութիւնները, միջոցներ տալիս բնութեան շատ երևոյթների վերայ իշխելու կամ մեր օգտին գործադրելու: Նա լուսաբանում է մեր կենդանական կեանքը, պարզում որոշ չափով նորա կապը հոգեկան կարողութիւնների և երևոյթների հետ, առանց մազի չափ անգամ պակասեցնելու կեանքի խորհրդաւորութեան գաղտնիքը, մահուան և անցաւորութեան անողոր գաղափարի յուսահատական իրողութիւնը:

Մեր մէջ սովորական դարձած դատողութեամբ հաւատը յատուկ է միայն հասարակ ժողովրդին, «կրթուած» և գիտութեան հօտն առած շրջանների համար ամօթ է նոյն իսկ հաւատացեալ լինել: Բայց այդ մի մոլորութիւն է, որ բղխում է ծանծաղ մտածելուց և տգիտութիւնից, Ընդհակառակ հաւատը բարոյական այն կենդանարար զօրութիւնն է, որ հաւասարապէս անհրաժեշտ է թէ ուսմին և թէ քաղաքակրթութեան վերին աստիճանի վերայ կանգնած մարդուն, Տարբեր են նրանց հաւատոյ բովանդակութիւնն ու որակը իրենց հասկացողութեան և կրթութեան աստիճանների համեմատ, բայց երկուսի համար էլ նա է

միակ մղիչ, մաքրիչ և սփռփիչ զօրութիւնը: Երկուսն էլ այնտեղից են իրենց գոյութեան և կեանքի բովանդակութիւնն ու նպատակը ստանում, երկուսն էլ առանց այդ բարոյական զօրութեան հաւասարապէս գազաններ են, մէկը վայրենի և կոշտ, միւսը նուրբ և խորամանկ:

Մարդկային հոգու զարգացման պատմութիւնը սլար-գում է, թէ նորա բոլոր սխրագործութիւնները հաւատի արդիւնք են: Հաւատոյ հերոսները միայն կարող էին առել, «մահ ուր է յաղթութիւն քո»: Որովհետեւ նոքա արեւելիքի և կեանքի վերայ չեն նայում իբրեւ մի պատահականութեան վերայ, այլ Աստուծոյ էութեան և կենդանութեան մի յայտարարի վերայ: Աստուծոյ է գալիս կեանքը, անմահութեան և կատարելութեան աղբիւրից, որի մի կաթիլն ենք կազմում և մենք, մեր գոյութեամբ կապուած նորա հօր և անսահման կամքի հետ, և ուրեմն որոշ դեր ունինք կատարելու այն հոյակապ շինութեան կառուցման մէջ, որ բարոյական կատարելութիւն է կոչուում և Աստուծոյ թագաւորութիւն: Այս հաւատից են բղխել անհատի, ազգութեան և մարդկութեան բոլոր մեծ գաղափարներն ու գերականները, բարոյական և մարդասիրական պէս պէս երևոյթներն ու գործերը: Մարդկային հոգու ամբողջ զարգացումը, քաղաքակրթութիւնը, դաստիարակչական և յառաջադիմական ձգտումները հաւատի թելադրութիւն են միայն: Չլինէր հաւատ գէպի ապագան, կ'կանգնէր գործունէութեան մեքենան և յուսահատութիւնը կ'իշխէր: Այս հաւատից է բղխում մեր կոչումն ու ծառայութիւնը գէպի դրացին, եղբայրը, մեր ժողովուրդն ու օտարը: «Հաւատ սիրով աջողեալք» ճշմարիտ կրօնական անձնաւորութեան հոգու պատկերն է և նորա գործնական կեանքը: Պատահական չէ, որ բարձրագոյն և հոգեւոր կեանքի այդ երկու ծաղիկները կապուել են միմեանց հետ առաքեալի գրչի տակ: Հաւատացեալի ներքին աշխարհում նրանք արմատով, օրգանական միութիւն են կազմում և իբրեւ ազնիւ հեղուկ անուշահոտութեամբ լցնում հոգու անօթը: Անհատներ կարող են լինել սրոնց մէջ կրօնական հաւատի

փոխարէն որ և է աշխարհայեացք է բռնում, բայց այդ ժամանակաւոր և մասնաւոր բնաւորութիւն ունի: Կրօնական մաքուր հաւատն է, որ մղում է մարդուն դէպի անձնութիւն և բարոյական կատարելութիւն, զսպելով եսականը, շահասիրականը: Կրօնական հաւատը մի և նոյն ժամանակ սէր է դէպի մերձաւորը, դէպի կարօտեալը: Իսկ այս բոլորի վերջնական ելակէտը Աստուած է, մեր հոգու զեկավարն ու տնօրէնը, տիեզերքի կենդանի հոգին: Նորա գոյութիւնը գիտնական ապացոյցների չի ենթարկւում, բայց ոչ մի լուրջ գիտնական էլ չի փորձում՝ ջրել այն զօրութիւնը, որով մարդկային կեանքն ու պատմութիւնը միտք ու բովանդակութիւն է ստանում և մեղմանում բնութեան ճակատագրական և անողորմ մեքենայականութիւնը: Նիւթապաշտական հայեացքը, որ այնքան իշխող է մակերևութային և խակ մտքերի վերայ, միակողմանի և անբաւարար է նկատուած արդէն իսկական գիտութեան և փիլիսոփայութեան ներկայացուցիչների կողմից: Նա բաւականութիւն չի տալիս մարդկային հոգու գաղափարական և ազնուագոյն պահանջներին. տանջուող և որոնող հոգիներն այնտեղ խաղաղութիւն և հանգիստ չեն գտնում:

Գ.

Մեծ է գիտութեան զօրութիւնը, մարդկային մտքի յառաջագիմութիւնը, քաղաքակրթութիւնը: Բայց ի՞նչ կարող են անել նրանք տառապող հոգիների համար առանց Աստուծոյ գաղափարի: Գիտութիւնն ու քաղաքակրթութիւնը նոյն իսկ չարիք են առանց հաւատոյ և բարոյականութեան մաքրիչ զօրութեան. որովհետեւ նրանց ընթացակից են և այնպիսի երեւոյթներ, որոնք կեանքի և դոյութեան ամենամեծ թշնամիներն են: Քաղաքակրթութիւնը բարիք է, բայց մի և նոյն ժամանակ տանջանք իւր բացասական և վերաւոր կողմերով, որ քաղցկեղի նման վարակել կարող է մարդկային հոգին ու կեանքը, եթէ հաւատոյ և սիրոյ չաղախը սպեղանի չլինի նորա ապականու-

թեան գէմ: Յաւոց և հեծութեան այս զարմանալի հովիտը բոլորովին ուրիշ գունաւորութիւն է ստանում, երբ Աստուծոյ կենդանի շունչն ենք տեսնում նորա մէջ հաւատոյ և սիրոյ ակնոյցներով: Տիեզերքը, որի մի մասն ենք և մենք, այլևս մեռած մեքենականութիւն չէ և աննպատակ: Զինջ երկինքը իւր բիւրաւոր և անհունութեան մէջ տարածուած աստղերով, շքեղ դարունը իւր անուշաքոյր ծաղիկներով, սառնորակ աղբիւրներն ու վճիռ առուակները իրենց քաղցր խոխոջներով կենդանութիւն են ստանում և մեր սրտի հետ խօսում: Ամէն ինչ Աստուծոյ ներկայութեան յայտարարն է, ինչպէս և մեր սիրտն ու հոգին իւր լաւագոյն իղձերով և տենչերով: Արդեօք խաբուակի է այն: Ո՞րն է իրականը, ո՞վ կարող է ասել: Մի բան միայն հաստատ գիտենք, որ կեանքի արտաքին տպաւորութիւնը անցաւորութիւնն է և մահը, և մենք ճնշուած ենք մեքենական անողոր օրէնքների տակ, սակայն մեր հոգու մէջ Աստծուց ճառագայթած հաւատն ու սէրը այդ անցաւորութիւնը յաւիտենականութեան է փոխարկում, մահուան տաղնապը երջանկութեան և սքանչացման: Մեր գլխին այլ ևս ճակատագրական դամոկլեան սուրը չի կախուած, այլ երկնաւոր Հօր գթութեան և սիրոյ հովանին: Կեանքի փոթորիկների և ալէկոծութեան մէջ մեր նաւահանգիստն ունինք, տառապանքների համար մխիթարութեան մի աղբիւր:

Մեզ շրջապատող մթութեան և խաւարի մէջ Փրկչի անձնաւորութիւնն էլ նոյն ճշմարտութիւնն է քարոզում, հաւատոյ և սիրոյ լապտերը ձեռքին: Դէպի վեր, դէպի մեր աւագ եղբայրը և մեր Աստուծոյ որդին: Վտանգաւոր է ճանապարհը, անդունդների և ծերպերի վերայով, բայց դէպի վեր, որովհետև մեր Տէրն էլ այդ ճանապարհով է անցել, իսկ այդ ճանապարհը կեանքի և փրկութեան ճանապարհն է մահուան զօրութեան ճիրաններից: Նորա կեանքի բանալին ևս հաւատն ու սէրն էր դէպի Աստուած, որ օրհնութիւն դարձաւ մարդկութեան համար: Ի՞նչ կեանք կարող է փոխարինել նորան: Ա՛խ, եթէ մեր սրտերի մէջ ևս գէթ մի նշոյլ կաթէր այն հաւատոյ և սիրոյ ճառագայթներից, որ մեր Տիրոջ ուղին լուսաւորեց:

Գ. Վ. Յովսէփեան

Ու լուսինկան,
Որուն արծաթը հապտորակ՝
Կը սորսորի, այնքան բարակ.
Ծառերն իվար, այնքան բարակ.
Ու լուսինկան, որուն խաղաս
Կը խնկէ ծուխն իր պատարագ,
Ու լուսինկան, ձիւնէ համակ,
Իր գլուանքով լայն ու ճերմակ,
Ծործրակիդ շուրջ կը յօրինէ,
Ծործրակիդ շուրջ, համակ ձիւնէ,
Մեհեւանդ մը—մի մարբութիւն—
Մեհեւանդ մը, այնքան բարակ,

Այնքան փշուռն,
—Ձրնադ ինչպէս լուսապըտակ:

Լուսաւորի ցոլքեր թռչուն,

Այնքան բարակ,
Երգերուդ մէջ կիտէանան,
Երգերուդ մէջ՝ այնքան ճերմակ:

Այնքան ճերմակ, այնքան դունտա,

Աղու այնքան,
Որ Լուսթիւնն է յուսահատ,
Լըռութիւնը՝ անբիծ այնքան:

*

Ծառերուն տակ... հովն ալ հոն է,
Այնքան բարի, այնքան հանդարտ.

Երկինք մը ծուխ կը թռչնէ

Այնքան հանդարտ,

Որ, սահուելով ուղեշէներէն,

Երգերուդ հետ, ծըլէն ծըլէն,

Կը բարձրանայ՝

Դէպի լուսինն այնքան բարակ,

Այնքան բարակ...:

Փոխանակ իմ կարծիքս յայտնելու այս ոտանաւորի
մասին եւ բարեւոյտ համարում բերել այստեղ շնոր-
հալի երգիծաբան Երուանդ Թօլայեանի նմանողութիւնը,*)

*) Տես Մանգումի Էֆրեար, 1908, № 209:

«Դարուս ամէնէն գերահանճար ու տաղանդաւոր բանաստեղծն է Միսաք Մեծարենց. ասում է Թօլայեանը, անկէ վերջը կուգայ Վահրամ Թաթուլ. ուրիշ բացատրութիւնով... Միսաք Մեծարենցի եամախը, որուն «ձայնին մէջ լուսաւոր շարժումներ կը լսուին»:

Իրարմէ հասկնալի ոտանաւորներ կը գրէ այս տղան աւէն ատեն, որոնք գլուխ գործոցներ են «կապոյտ երազի եւ հոսաւէտ իմացականութեան»:

Խորհրդապաշտ բանաստեղծ մըն է անիկա, որուն քերթուածները կրնան իբր մէյմէկ հանելուկներ առաջարկուիլ Հանրագիտակի ընթերցողներուն, հանելուկը լուծողին ուղածնիդ առաջարկելով իբր նուէր, քանի որ վստահ էք թէ ոչ ոք պիտի կրնայ լուծել զանոնք:

Արդ, Վահրամ Թաթուլ անցած շաբթու ոտանաւոր մը գրած էր Լոյսի մէջ, ուրկէ

Բան մը չհասկցայ ես:

Ընթերցողներն ալ բան մը չհասկցան, գրաշարներն ալ ինք ալ բան մը չէր հասկցեր:

Խմբագրապետը չի գիտեր թէ պէտք է հասկցած ըլլայ:

Ամէն պարագայի մէջ Վ. Թաթուլի հետեւողութեամբ ես ալ գրեցի բան մը ուրկէ բան մը հասկցողներուն կը խոստանամ քսան տարուան Մանգումէ, յիսուն տարուան Լոյս, հարիւր հատ օսկի ժամացոյց, հեծանիւ մը, օթոմոպիլ մը, շոգեկառք մը, շոգեհաւ մը, և այլն:

«Ծառերուն տակ»

Վահրամ Թաթուլ բանաստեղծին

Ծառերուն տակ, հովն ալ հոն է,

Ա՛յնքան բարակ,

Երկինք տաննոց կը տալտղնէ,

Ա՛յնքան բարակ,

Եւ պամպալակ,

Ծովն ալ հոն է, կո՛ւկն ալ հոն է,

Ա՛յնքան բարակ,

Ե՛ղն ալ հոն է, Է՛շն ալ հոն,

Ա՛յնքան քուրիկ,

Ա՛յնքան քուրիկ իմ երազիս,

Մտկոյցիկ մը խորհուրդն ալ հոն

Ա՛յնքան բարակ, ու աւանակ

Կը սօղոսողի գիշերին մէջ,

Ա՛յնքան բարակ ու իշու ձագ,

Ու երկինքը որուն տրճաթը կապտորակ

Կը ճորճորի անքան բարակ,

Ա՛յնքան բարակ և պամպարակ,

Թուշիկ շուրջ, միլ Տիւլիսնէս,

Թուշիկ շուրջ համակ ձիւնէ,

Մեհեւանդ մը, — ու փխութիւն —

Մեհեւանդ մը, անքան հասակէկ,

Ա՛յնքան բարակ,

Զքնաղ՝ ինչպէս պամպարակ,

Ա՛յնքան բարակ, անքան հասակէկ, հաստուբարակ

Որ լուսթիւնն է ահա՛ որ

Անձնապան կ'ըլլայ,

Հասակէկ, ճերմակ,

Ու Պամպարակ,

Ծառերու տակ . . . մուկն ալ հոն է,

Ա՛յնքան բարի, անքան հասակէկ,

Կատուն որ ծուխ կը փախցնէ,

Ա՛յնքան բարակ

Որ կախուելով իր պոչիկէն

Երգերուդ հետ ծուկն ծուկն

Կը բարձրանայ.

Դէպի այերն անքան բարակ

Ու պամպարակ

Բան մը հասկըցա՞ք-

*

Կը ցաւիմ՝ որ ամէն մարդ չհասկցաւ այս քերթուածիս բարձր նշանակութիւնը:

Խորհրդապաշտ բանաստեղծութիւնն ըրի այսօր պարոններ:

Եւ որովհետեւ ապագան խորհրդապաշտ բանաստեղծութեանն է փափաքեցայ տակաւ վարժեցնել իմ ընթերցողներս անոր։

Եթէ դրածէս բան մը չհասկցաք, յանցանքը ոչ իմն է, ոչ ալ Վահրամ Թաթուլի։

Այս գրականութեան սկզբունքն է չհասկացուիլ։

Եւ երբ հասկցուի, կը դադրի ալ գրականութիւնը լլալէ։

Երկու ձեռքով ստորագրում եմ Թօլայեանի ասածի տակ

ՄԻՆԱՍ ԲԵՐԲԵՐԵԱՆ



ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՀՈՒՈՎՆԵՐԸ

Սեռական եւ սրական նուրբներ

Առնենք մի օրինակ: «Տիգրանի դրած նամակը» և «Տիգրանին դրած նամակը»: Այս կապակցութիւններից առաջինը ցոյց է տալիս, թէ նամակը ծագում, առաջ է գալիս Տիգրանից. իսկ երկրորդը նշանակում է, թէ նամակն ուղղւում է Տիգրանին: Ինչն է առաջ գալիս մի և նոյն հոլովական ձևի այս կրկին իմաստը: Անշուշտ ո՛չ Տիգրանին բառի և յօդ առնելուց կամ չառնելուց: «Մի փոքրիկ աշակերտի տուած դասն ի՞նչ պիտի լինի խօսքի մէջ, օրինակ, առակներսի բառն առանց յօդի նոյնպէս կրկին իմաստ ունի. աշակերտը կարող է հասկացուել և նա, որ դաս է տալիս. և նա, որին դաս են տալիս: Կընշանակէ իմաստի տարբերութեան հիմքը պէտք է տեսնել ոչ թէ և յօդի, այլ հենց իրեն 2-րդ հոլովի մէջ: Այս տարբերութիւնն առաջանում է նրանից, որ մի դէպքում 2-րդ հոլովը գործ է ածւում իւր սովորական նշանակութեամբ, իսկ միւս դէպքում նոյն հոլովն առնւում է իւրեւ բացառական:

Յայտնի է, աշխարհաբարում, ինչպէս և դրաբարում՝ կրաւորական բայերի սեռի խնդիրը, — ուրեմն այն խնդիրը, որից ծագում է գործողութիւնը, — փոխանակ բացառական հոլովի դրւում է նաև գործիական հոլովով և ձեռով (= ձեռն, ձեռամբ) բառով, կամ թէ կրաւորական բայը շուռ է գալիս ի վերջաւորած բայական ածականի, որ կրաւորական իմաստ ունի. իսկ սեռի խնդիրը դրւում է տրական հոլովով: Ինչպէս՝ Արմաւիրը շինուեցաւ Արմայիսից. Դաշտերը ծածկուեցան ձիւնից. Անձնասէրն ատւում է ամենքից — ատելու տեղ ատւում է՝ Արմաւիրը շինուեցաւ Արմայիսի ձեռով. Դաշտերը ծածկուեցան ձիւնով. Անձնասէրն ատելի է ամենքին (Պալ. եր. 218): Գրաբարում սակայն կրաւորական բայերի սեռի խնդիրը բացառականի փոխանակ տրական դրւում է և ուրիշ դէպքերում (Չալքի. եր. 446. ծան. Բաղրատունի, եր. 294), ինչպէս՝ Իմաստութիւն դիւրաւ գտանի խնդրողաց իւրոց: Ոչ ախանջաց լսին և ոչ մտաց իմանին. Աստուծոյ ճանաչին. և մեզ լռութեամբ պատուեցի: Աստուած ոչ միայն ձեռին չգնին:

Տրականի այս գործածութիւնը բացառականի իմաստով՝ զարմանալի չպիտի լինի, որովհետև մեր հնագոյն լեզուի մէջ,

ինչպէս երևում է, առանձին բացառական հոլով չի եղել. այլ սեռական—տրականի ձևը գործ է ածուել և բացառականի համար: Դրաբարում դեռ յոգնակի բացառականը միշտ, իսկ եզակի բացառականը այ, ոյ, ու, հոլովումները մէջ նման է սեռական—տրականին: Բացառականի է վերջաւորութիւնը նոր կազմութիւն է, առաջացած ըստ Մառի (Քերակ. եր. 63) աբուն ունեցող բառերի սեռական—տրականի վերջից. կարգէ ձևը ծագում է կարգայ ձևից ձայնաշրջութեամբ: Այսպէս նոր կազմուած է վերջաւորութիւնն անցել է ուրիշ բուն ունեցող անուններին և դերանուններին, մինչև վերջապէս աշխարհաբարում (սրեմտեան) ընդհանրացել է: Ինչպէս կարգ ունի կարգէ, դրա նմանութեամբ և բան ունի բանէ: Այսպէս և բ, դ, ց բունն ունեցող անունների սեռական—տրականից կազմուել են դատեր-է, աստեղ-է, սրբութե(ա)ն—է: Դերանունների համար այս վերջաւորութիւնն աւելանում է ոչ թէ սեռականի, այլ տրականի վրայ, իմում, իմէ. նմա=նման, նմանէ. այնմ=այնման, այնմանէ. ¹. Ինձէն, մեղէն, ձեղէն, քեղէն ևն: Յուցականների արականները սակայն՝ ամին, դմին, նմին, այսմ, այդմ, այնմ, այսմիկ, այդմիկ, այնմիկ, նայն իսկ առանց այս է վերջաւորութեան դեռ սովորաբար գործ են ածուում և իբրև բացառական:

Աշխարհաբարում տրականի այս գործածութեան համար հետազոտութիւն չկայ. բայց զարմանալի չի լինիլ, եթէ բացառականի իմաստով տրական դանենք և աշխարհաբարում: Մենք կարող ենք մի քանի օրինակ բերել. ես խաբուեցի նրա խօսքին (=խօսքից). «Փառիագելի էր որ առանց... հոտանքին մոլորուելոյ...» (Արարատ, 1908. ապրիլ, եր. 366). Ահու (=ահից) լեզուին կապուեց: Այսպէս աւելի չեղոր բայերով՝ Ամթու (=ամթից) կարմրել, կսկծու (=կսկծից) մեռնել, և ժողովրդական լեզուի մէջ նաև երևանայ եմ դալիս, Թաւրիզու եկաւ ևն: Այս գործածութիւնների համար Պալաոանեանը (եր. 219) գրում է, թէ «բացառականը տրականի ձև է ստանում», ² իսկ Այանեանը (եր. 111) կոչում է «տրականի ձև աննախդիւր

1 *Այսման, *այդման, *այնման ձևեր չկան մեր հին լեզուի մէջ, բայց պատահում են այսմն, այդմն, այնմն ձևերը, որոնք առաջինն երից են ծագում:

2 Պալաոանեանը սակայն երեւանայ եմ դալիս ձևի համար ուրիշ տեղ (եր. 114) գրում է. «Գաւառական բարբառներում բացառականը սեռականի պէս է լինում հին ձևով. երեւանայ, Աշտարակայ է դալիս այսինքն՝ երեւանից. Աշտարակից»:

բացառական», — աւելի ճիշտ կըլինէր ասել՝ բացառականի իմաստով արական:

Այոպէս ուրեմն մեր տրական հոլովը բացի իւր հիմնական նշանակութիւնից՝ ունի ոչ միայն հայցականի և ներգոյականի նշանակութիւն, որ տեսանք վերեւում, այլ և բացառականի 5: Այս իմաստով է ահա՛ դուում և մեր 2-րդ հոլովն իբրև վերադիր անցեալ դերբայի վրայ և ցոյց է առնիս, թէ մի բան ումնից, ինչից է ծագում, — Տիգրանի գրած նամակը = Տիգրանայ գրեալ նամակ = Տիգրանայ գրեալ նամակ:

Բագրատունին այս կիրառութեան մէջ անցեալ դերբայը կրաւորական է համարում. նա կրաւորական բայերի սեռի խնդրի համար գրում է, թէ «երբեմն փոխանակ բացառականի կամ գործիականի՝ դնի սեռական իբրև յատկացուցիչ, կամ տրական. մանաւանդ առ անցեալ դերբայս»: Նւ այս կանոնի տակ անխախտ բերում է օրինակներ և անցեալ դերբայով և գիմաւոր բայով, ինչպէ՛ս՝ «Ոչ գիտեմ զանձին գործեալ զանպատեհո. իմա՛ զգործեալ յանձնէ»: «Դոյն իսկ որբոյն Մաշտոցի էին ասացեալ ամենայնքն. իմա՛ ի նոյն իսկ որբոյն Մաշտոցէ». «Իմաստութիւն դիւրաւ դտանի խնդրողաց իւրոց», այսինքն ի խնդրողաց: — Այտնեանը սակայն գիմաւոր բայի և անցեալ դերբայի այս խնդրառութիւնը բաժանում է իրարուց գիմաւոր բայի հետ գրուածը նա տրական է համարում և բայը՝ կրաւորական (Չալ. եր. 446 ծան.). իսկ անցեալ դերբայի հետ գործածութեան համար գրում է. «երբեմն ո՛ր դերանունանմբ գիմաւոր բայ կամ բացառականով կրաւորական գրուելու տեղ (որ գրաբարի սովորականն է,) անուն բային սեռական և բայը ներգործական անցեալ կը գրուի՝ գլխաւոր դոյականին ածական եղած»: Նւ օրինակ բերում է. «Ձմարդկան հաստատեալ կտակ ոչ ոք կարէ անարգել (խոխանակ՝ զկտակ հաստատեալ ի մարդկանէ)»: Բայց վերջն աւելացնում է. «Ասոր նման՝ նաև չէզոք և կրաւորական անցեալներ երբեմն բացառականի տեղ սեռական առած կը գտնուի... Այսպիսի բանից՝ տխմարաց մտաց կարկատելոց՝ չէր պարտ ամենեւին բնաւ առնել պատասխանի» (Չալ. 437 հո):

Այտնեանն աւելի ճիշտ է քմբռնում, որ անցեալ դերբայի հետ գրուածը որոշ կերպով սեռական է համարում. որովհետեւ,

5. Տրականի այս իմաստը տարօրինակ բան չէ, նոյնը պատահում է եւ ուրիշ լեզուների մէջ: Օրինակ. երբեմն ինչ որ մենք բացառականով ենք ասում, նոյնը գերմաներէնն արտայայտում է տրականով: Einem Etwas abnehmen = Մէկից մի բան առնել. Einem Etwas stehlen, rauben = Մէկից մի բան զողանալ, խլել:

ինչպէս կը տեսնենք, այս դէպքում անցեալ դերբայը գոյական է, ուստի և նրա վրայ դրուածը սեռական վերադիր է: Բայց մեզ համար անհատականալի է, թէ ինչու նա անցեալ դերբայը երբեմն ներդործական է համարում և երբեմն՝ կրաւորական: Մարդկան հաստատեալ կտակ,—կտակ՝ մարդկան հաստատեալ և Տխմարաց մտաց կարկատեալ բան,—Բան տխմարաց մտաց կարկատեալ,—այս երկուսը քերականօրէն բոլորովին նոյն կազմութիւնն ունին և նշանակում են՝ կտակ հաստատեալ ի մարդկանէ. Բան կարկատեալ ի տխմարաց մտաց: Եթէ երկրորդի մէջ կարկատեալ դերբայը կրաւորական է դնում Այանեանը, կրաւորական է անհրաժեշտօրէն և առաջինի մէջ հաստատեալ դերբայը: Բազրատունին ուրեմն աւելի ճիշտ է ըմբռնում՝ այդպիսի ձևերի մէջ անցեալ դերբայը միշտ կրաւորական դնելով: —Գառնանք այժմ աշխարհաբարին:

Աշխարհաբարի մէջ, ինչպէս սովորելի էր, նոյն ձևն է, միայն զբարարի եալ վերջաւորութեամբ անցեալ դերբայի տեղ ւած վերջաւորութեամբ դերբայ դրուած. Մարդկան հաստատեալ կտակ. Աստուծոյ արարեալ սքանչելիքն=Մարդկանց հաստատած կտակ. Աստուծու արած սքանչելիքը: Եթէ գրաբարում հաստատեալ, արարեալ կրաւորական են, աշխարհաբարում ևս հաստատած, արած ոչ թէ ներդործական իմաստով են, այլ կրաւորական:

Հարկ չկայ անշուշտ հաստատելու, որ աշխարհաբարում շատ յաճախ անցեալ դերբայը ներդործական ձևով, այսինքն ւած և ոչ ոււած վերջաւորութեամբ, գործ է տծում կրաւորական իմաստով: Երբ ասում ենք՝ Բարակ աղացած ալիւր. կարմիր ներկած գոգնոց. Մորթած հաւերը. Վառած ճրագ (Պռ. Աղ. Երկ. Եր. 30. 32). Պատից կտխած վերարկու ևլն.—աղացած, ներկած, մորթած, կտխած ներդործական իմաստ չունին, այլ կրաւորական: Նոյն կրաւորական իմաստը դրանք պահում են հարկաւ և այն Ժամանակ, երբ ասում ենք՝ Վարդանի մորթած հաւերը, Տիգրանի վառած ճրագը: Վառած ճրագը և Տիգրանի վառած ճրագը կապակցութիւնների տարբերութիւնը ոչ թէ քերականական է, այլ այն՝ որ առաջին դէպքում գործողութեան սկզբնապատճառն անյայտ է մնում, իսկ երկրորդ դէպքում որոշում է Տիգրանի լրացումով, որ ունի բացառական սեռի խնդրի իմաստ. Տիգրանի վառած ճրագը,=Տիգրանի ձեռով վառած ճրագը կամ Տիգրանից վառած ճրագը: Այս երեք ձևերը իմաստով բոլորովին նոյն են: Վերջին երկուսը, Տիգրանի ձեռով վառած, Տիգրանից վառած, ունին կրաւորական բա-

յերի սեռի խնդրի սովորական կազմութիւնը, որ տեսանք վերառում: Առաջին ձևի մէջ ևս՝ Տիգրանի վառած ճրագը՝ վառած բառը դարձեալ կրօնորական իմաստ ունի, իսկ Տիգրանի դրա սեռի խնդիրն է մի ուրիշ ձևով արտայայտած փոխանակ սովորական Տիգրանի ձեռով կամ Տիգրանից ձեերի:

Թէ այդ երեք ձևերն իմաստով նոյն են, այդ մասին խօսելու կարիք չկայ: Միայն այս պէտք է ասել, որ այդ ձևերից առաջինը շատ սովորական գործածականն է, երկրորդ ձևը համեմատաբար պակաս է գործածւում, իսկ երրորդ ձևը, «Տիգրանից վառած ճրագը» շատ քիչ է պատահում: Բայց թէ այս վերջին ձևն էլ կայ մեր լեզուի մէջ, ահա՛ մի երկու օրինակ Պօռչեանի «Սկիզբն Երկանցից»: «Աղախինները դառը ծխից պատճառւած... արտառնէր սրբելով» (եր. 31): «Ռուբիկո, ամացիից պատճառւած գլխի բացուածքն այժմ ծածկուել է» (եր. 165): «Բարձրագոյն իշխանութիւնից օրինաւոր հրամանագրով տնօրէնած տնօրէն» (եր. 319): Այսպէս և եթէ կարելի է ասել՝ Երկնքից իրան պարզեալ է իրաւունք (եր. 234) և շատ նմանները, նոյնպէս կարելի է ասել՝ Երկնքից իրան պարզեալ է իրաւունքը ևլն: Այս բացառական հոլովներն աղատ կերպով կարելի է 2-րդ հոլովական ձևին վերածել առանց իմաստի փոփոխութեան՝ Ծիւի պատճառւած արտասունքը. Աքացիի պատճառւած բացուածքը. Բարձրագոյն իշխանութեան տնօրէնած տնօրէնը ևլն:

Գրաբարում, ինչպէս տեսանք (փետր. 191), ածականները երբ դոյականաբար են գործ ածւում, սովորական տրական խնդրի փոխանակ առնում են սեռական կամ ստացական դերանուն և վերջինս իբրեւ մի ածական համաձայնում է իւր խնդրառուին: Նոյն ձևով դոյականաբար բանում է և անցեալ դերբայը, որի հետ բացառականի իմաստով գործածուած տրական խնդիրն ևս դառնում է սեռական կամ ստացական ածական, որ և համաձայնում է դերբային (փետր. 187 հոտ.). ինչպէս՝ Զե՛ ետ ի ձեռս զիւր պատրեալսն (=զպատրեալսն յիւրմէ՛ իր խաբածները). Հանցուք զնա յաչաց իւրոց խաբեցելոց (=խաբեցելոց յիւրմէ՛ իր խաբածների). Զքո լիւրկեալ Ժողովուրդսն (=լիւրկեալ ի քէն՝ քո լիւրկած): -- Աշխարհաբարում ևս, ինչպէս տեսանք, այս կիրառութեան մէջ անցեալ դերբայը դոյականաբար է բանում, ուստի և վրան դրուած 2-րդ հոլովն իբրեւ դոյականի վերագրել՝ Ե յօդը չի առնում և ցուցականների առանց ցի որա, դրա, նրա ձևերն են գործ ածւում: Բացի այդ, ինչպէս ուրիշ գէպքերում, նոյնպէս այստեղ մնում են գրաբարի ստացական ածականները՝ իմ, քո, իւր, մեր, ձեր:

Այսպէս ուրեմն Տիգրանի գրած նամակը կապակցութեան մէջ զրաժ բառը նոյնպէս գոյական է, ինչպէս Տիգրանի գրածը կապակցութեան մէջ: Իսկ թէ անցեալ դերբայն իսկապէս գոյական է, այդ մենք տեսել ենք և պարզ կարելի է տեսնել դարձեալ նրանից, որ մինչդեռ որոշ վերադիր ունեցած ժամանակ առնում է ս, դ, և յօդերը՝ Այս իմ գրածն է, իմ գրածս է, Տիգրանի գրածն է,—անորոշ վերադիրները հետ առանց յօդի է մնում, ինչպէս ամեն ուրիշ անուն, բայց դարձեալ իբրեւ գոյական՝ Այս մի աշակերտի գրած է, անփորձ մարդու գրած է: Բայց այդ՝ գրաբարում այս կապակցութեան բառերը դեռ չունին դերբայական իմաստ և լոկ հասարակ անուն են, ինչպէս՝ հատած, կոտորած ևլն. բայց հետզհետէ այս ամ ածականն ընդհանրացել է բոլոր բայերի վրայ և ստացել է անցեալ դերբայի և ածականի՝ նշանակութիւն, ինչպէս այժմ աշխարհաբարում է. միայն որոշ դէպքերում դեռ պահում է իւր գոյական իմաստը: Գրաբարի անցեալ դերբայն ևս իսկապէս ծագում է հին գոյականից, որ ածականաբար է դործածւում¹:

Նկրահացութիւնը պարզ է: Տիգրանի գրած նամակը և Տիգրանին գրած նամակը կապակցութիւնների իմաստի խոշոր տարբերութիւնը ոչ և յօդից է առաջանում և ոչ գրած գերբայի սեռից, որ երկու դէպքում էլ կրաւորական իմաստ ունի. այլ նրանից, որ երկրորդ կապակցութեան մէջ 2-րդ հոլովական ձևը գործ է ածւում տրականի սովորական նշանակութեամբ, իսկ առաջինի մէջ նոյն այդ ձևը բացառականի նշանակութիւն ունի և իբրեւ կրաւորական բայերի սեռի խնդիր ցոյց է տալիս գործողութեան ծագումը: Բայց այդ՝ Տիգրանի գրածը, Տիգրանի գրած նամակը կապակցութիւնների մէջ զրաժ բառը գործ է ածւում իբրեւ մի գոյական և Տիգրանի նրա վերադիրն է. մինչդեռ Տիգրանին գրածը, Տիգրանին գրած նամակը կապակցութիւնների մէջ Տիգրանին խնդիր չէ մի գոյականի, այլ զրաժ դերբայի բայիմաստին, իբրեւ՝ ինչ որ Տիգրանին է գրած, գրուած:

Այսպէս ուրեմն այն սահմանումը թէ սեռականը ցոյց է տալիս թէ մէկ առարկայ ինչից է առաջ գալիս, սերւում է,—յարմար է ամենից առաջ այն սեռականին, որ գրւում է անցեալ դերբայի վրայ՝ Տիգրանի գրածը, նկարածը ևլն, որ առնւում է կրաւորական իմաստով իբրեւ՝ ինչ որ Տիգրանից է գրուած, նկարուած: Բայց մի անգամ որ Տիգրանի գրած նամակը կապակցութեան մէջ Տիգրանի լրացումը ցոյց է տալիս

1, *Stu Grammaire comparée de l'arménien classique* par A. Meillet, Vienne, 1905 եր. 68. 97:

այն անձը կամ պատճառը, սկզբնապատճառը (der Urheber, die Ursache), որից ծագում է ոչ միայն գրելու գործողութիւնը, այլ և այդ գործողութեան արդիւնք նամակը (afficiertes Objekt), — նոյն իմաստը պահում է անշուշտ և երբ առանց գրած բառի տեսնք՝ Տիգրանի նամակը, որ կարող է հասկացուել՝ Տիգրանի գրած նամակը: Այսպէս և ամեն զէպըում, երբ սեռականի և իւր անուան մէջ հասկացւում է մի այդպիսի անցեալ դերբայ: Օրինակ՝ երբ ասում ենք՝ Քաղաւորի պատուէրը. Տեսչի կարգադրութիւնը ևլն, մենք սեռականն ըմբռնում ենք իբրև այն անձը, որին վերաբերում է մի բան, բայց ոչ իբրև ստացուածք, այլ իբրև մի արդիւնք, որ առաջ է դալիս նրա մի գործողութիւնից. ինչպէս թէ սեռականի և իւր խնդրառուի մէջ զգալուած լինէր մի անցեալ դերբայ՝ Քաղաւորի տուած պատուէրը. Տեսչի արած կարգադրութիւնը: Եւ մենք միշտ էլ աւելացնում ենք մի դերբայ, երբ ուզում ենք սեռականի և իւր խնդրառու անուան յարաբերութիւնը պարզ և որոշ յայտնել. որովհետև առանց այդպիսի մի դերբայի՝ յաճախ երկդիմի է լինում սեռականի և իւր անուան յարաբերութիւնը. սեռականը կարող է և ստացական, վերաբերութեան սեռական հասկացուել և սկզբնապատճառի սեռական: Ուրիշ խօսքով՝ սեռականն ըստ ինքեան ցոյց է տալիս միայն մի առարկայ, որին վերաբերում է ընդհանուր կերպով մի ուրիշ առարկայ. իսկ այդ վերաբերութեան տեսակը պարզւում է յաճախ միայն այն ժամանակ, երբ մի ուրիշ բառով որոշում ենք, թէ սեռականն արդեօք ստացական իմաստով պիտի հասկանալ, թէ՛ վերաբերութեան, թէ՛ ներգոյականի, թէ՛ սկզբնապատճառի ևլն: Օրինակ՝ երբ ասում ենք՝ Խորենացու պատմութիւնը, մենք պատմութիւնն ընդհանուր կերպով միայն վերադրում ենք Խորենացուն. բայց Խորենացու պատմութիւն կարող է հասկացուել և Խորենացու վերաբերեալ պատմութիւն. ինչպէս ասում ենք Հայոց պատմութիւն, նոյնպէս և Խորենացու գրած պատմութիւն: Առաջին զէպըում ուրեմն 2-րդ հոլովական ձևը պահում է արականի սովորական իմաստը, իսկ երկրորդ զէպըում առնւում է բացառականի իմաստով. բայց այս տարբեր իմաստներով գործածուելու համար Խորենացու ձևը չի դադարում ի հարկէ մի և նոյն հոլովական ձևը մնալուց, ինչպէս և Խորենացու պատմութիւն կապակցութեան մէջ, որ իմաստով էլ որ առնուի, Խորենացու ձևը միշտ մի և նոյն հոլովական ձևն է:

Թէ ինչ դերբայ զգալուած է համարւում և կտրելի է աւելացնել սեռականի և իւր խնդրառուի մէջ, այդ արդէն խօսքը

մաքեց պիտի հասկացուի: Սկզբնապատճառի սեռականի համար միայն պիտի նկատել, որ սովորաբար այն բայի անցեալ դերբայն է աւելանում, որի հետ սեռական խնդիրն իբրև ենթակայ՝ խօսք է կազմում. ինչպէս օրինակ՝ ասում ենք՝ Տեսուչը կարգադրութիւն արեց. Տեսչի արած կարգադրութիւնը. Տեսչի կարգադրութիւնը: Տիգրանը պարգև տուաւ. Տիգրանի տուած պարգևը. Տիգրանի պարգևը: Տիգրանը պարգև ստացաւ. Տիգրանի ստացած պարգևը. Տիգրանի պարգևը: Այսպէս և Վարդանի արած առաջարկութիւնը=Վարդանի առաջարկութիւնը. Տիգրանի կատարած կեղծիքները=Տիգրանի կեղծիքները. Տիգրանի առաջարկած բանաձևը=Տիգրանի բանաձևը. Արքեպիսկոպոս տուած վնասները=Արքեպիսկոպոս վնասները. Մուրացանի յօրինած երկերը=Մուրացանի երկերը. Տիգրանի տուած երգը=Տիգրանի երգը ևլն: Այս շարքն ի հարկէ շատ երկար է:

Կայ նոյն կազմութեան մի ուրիշ շարք ևս. Քամու բանեցրած ջաղաց=Քամու ջաղաց. Լրագրի հաղորդած լուր=Լրագրի լուր ևլն: Այս կարգի սեռականներն ևս հասկացում են իբրև սկզբնապատճառի սեռական, որից ծագում են բանեցնելու, հաղորդելու գործողութիւնը. բայց ջաղաց, լուր ոչ թէ հետեանք, արդիւնք են այդ գործողութեան, այլ մի առարկայ, որ ազգւում, փոփոխւում է սեռականի գործողութիւնից (afficiertes Objekt):

Առնենք մի քանի օրինակ ևս: Ժողովրդի կրած նեղութիւնները=Ժողովրդի նեղութիւնները. Տիգրանի կրած պարտութիւնը=Տիգրանի պարտութիւնը ևլն: Քերականական կազմութեամբ սրանք չեն տարբերւում վերևի շարքերում դրած օրինակներից. բայց արամբանօրէն բոլորովին տարբեր են: Տեսչի (արած) կարգադրութիւնը կապակցութեան մէջ տեսչից ծագում է թէ անեղութիւնները և թէ սրա հետեանք կարգադրութիւն. և անողը և կարգադրողը տեսուչն է. բայց ժողովրդի (կրած) նեղութիւնները կապակցութեան մէջ ժողովրդից ծագում է միայն կրելու գործողութիւնը, կրողը ժողովուրդն է. իսկ նեղութիւնները ժողովրդից չեն ծագում, այլ ժողովուրդը միայն կրում է իւր վրայ այդ նեղութիւնները, որ ուրիշից են ծագում: Ժողովուրդը ոչ թէ նեղողն է, այլ նեղուողը: Իմաստի այս խոշոր տարբերութիւնը սակայն առաջանում է ոչ տարբեր բերականական կազմութիւնից որ չկայ, այլ մի միայն կրեմ բայի իմաստից, որի ենթական թէպէտ կրելու գործողութեան սկզբնապատճառն է, բայց որովհետև կրողն է, ուստի ունի ոչ

թէ ներգործական, այլ կրաւորական ենթակայի իմաստ: Յաճախ ի հարկէ այս իմաստը երկդէմի է մնում, օրինակ. Վարդանի վնասը կապակցութիւնը եթէ հասկանանք՝ Վարդանի տուած (պատճառած) վնաս, վնասողը Վարդանն է և վնասը ծագում է Վարդանից. իսկ եթէ հասկանանք՝ Վարդանի կրած (ստացած) վնաս, այն ժամանակ Վարդանը վնասուողն է. վնասը Վարդանից չի ծագում, այլ ուրիշից: Մի և նոյն ձևն ուրեմն կարող է և ներգործական և կրաւորական ենթակայի իմաստ ունենալ:

Քերականական կազմութեամբ վերևի օրինակներէց չեն տարբերում և հետեւեալները. Տիգրանի ունեցած զիւրքը=Տիգրանի գիւրքը. Վարդանի ունեցած (ստացած) բաժինը=Վարդանի բաժինը: Դրանք ձևով սկզբնապատճառի սեռական են. ունենալու, ստանալու սկզբնապատճառը Տիգրանը, Վարդանն են. բայց սրովհետեւ ունիմ (ստանամ) բայը ստացականութեան դաղափար է ցոյց տալիս ուստի և այս սեռականներն իմաստով նոյնանում են ստացական սեռականի հետ. Տիգրանի զիւրքը=Տիգրանի ունեցած զիւրքը=Տիգրանին պատկանած զիւրքը:

Ունենք երկու կիրառութիւն ևս:—Հայոց լեզուի մէջ ամբողջի մաս ցոյց տալու համար, ինչպէս սպասելի էր, սովորաբար գործ է ածուում բացառական հոլովը. բայց նոյն իմաստով բանում է և սեռականը. նրանցից մէկը, նրանց մէկը. ծառաներից տարեքաւորը, ծառաների տարեքաւորը. աշակերտներից ջանառէրը, աշակերտների ջանասէրը. ուխտաւորներից որը... , ուխտաւորների որը... Հոնալանքցիներից երեքը, Հանալանքցոց երեքը. մարդու մէկը ևլն: Այս կիրառութեան մէջ ևս ուրեմն 2-րդ հոլովը բացառականի իմաստ ունի: Նոյն իմաստով բացառականի փոխանակ սեռական է գրւում, երբ պէտք է ցոյց տալ այն նիւթը որից շինուած կամ կազմուած է մի բան. ինչպէս՝ փայտի կամուրջ, փայտէ կամուրջ. դարու հաց, դարէ հաց. կաւի տման, կաւէ տման. մահուդի չուխայ, մահուգէ չուխայ:

Մենք տեսանք սեռականի գլխաւոր կիրառութիւնները, որոնց մէջ սեռականը ցոյց է տալիս, թէ մի առարկայ ում է


1. Այս իմաստով սովորաբար գործ է ածուում և վերջաւորութեամբ բացառականը. ից վերջաւորութիւնը նոր կազմութիւն լինելով դեռ չի ընդհանրացած այս կիրառութեան համար. Փայտէ, կարէ, կաւէ եւլն ձևերը սակայն կարող են եւ սոսկ ածական համարուել. մենք բացառական ենք ըմբռնում, ինչպէս եւ փայտի, կաւի, մահուդի՝ սեռական եւ ոչ ածական:

պատկանում, լերաբերում կամ ինչից է առաջ գալիս: Մեր բացատրութիւններով ի հարկէ չեն ստառւում սեռական նշանակութիւնները. բայց և մեր նպատակից դուրս էր մի առ մի ուսումնասիրել մեր այս հոլովի կերպութիւնները, և կամ ցոյց տալ թէ մեր սեռականը տրականից է ծագում: Անշուշտ ոչ. մեր սեռականի դործածութիւնները ամենամեծ մասամբ ժառանգութիւն են հնդեւրոպական սեռականից, որով դուրս էր դուրս գալիս ըրացումը: Մենք միայն այն էինք ուղղում ցոյց տալ, որ մեր սեռական և տրական հոլովները ձեռով նոյնացած լինելով՝ մենք մեր այս երկու հոլովն այժմ նշանակութեամբ ևս յաճախ իրարուց տարբեր չենք մտածում և ըմբռնում ենք իբրև մի բնօրինակ հոլով, — և ապա այն թէ լիովնակ այդ ընդհանուր հոլովը մի նոր անուշով կոչելու, աւելի յարմար է տրական առանձնել, քան որ սեռականի գլխաւոր նշանակութիւններն ունի և տրականը, կամ թէ տրականի նշանակութիւններով կարելի է բացատրել նաև սեռականի դործածութիւնները: Ինչպէս որ գործիականը և միւս հոլովները ինչ իմաստով որ գործ են ածուծ բայերի հետ, նոյն իմաստը, երբեմն լիովնակ տրական մտքով, պահում են և իբրև դոյականի վերադիր գործածուած ժամանակ, — այսպէս և տրականի հոլովական ձեռ ինչ իմաստով որ բռնում է բայերի հետ նոյն իմաստն ունի և դոյականն վրայ իբրև սեռական վերադիր գործածուած ժամանակ: Այսպէս՝

1. Տրականի հիմնական նշանակութեամբ բացատրւում են, ինչպէս տեսանք, ա) Ստացական, մասամբ և ածական սեռականները, որ ցոյց են տալիս պատկանելութիւն, լերաբերութիւն, յատկացում և չն. բ) Առարկայի սեռականները իբրև խնդիր բայական անուան (լիառքի ձգտում, ճաշի հրաւեր):

2. Տրականի ներդոյական նշանակութեամբ բացատրւում են տեղի և ժամանակի իմաստով առնուած սեռականները (ձեռքի գաւազանը):

3. Տրականի բացառական իմաստով բացատրւում են՝ ա) Սկզբնապատճառի սեռականը (Տիգրանի գրած նամակը, Տեսչի կարգադրութիւնը). բ) Մասնական սեռականը, որ ցոյց է տալիս ամբողջի մի մասը (ուստաւորների շատը). գ) Նիւթի սեռականը, որ ցոյց է տալիս թէ ինչից է շինուած մի բան:



* * *

Սիրուն հաւքեր շարան—շարան
Մեր երկնքով եկան, թռան,
Եւ մնացի արուն լացի,
Սիրտս, հոգիս առան տարան:

Այսքը եկաւ քուլայ—քուլայ,
Մթնած երկինք գլխիս կուլայ.
Եւ էլ սգուոր ու վիրաւոր,
Ա՛խ, իմ սիրտն էլ թող լայ, թող լայ...

ՅԱՐՈՒՔԻՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ.

1908 թ. 16 Ապրիլի



ԻՆՏԵԼԼԻԳԵՆՑԻԱ ԵՆ ԿՐԾՆ*

(Ստուում ուսանողների և ուսանողուհիների
ժողովում.)

Ձեզանից մի քանիսին իմ գիտական և գրական աշխատանք-
ներից ևս յայտնի է կրածս հոգեկան տանջանքը, որի հետևանքը
այն եղաւ, որ ևս Ստուում չճանաչող աշխարհահայեցողութեան
յենաբան կազմող որոշեալ գիտական և փիլիսոփայական նախա-
դրեալները քննութեան առայ խելքով և արտով, գիտութեան
միջոցով և կեանքով, քայլ առ քայլ նահանջելով՝ գիտակցաբար
վերադարձայ այն հատափն, որը տանում է դէպի խաչեցեալ
Ստուումը և Նորա Աւետարանը—մարդու և նորա կեանքի համար
լիառատ, բարձրագոյն և խորագոյն ճշմարտութիւնը:

Դէպի աւետարանական վարդապետութիւն տանող ճանա-
պարհը և նորա ըմբռնման եղանակը պատմական և անհատական
ստեակեանքից կարող է շատ բազմատեսակ լինել: Մեր դարի
զաւակները առանձնապէս մտաւոր և բարոյական շատ արգելքներ
պէտք է յաղթահարեն, որպէս զի ըմբռնեն այն՝ ինչ որ որպէս
չնոր՝ յայտնւում է մանկական—պարզ, բայց մաքուր սրտին և
գուցէ աւելի լիւթեթեւաբար և սրբութեամբ, քան մեզ:

Ինչպէս մտածում է մեր ժամանակի կիսակիրթ տմբոխը,
քրիստոնէութիւնը մենակ գիտնականների և փիլիսոփաների կամ
կանանց, երկխաների և աղէտ խուժանի կրօն չէ: Քրիստոնէութեան
հանրամարդկային և համաժողովրդական լինելու ճշմարիտ աղա-
ցոյցը այն է, որ նա ըստ չափու հաւատոյ, անձնական արիաքան գործ-
նէութեան, և բարի ձգտման համահաւասար կերպով մատչելի է
և խորիմաստ փիլիսոփային և երկրային, Օգոստինոսին և հովուին,
Կանտին կամ Գլադստոնին և ուրա գիւղացուն: Արտաքին մարդու
կեղեր, արտաքին գործնէութեան և ունայնութեան ներքոյ իւրա-
քանչիւրը պահպանում իւր մանկութեան, սկզբնական աստուա-
ծային սրբութեան մի մասնիկ, որի համար ողբում է Չերտովի
հերոսուհին, նորա վերջին հեղինահութեան մէջ, ասելով «Ո՛հ իմ
մանկութիւն, ո՛հ իմ սրբութիւն»: Այս զգացումը խորն է և
ստեղծում է հոգու խորճաւոր արմատներից, ուստի և բոլոր
փորձառական և պատմական տարբեր սահմանաւորումներից
զօրեղ է, իբրև կրօնական փորձառութիւն՝ այդ զգացումը իւրա-
քանչիւրը ունեցել է և այդպիսի մէկին նորա մասին չպէտք է

* „Русская Мысль“ Мартъ 1908 г. Сергѣй Булгаковъ

պատմել, բայց միևնոյն ժամանակ կրօնական կեանքի բացակայութեան չնորհիւ՝ մեր ինտելիգենցիայի համար այդ գրացումը օտար, անհասկանալի և վերացական է երևում:

Ո՛վ որ մեր օրերում ուես ինտելիգենցիայի հետ խօսել կիրորձի ոչ թէ ներկայիս, գլխաւորապէս, քաղաքական խնդիրների մասին, այլ կեանքի, բնութանուր նպատակների և նորա կրօնական իմաստի և ո՞վ որ այդ իմաստը, ինձ նման, տեսնում է միայն քրիստոնէական կրօնի մէջ, նա արդէն իւր գէժը կունենայ յանձին ժամանակի ոգու մի, թէ և անգէժ, բայց զօրեղ և վերին աստիճանի իրական հակառակորդ: Անկրօն մթնոլորդը բնութանրապէս յատուկ է նոր ժամանակին, առանձնապէս ժէ-ի վերջին և ժԹ դարին:

Այս դարաշրջանը բնորոշելու ժամանակ գժուար է ևւրողական քաղաքակրթութիւն ունեցող պանազան երկիրների մէջ սարբերութիւն չդնել. չի կարելի չնկատել, օրինակ, անգլո—սաքսոնական կրօնական ոգին, որը պահպանուել է մինչև մեր օրերը և որը անգլո—սաքսերը տարածել են ովկիանոսի միւս կողմը, նոր-Ջեկանդիա և Միացեալ նահանգները: Դեռ եւ վերջին ժամանակները Անգլիան ունէր կրօնական զօրեղ շարժում, որը յայտնի էր Ուէյլսի վերածնութիւն անունով: Ուէյլսի ածխահանքերի բանուորների մէջ ծնունդ առնելու պատճառով, որոնք ամենազօրեղ բանուորական կազմակերպութիւններից մէկն էին կազմում: Լրագիրները հազորդում էին ստորերկրեայ օրհներգութիւնների և աստուածպաշտութեան մասին, որոնք տկամայ յիշեցնում էին Միտա կառավարողի ստորերկրեայ օրհներգութեան վերաբերեալ ասած տագնաւորից խօսքերը. «Եւ այն ժամանակ մենք, ստորերկրեայ բնակիչներս, երկրի սրտից ողբերգական օրհներգ կերպենք Աստուծուն, Որի մօտ է ուրախութիւնը. «Կեցցե՛ Աստուած Եւ Նորա ուրախութիւնը»:

Անգլո—սաքսոնական կրօնականութեան մէջ ամենանշանաւոր երեւոյթը այն է, որ սա միայն հասարակ ժողովրդին չէ պատկանում, որովհետեւ է ուսական կրօնական ջերմեւանդութիւնը և անգլիական ինտելիգենցիան կրօնական ոգին որպէս «նախապաշարումներ» չի ծագում: Պրոֆ. Շոյլցէ-Գեվերնիցը ասում է իւր նորագոյն երկասիրութեան մէջ*. «Մինչև այսօր էլ կրօնը անգլո—սաքս քաղաքակրթութեան երակն է: Արտաքին երևոյթները այս բանը հաստատում են իւրաքանչիւր քայլափոխին: Մինչև այսօր էլ կիւրակի օրը իւր կնիքը պահպանում է ամբողջ երկրի վերայ: Հոգեւորականութեան հետ հանդէս են գալիս իբրև քարոզիչներ

*) «Քրիստոնէական իմպերիալիզմ եւ անգլիական ազատ վաճառականութիւնը Ի. դարու սկզբին» Լայպցիկ 1906 թ.

աշխարհականներ, բժիշկներ, իրաւաբաններ, բանուորներ լաւաշ-
նորդներ և այս ոչ միայն աղօթալաւարներում, այլ առաւելապէս բաց
երկրի տակ. օրինակ մեծ քաղաքների զբօսատեղերում, ուր ամ-
բիոնի տեղ ծառայում են կառքեր կամ մայրերի անկիւնաքարեր:
Մի կողմը դնում է քարոզչի Ս. Գրքի խօսքերով ծածկուած
վագոնը, որը և պատասպարան է սալիս քարոզիչներին. մի այլ
տեղ ղթութեան քոյրերը մտնում են օղետները և ոճրագործ-
ների որջերը՝ հանդէս դալով որպէս նուաճող քրիստոնէու-
թեան պաշտպաններ: Ազգի առաջնորդող գլուխները և հոգեոր
առաջնորդները մեծ կամ փոքր չափով հաւանում են աղագային այդ
կրօնական ոգին: Անգլիայի պետական նշանաւոր գործիչներ Դիդ-
րայէլի (1807 Ռիպոնի) և Գլադստոն խանդավառ քրիստոնեաներ
էին և ամենայն օր կարդում էին Ս. Գրքը: Գլադստոն, որի գրչին է
պատկանում «Ս. Գրքի անստատի ժայռ» անունով հեղինակու-
թիւնը, սիրում էր քարոզել Հաւարանում և ընդհանրապէս ար-
տայայտում էր այսպիսի համոզմունք. (կնոջը գրած նամակների
մէջ). «Ես համոզուած եմ, որ մարդկութեան երջանկութիւնը այժմ
քաղաքականութիւնից կախուած է. իսկական կուրբ տեղի է ունե-
նում մտքի աշխարհում, ուր և կատարւում է մահաբեր յարձակումը
մարդկութեան ամենամեծ գանձի— հաւատի վերայ, որ տանում է
դէպի Աստուած և Քրիստոսի Աւետարանը»: Անգլիայի նախա-
րարապետ Բայլֆորը նշնապէս ի պաշտպանութիւն քրիստո-
նէական վարդապետութեան գրեց «Հիմունք հաւատոյ»* վերնա-
դրով գիրքը: Անշուշտ նոր ժամանակի կործանիչ շարժումից Անգլիան
ևս ազատ չի մնացել: Կրօնի հակառակ արուած ոչ պակաս կատաղի
և զօրեղագոյն պատճառաբանութիւնները անգլիական մտքի դարբ-
նոցում են դարբնուել: Հօբսը և Իւմը, Բենտամը և որոշ տեսա-
կէտից էլ Դարվինը և Բէկոնը ցոյց տուին իրենց աղեկցութիւնը,

*) Բնագիրը տպուել է առաջին անգամ 1893 թուին. մի քանի
ամսուայ ընթացքում հինգ տպագրութիւն ունեցաւ եւ դարձաւ կրթուած
— տմոտկութեան սիրելի ժողովրդական գրքերից մէկը: Մենք ծանօթ ենք
այդ գրքին գերմանական Թարգմանութեամբ. հեղինակը քննադատում եւ
հարուածում է նատուրալիզմը, բողոքում է փորձական գիտութեան եւ
բանականութեան ծայրայեղ բարձր գնահատութեան դէմ. ջրում է դիտու-
թեան անունով խօսողների այն միակողմանի հայեացքը, թէ ինչ գետու-
թիւնն ապացուցանել չի կարող, անընդունելի է եւ կասկածելի: Նորա-
գիրքը մի տեսակ ներածութիւն է աստուածաբանութեան. Բայլֆորի
նպատակն է իւր գրքով կասկածող եւ որոնող հոգիներին դէպի քրիստո-
նէական հաւատն առաջնորդել:

առական, կարելի է ասել, աւելի մեծ չափով մայր, ցամաքի վերայ, քան իրենց հայրենիքում։ Բայց եւրոպական ոչ մի երկրում ինտելլիգենցիան կրօնի նկատմամբ այնպիսի խմբական—տապալուղ անտարբերութիւն չի տածում՝ ինչպէս Ռուսաստանում։

Ռուսական մաքի պատմութեան մէջ ի վաղուց հետէ յայտնի են եղել և մինչև այսօր էլ կուռում են երկու հոսանք, որոնցից մէկը թէև քիչ ներկայացուցիչներ ունի ինտելլիգենցիայի մէջ, բայց այդ քիչ մէջ են ռուսական ազգային մաքի և հանճարի զարգերը, ռուսական ազգային փառքի և պարծանքի օւտարկաները։

Այդ մարդիկը նոքա են, որոնք ժողովրդի հետ ի միասին զիւղական եկեղեցու մէջ են աղբւր, և յամենայն դէպս զէպի կենդանի Աստուած տանող ժողովրդական հաւատալիքները սիրել են։ Այդ քչերի շարքում մենք անանում ենք. Ժուկովսկուն, Պուշկինին, Տիւտչեւին, սրբակա տեսակէտից Լեւոնտովին, Գոգոլին, Խոմա-կովներին, Ակսակովներին, Վ. Սօլովեւին, Դոստոևսկուն, Պրոտոզովին, Ա. Տօլստոյին, Նոյն իսկ Նեկրասովին և Լեւ Տօլստոյին, որչափով առ ընդհանրապէս կանգնած է կրօնական հողի վերայ։

Իսկ միւս—հակակրօնական դադափարական հոսանքը, որի շարքերում էին առաջադէմ հրապարակախօսներ և հաւարական գործիչներ, իւրացրել էր բացիօնալական անաստուած աշխարհահայեցողութիւն, որը մեծ ալիքի նման ծաւալուեց և այսօր ռուս ինտելլիգենցիայի տիրապետող հաւատն է։ Ես սխալուած չեմ լինի, եթէ կրկնեմ, որ այս անհաւատութիւնը իսկական հաւատ է, բայց հաւատ դէպի գիտութիւնը, բացիօնալիզմը, անհաւատութիւնը։ Փեր մտաւոր զարգացման սկզբնական շրջանում, մանկական կամ երիտասարդական հասակում, մեր ինտելլիգենցիայի ստուար մասը անսովոր թեթեւութեամբ է ընդունում անաստուածութեան դաւա-նանքը և սորան տալիս գիտական տիտղոս։ Շատ անգամ է նկատուած, որ կանխակալ համոզմունքը ճշմարտութիւնից աւելի հետու է, քան կատարեալ անգիտութիւնը։ Մեր մէջ կրօնի նկատմամբ գոյութիւն ունի այն ժառանգական նախապաշարումը, որ իբրեւ թէ այստեղ սոհառարակ խնդիր չկայ, որովհետեւ գիտութիւնը ու փիլի-սոփայութիւնը մերժում են կրօնը։ Այդպիսի կարծիք յայտնողները ամենին ծանօթ չեն գիտական և փիլիսոփայական աշխատանքի հետ, որ եւ է եկել և մինչև այսօր եւ է գալիս կրօնի պատմութեան և փիլիսոփայութեան, կրօնի դաւանութեան և պաշտամունքի ուսումնասիրութեան, ինչպէս և այս հարցերի մասին ծագած ան-վերջ վիճաբանութիւնների շուրջը։ Կրկնում եմ, ռուսական անհա-ւատութիւնը մնում է կոյր և միամիտ հաւատի մակերեսի վերայ։ Ռուսական հոգևոր զարգացման այս առանձնայատկութիւնը, որ ունեցել է իւր պատմական և կենսական պատճառները, իրեն

յատուկ թափանցութեամբ ցոյց տուեց Դօստօեւսկին, որ ուղա-
կան և համաշխարհային անաստուածութեան ուսումնասիրութիւնը
իւր մասնագիտութիւնն էր դարձրել։ Նա իշխան Մըշկինի բերանով
(Ապուշ) տալիս է հետեւեալ բնորոշումը. « ուղա մարդը աւելի հեշ-
տութեամբ է դառնում անաստուած, քան աշխարհի մնացած բոլոր
մարդիկը։ Եւ մերոնք ոչ միայն անաստուածներ են դառնում, այլ
անաստուածութիւնը ընդունում են իբրեւ մի նոր կրօն և բոլորու-
մի չեն նկատում, որ զերօյի են հաւատացել։ այս հանգամանքը ոչ
այնքան վատ, անախառ զգացումներից է առաջ գալիս, որքան հո-
գեկան ցաւից, հոգեւոր ծարաւից, մեծ դործ, հաստատուն ամուսնի
տենչացող վշտից »։ Եւ շատ անգամ մտածել եմ ուղաական ինտել-
լիգենցիայի այս հոգեմաշ գրութեան, նորա երկուսցած և մինչեւ
այսօր անգուշակելի և անորոշ մնացած զիմանեալի մասին և դիտել
եմ, որ այդ ինտելլիգենցիան կրօնական վիշտ ունի, նա ծարաւի
սրտով տենչում է հաստատուն ամուսնի, նոր երկինք և նոր երկիր
Եւ սա ոչ թէ քաղաքագէտների, ոչ ակադեմիկների և աստիճանական
զարգացման պաշտպանների հոգեբանութիւն է, այլ այն մարդկանց
խենթ ոգևորութիւնը, որոնք Աստուծոյ արքայութեան և նոր Երու-
սաղէմի գաղափարները երկրի վերայ հենց վաղը իրականացած ու-
ղում են տեսնել։ Այս նմանութիւնը վերաբերում է միայն հոգեբա-
նութեան և ոչ թէ գաղափարներին, իսկ գաղափարական նկատ-
մամբ Ռուսաստանը աւելի վճռողական և ուղիղ գծով արտացոլում
է դարաշրջանի գաղափարները և արամադրութիւնը, քան Արե-
մուտքը, արտացոլում է աստուածամարտութեան և աստուածութեան
ցոլութեան այն համաշխարհային հոգեւոր դրաման, որը կազմում է նոր
պատմութեան երակը և որի առաջ նստածնում են և յետ նահան-
ջում բոլոր մեծ քաղաքական և սոցիալական ինդիւիդները, որոնք
պատմական ծովի կրծքի վերայ բարձրացնում են զօրեղ և մեղմ
այլէկոծութիւն։

Արգեօք դա ինչ կսիւ է և ինչու համար դա պրամայ է։ Հո-
գեւոր կսիւը, որ նոր պատմութեան հիմնական նիւթը և հիմնական
բովանդակութիւնն է կազմում, սկիզբն առնելով վերածնութեան
շրջանից և աւելի որոշ կերպով ժԷ—դարից, ընդունում է այս
ձևակերպութիւնը. քաղաքակիրթ մարդկութիւնը, ծիւղ ու ջանք է
թափում, որպէս զի « կարողանայ ընդմիշտ և վերջնականապէս
կառավարուել առանց Աստուծոյ » ինչպէս ասաց Դօստօեւսկին,
« որպէս զի կարողանայ սղանել Աստուծոյ » ինչպէս համարձակօրէն
ասաց աստուածամարտներից ամենակատաղին—Նիցշէն։ Ուրեմն
կեանքը բաղադրել լապտաւապէս ներակայութեան գաղափարով
(իմանենտ) առանց որ և է կապի գերբնականութեան հետ (տրանս-
ցենդենզ)։ Այդ պատերազմը տեղի է ունենում մտքի, զգացմանք-

ների, ներքին կեանքի, գիտութեան, փոխադասութեան մէջ, ինչպէս որ նախապէս այդ ցոյց են տուել Աւետարանը և Յայտնութիւնը, և ամենամեծ չափով աշխատանք է դործ դրուել, դործ է դրուած և պէտք է դործ դրուի, որպէս զի կրօնական հաւատի իրաւունքները յօգս յնշուին կամ արդար ճանաչուին: Այս խնդրում մեր դարաշրջանը պատմութեան մէջ իւր հաւասարը չունի: Առանձին հակակրօնական հոսանքներ և կրօնական անկման երևոյթներ միշտ եղել են. բայց մարդուն գիտին գլորելու, երկինքը դատարկելու համար այսպիսի գիտակցական և համոզմունք դարձած, այսպիսի մոլեռանդ և անհաշտ ձգտումներ չեն եղել: Եթէ ուզենանք գեղարուեստական պատկերով, կամ ողորդական միտերիայի մէջ արտայայտել մեր դարի հոգեւոր էութիւնը, այդ պատկերը կամ միտերիան պէտք է անուանենք «Աստուծոյ թաղում» կամ մարդկութեան ինքնասպանութիւն»: Եւ այդ պատկերներն մէջ ամբողջ թափով և չօշափելի կերպով հարկաւոր կլինէր ցոյց տալ թէ ինչ բանի վերայ է մահափորձ կատարում մարդկութիւնը և ինչ է անում իւր համար, ինչ է կորցնում մեզանից իւրաքանչիւրը և ինքը ինչ դառնում: Այդ Փանտաստիքական կտաւի վերայ ինչ տեսակ էլ, որ դատարկելու լինենք կերպարանքները, մի բան անկասկած է, որ նորա ընդհանուր բովանդակութիւնը կլինի ոչ թէ գիտութեան յաղթական մուտքը պատկերացնող հովուերգութիւն և կատակերգութիւն, որի մէջ վերջի վերջոյ արգելքները յաղթում են և դործը վախճան է ստանում փեսայի—մարդկութեան և հարսի—պատմութեան ուրախ հարսանիքով, այլ կլինի լուրջ, ասնջալից մի դրամայ:

Բայց ինչու դա դրամայ է, ինչու Աստուծոյ թաղումը անխուսափելիորէն հենց թաղողների թաղում է դառնում. նորա համար, որ մարդիկ իրենց գիտակցութեան մէջ թաղելով Աստուծուն՝ հարկադրուած են թաղելու նաև իրենց մէջ եղած աստուածայինը, իսկ մարդկային հոգու իսկական, իրական բնութիւնը ապրում է աստուածայինով: Մարդ կարող է իւր մասին մտածել, ինչպէս իրեն հաճելի է. նա կարող է իրեն համարել մարդ—կապիկ, տնտեսական յարաբերութիւններով արտացոլում, ինքնաշարժ մեքենայ, նիւթի կտոր, որը մեքենական անհրաժեշտութեան չորհիւ գիտակցութիւն է ստացել, այս բոլորը ասել են և ասում են մարդու մասին. սակայն հակառակ այս կարծիքների մարդս այն է: ինչ որ է, ինչ որ նորան դարձրել են արարիչը և ստեղծող ձեռքերը և նորան օժտել բարձր հոգեւոր կեանքի պահանջներով և առանձնաշատկութիւններով: Քաղցած մարդուն կարելի է համոզել, որ կուշտ է. տրամաբանական պատճառաւորութիւններով կարելի է խլացնել քաղցի ձայնը այն աստիճան, որ քաղցածը ինքն էլ սկսի հաւատալ, որ կուշտ է, սա-

կայն անուամենայնիւ քաղցից պէտք է տանջուի նա և անհանդիստ լինի։ Կարելի է իրեն և ուրիշներին հաւատացնել, որ վայրի «եղջիւրները», որոնցից անառակ որդին կերակրուում էր, աւելի լաւ են քան թէ նորա հօր տանը պատրաստած պարսրտ եղբւրջ այս բանը չի հանգստացնի և նորա հոգուն խաղաղութիւն չի տայ։ Նորա հոգին չի հաշտուի ոչ իրեն և ոչ էլ կեանքի հետ, որովհետեւ «դու ստեղծեցիր մեզ (ուղղուած) դէպի Գեղ, մեր սիրտը անհանդիստ է, մինչև որ հանգիստ կգտնի Գո մէջ», ինչպէս երանելին Օգոստինոս բացականչում է «Խոստովանութեան» մէջ։ Յաւիտենականութեան համար է ծնուած մարդ և նա իւր մէջ լսում է յաւիտենականութեան ձայնը և լսում է իւր ամենամեծ իմաստունների, գիտնականների և բանաստեղծների, մաքրասիրտ արդարների մեղմ լսողութեամբ, իւր գեղարուեստագէտների ստեղծագործող հանձարով։ Մարդ պէտք է ձգտի ապրել ժամանակի մէջ յաւիտենականութեան համար։ Հետանալով գիտակցութեան ներկայ իրականութիւնից՝ պէտք է սլանայ դէպի վեհագոյնը—գերբնականը (excelsior)։ մարդս կոչուած է սորա համար։ և այդ ձգտումը ինքնին արդէն խօսում է նորա մասին, Որը ապրում է բարձունքներում, և է կենդանի աստուածային յայտնութիւն մեր մէջ։ Մարդ երբէք չի կարող բացարձակ և ինքնարաւական լինել, որովհետեւ նա երբէք իւր անձից և իւր ներկայ դրութիւնից դո՛ւ չի մնում, և թէ միայն չի ստորանում մինչև կենդանական աստիճանը և չի նմանում իսկապէս անբան արարածի։ Այսու հանգերձ մարդ գիտակցում է իւր անձի ոյժը և կամքը, որոնք ընդունակ են բացարձակ բովանդակութիւնը պարփակելու, աճելու և բնդարձակուելու և այսպիսով դառնալու բացարձակի կենդանի պատկեր՝ ըստ պատկերի և նմանութեան Աստուծոյ։ Ահա կեանքի բարձր բովանդակութիւնը որոնող, բայց անյադ մնացող այս ծարաւն է ստեղծել և ստեղծում կրօնական հաւատ։ Մեր պատմական դարաշրջանը շատ մեծ արժէք է աւելիս մտքի նուաճումներին։ մեր ժամանակակիցներից շատերը կարծում են, որ մարդկութեան իսկական կեանքը միայն այժմ է սկսւում։ Իսկ նախանցեալ պատմութիւնը մի յառաջաբան է, կամ վայրենութեան և բարբարոսութեան խաւար։ Մեր ժամանակին շատ յարմար է Լիւցիֆերների և Կայէնի խօսակցութիւնը (Բայրոն)։ Կայէնը հարցնում է Լիւցիֆերին. «Դուք երջանի՞ք էք», Լիւցիֆերնը պատասխանում է. «ճշ, մենք զօրեղ ենք»։ «Դուք երջանի՞ք էք»։ «Ո՛չ»։ Եւ մեր դարաշրջանը աւելի զօրեղ է, քան երջանիկ Այդ դարը թէև արտաքին, առաւելապէս նիւթական, ինչպէս և հոգևոր քաղաքակրթութեան բարիքներով հարուստ է, բայց ամենագլխաւորի մէջ—այն է—հոգեկան ոյժի, թարմութեան և հաւատի մէջ աղքատ է նախանցեալ դարերից, և այդ աղքատութիւնը քաղաքակրթութեան

խլացուցիչ ֆօնի վերայ շօշափելի կերպով դուրս է ցցուում:

Աստուծոյ կրօնը վերաջնկով՝ մարդկութիւնը աշխատում է նոր կրօն հնարել, ըստ սրում այդ կրօնի համար աստուածներ է որոնում իւր մէջը, իւր շուրջը, իւր ներսում և դուրսը. հերթով փորձում են բանականութեան կրօնը, բանականութեան կրօնի պաշտամունքը (Ֆրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակ), կօնախ և Ֆեյեքբախի մարդկութեան կրօնը, սօցիալիզմի կրօնը, մաքուր մարդկայնութեան կրօնը, գերմարդու կրօնը և այլն: Աստուած կորցնող մարդկութեան հոգու մէջ պէտք է անպատճառ սոսկալի դատարկութիւն առաջ գայ, որովհետեւ, թէև մարդկութիւնը կարող է այս կամ այն մարդագիտութիւնը բնդունել, բայց չի կարող խնդրել յաւիտենականութեան ձայնը իւր մէջ, չի կարող յաղեցնել այն ծարաւը, որ կեանքի համար բացարձակ բովանդակութիւն է ըզձում: Մարդկութիւնը հանդիմանում է արեղակր, բայց աշխատում է պահպանել նորա լոյսը և տաքութիւնը. որպէս զի ազատի և սահմանի աստուածայինը և դատարկութիւնը լցնի նոր բարիքներով՝ նա ջղաձգարար ճիւղ ու ջանք է թափում. սակայն ուսնկի տակից հոգն է կորցնում և հոգեոր մթնոլորտը դարձնում աւելի լարւած և աւելի ծանր: Եւ հոգեոր դոյութեան համար մարդկութեան մղած կոխը, այս կամ այն տեղում հաստատուն հոգ գտնելու համար նորա թափած ճիւղն ու ջանքը, վերին աստիճանի սրտաճնկիկ է:

Գործք Առաքելոցի մէջ կայ յստեանաւ անմոռանալի մի պատմութիւն Պօղոս առաքելալի քարոզի մասին, որ նա ասել է Աթէնքում, հին աշխարհի մայրաքաղաքում, գիտութեան և արուեստների, փիլիսոփաների, իմաստունների և գեղարուեստագէտների այդ կենդրոնում: Աթէնքը լի էր կուսքերով, ինչպէս մեր քաղաքակրթութիւնը, և մեծ առաքելալի «հոգին զայրացաւ նորա մէջ» և Կուսքերը գիտելու ժամանակ՝ նա գոհարեցութեան սեղաններից մէկի վերայ նկատեց արձանագրութիւն «անծանօթին Աստուծոյ», որը և իւր քարոզութեան համար արտաքին բնաւոր ընտրեց: Առաքելալի օրինակին հետեւելով՝ պէտք է մի այսպիսի բազին որոննք և ժամանակակից Աթէնքում, և անշուշտ այդ բազինը կարելի է գտնել և այստեղ. մինչև անպա՛մ ամեն ինչ մերժող խօսքերի, կործանիչ գաղափարների քօղի տակ կարելի է նկատել հաւատոյ վառ կայծ և բարեղաշտ զոհաբերութեան սեղան: Եթէ հարցնենք, արդեօք ինչո՞վ է ապրում ժամանակակից մարդը, Աստուծոյ փոխարէն ի՞նչ բանի է հաւատացել, օրինակի համար հարցնենք միջին կարգի ուսուսանողի կամ հասակաւոր մի «հասկացող» գիմնաղիստի. սա իհարկէ իսկոյն կպատասխանի. «ես ուզում եմ մարդկութեան օգուտ բերել», ապա քիչ մտածելով

կաւելացնի. «ինձ համար դիտական աշխարհայեցողութիւն մշակելով»։ Ներկայ մարդկութիւնը յառաջագինութիւնը և գիտութիւնը վարդապետում է իբրև իւր հաւատը, նա ընդունում է, որ կենսական բոլոր հակասութիւնները հնարաւոր է գիտութեան և մարդկութեան սրամական զարգացողութեամբ լուծել։

Այս վարդապետութեան հաւատոյ տալանութեան համար հիմք են—բանականութիւնը և ամենադուր գիտութիւնը։ Սակայն բանականութիւնը որպէս հաւատալիք արդիօք համաձայնում է մարդու մասին եղած այն ընդհանուր վարդապետութեան հետ, որի համաձայն մարդը երկոտմանի կենդանի է, որը պատահականութեան, նիւթի ատմանի խաղերի և իւր գոյութեան համար մղած կռուի շնորհիւ հասել է ներկայ վիճակին և ապագայում դեռ աւելի բարձրին պէտք է հասնի։ Արաքելոյ ձեռք բերեց այդ «փեսայահան աքլորը», ինչպէս անուանեց մարդուն Դիօգիւնեւը, բանականութիւն և գիտութիւն և ինչի վերայ յենում սոցա նկատմամբ եղած հաւատը։ Ինչ է՝ ճշմարտութիւնը, որը գիտութիւնը ուղղում է ճանաչել։

Պիղատոսի այս հարցը, որ ուզուած էր Աստուածային Բանին և իբր իւր մասին ասաց. «Ես եմ ճանապարհ, ճշմարտութիւն և կեանք», հնչում է մարդկային պատմութեան ամբողջ ընթացքում և իւր պատասխանը գտնում է մի միայն կրօնական հաւատի մէջ։ Երկուսից մէկը, կամ մարդը խախտել ոչնչութիւն է, ցնիւր կոյտ է, ինչպէս որ ցոյց է տալիս նիւթապաշտ փրիստփայութիւնը։ Բայց այն ժամանակ բանականութեան և գիտութեան նկատմամբ եղած սրահանջները անհասականալի են, կամ թէ մարդս է աստուածակերպ արարած, յաւիտենականութեան որդի, աստուածային հոգի կրող արարած և այս դէպքում միայն բոլոր տեսակի գիտական ծանօթութիւնները բացատրւում են մարդու հենց այս էութեամբ։ Աւրիշ խօսքով, մարդու մասին եղած կրօնական վարդապետութիւնը հաստատում է գիտութեան արժանաւորութիւնը և նորա իրաւունքները և ոչ թէ սահմանափակում։ Եւ երբ վերացւում է առաջինը՝ յօդս է ցնդւում և կրկնորդ-գիտութիւնը։ Գիտութիւնը սկզբունքով յենւում է կրօնի վերայ և ոչ թէ հակասում կրօնին, ինչպէս տարօրինակ կերպով ժամանակակիցները նրեակալում են։ Իսկ Դարվինիզմի այն կարծիքը, որի համաձայն բանականութիւնը և գիտութիւնը գոյութեան համար մղւած կռուի արգասիք և զէնք են համարւում, մենք վերջնականապէս պէտք է հերքենք։ Եթէ գիտական ճշմարտութեան ոյժը և նշանակութիւնը միայն օգտակարութիւնն է, ինչպէս ասում են դարվինականները բնօրգիայի մէջ, իսկ վերջին ժամանակ զնօսնօրգիայի մէջ, այն ժամանակ որակելիք դուրս բերին, որ ճշ-

մարտութիւնը միշտ օգտակար է և որ երբեմն, զուցէ և միշտ, աւելի օգտակար չէ մոլորութիւնը: Այս կասկածը յայտնել է Նիցշէն, որ ոչնչով չի կարելի թուլացնել: «Մտածողութիւնից աւելի հիւանդոտ բան չկայ» դուրս թաւ 0. Ուայլիի բերանից, որ յունական սոփիստներին հետեւելով՝ ուրիշ մոգեւորասներին պէս առում է. «ամեն ինչ կարելի է ազդեցւածել» և ոչինչ ճշմարտութիւն չհամարելով և ծաղրելով դէպի գիտութիւնը եղած ծանրակշիւ վերաբերմունքը: Գիտութեան կողորդին դէմ են անում գանակը, որ սա ինքն է սրել: Սկսում է գիտական և փիլիսոփայական գիտակցութեան տաղնապը, որ նման է հին աշխարհի կրած տաղնապին և արդեօք գիտութիւնը իւր համար յենարան փընտսելու չէ այն կրօնի մէջ, որը այժմ հալածում է: Գիտութեան տաղնապը, սոփիստական-պիղատոտական, վարդապետութիւնը, կարելի է, աւելի պարզ կերպով կոսմոսնէն կրօնի և գիտութեան միջև եղած իսկական յարաբերութիւնը, որը միշտ խոստովանել են մեծ գիտնականները և խոհուն մարդիկ, բայց չի հասկացել թերի գիտութիւնը:

Վերջին ժամանակ յաճախ ձայներ են լսում, որ գիտութիւնը տաղնապի մէջ է և մինչև անգամ անանկացել է, և երբեմն այս կարծիքները հանդէս են բերում ի պաշտպանութիւն հաւատի: Ես, և՛ գիտնական դորձի և՛ կրօնական փիլիսոփայի տեսակէտից առում եմ, որ այդ տրտունջները լաւ պատճառաւորաւոր չեն: Գիտութիւնը ողջ առողջ ապրում է: Եւ, ի հարկէ, պէտքէ վաւերով էլ ապրի: Նորան մեր ողջոյնը *vivat, crescat, floreat*: Գիտութեան տաղնապն այն է համարւում, որ նա բոլորովին կորցրել է իրեն չարտկանող այնպիսի կոմպլեքսներ ու ընդհանուր ձրգտումներ, որպիսիք վերադրում էին նորան կրօնական հաւատը գիտութեամբ փոխարինել ցանկացողները: Գիտութեան խնդիրները և նշանակութիւնը բոլորովին յարաբերական են և սոսմանսփակ: Նա դորձ ունի փորձնական գիտութեան (կանտի իմաստով) խընդիրների յատուկ չրջանի հետ և միեւնոյն ժամանակ բաց իւր էութեան ընդունակ է անխախտ կերպով յառաջագրմելու: Հորիզոնը շարունակ հեռանում է նորա՝ առաջից, նոր ծանօթութիւնը անգիտութեան չրջանը աւելի է լայնացնում: Սակայն գիտութեան կղզին բաց առաջնոյն չրջապատում է խորհրդաւորութեան և յախանականութեան ծովով:

Ուշագրութեան պահելու է նաեւ, որ գիտութիւնը իբրեւ թանձրացեալ ամբողջութիւն՝ գոյութիւն ունի միայն բոլոր գիտութիւնների և անընդհատ աճող մասնահիւղերի համախմբման մէջ: Գիտութիւնը չափ բաղմաթիւ անիւններից և մասերից՝ բաղկացած մի մեքենայ է: Ամբողջական իմաստութիւնը, աշխարհի

բանականութիւնը կամ բնութեան գիրքը բացուած է մարդկութեան առաջ միայն սորա պատմութեան մէջ, և իւրաքանչիւր անհատ ինչքան էլ մասւոր ոյժ ունենայ՝ այդ գրքի մէջ միայն երևոյներ կամ առղեր է կարգում: Այս պատճառով էլ այն ենթադրութիւնը, թէ գիտութիւնը յիրաւի լուծում է բոլոր խնդիրները, գործնականապէս կարող է հիմնուած լինել այն հաւաքական հաւատի վերայ, որ կայ գէպի գիտութեան ոյժը, գիտական եղանակը, գիտական մասնագիտութիւնը, սակայն այդ հաւատը քննութեան չէ ենթարկուած: Եթէ գիտութեան ամբարած պաշարը միայն կրաւորապէս իւրացնելու համար ոչ թէ մէկ, այլ 10 կամ 100 մարդու կեանք նուիրէք, դարձեալ բոլորը չէք իւրացնիր: Հետեապէս, մտածել կամ խօսել մի ամբողջական գիտական աշխարհահայեցութեան մասին որից դուրս ձգուած լինէր հաւատը, անկարելի է:

Այսպէս ուրեմն, գիտութիւնը հնարաւորութիւն չունի փոխարինելու կամ վերացնելու կրօնական հաւատը. նա նոյն իսկ չի կարող պաշտպանել իւր գոյութիւնը կասկածամտութեան յարձակմունքներից առանց լսելեայն կամ ակնյայտնի կերպով ճանաչելու կրօնի նախադրեալները-այսինքն հաւատ գէպի օբեկտիւ բանականութիւն: Ասածներս որոշում են կրօնի սկզբունքի և էական յարաբերութիւնները, որոնք համեմատութեան և փոխադարձ հպատակութեան յարաբերութիւններ են, թէև գիտութեան առանձին վարդապետութիւնները ի մասնաւորի այս կամ այն հարցը չօգտւելու ժամանակ կարող են և ժամանակաւորապէս ընդհարուիլ այս կամ այն կրօնական վարդապետութեան հետ:

Եթէ նոյն իսկ գիտութիւնը իւր մեծ ուժով կասկածամտութեան թռուտոր խայթոյի գէմը անպաշտպան է մնում, այն ժամանակ ևս առաւել անպաշտպան պէտք է մնան չինձու կրօնները, որոնց մէջ աստուածութեան գերը յանձնուած է մարդկութեան և որոնց հիմնական դաւանութիւնը յառաջադիմութեան վարդապետութիւնն է: Այստեղ արդէն սկսում են հակասութիւններ և դժուարութիւններ, որոնք հեշտութեամբ երևում են, երբ համեմատութեան են դրում քրիստոնէական վարդապետութեան հիմնական կէտերի հետ մարդու մասին: Քրիստոնէական վարդապետութեան տեսակէտից մարդ չարի և բարւոյ ընտրութեան մէջ ըարոյճապէս ազատ է. ըստ որում ըարոյճական կեանքը այն է, որ մարդ իւր կամքը չարից գէպի բարին ուղղի: Անձնաւորութեան վերածնութիւնը կատարւում է այդ կողմով, անձնագոհութեամբ, անձնորայցութեամբ և օգնութեամբ բարձրից: Մարդու առաջին կանգնած է կատարեալ վերածնութեան զաղափարը. «եղբրեք կատարեալ, որպէս Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է» և «(կա-

ստեղծ սէր է»։ Այս պատճառով քրիստոնէական գործնէութիւնը սիրոյ և անընդհատ անձնութեան գործնէութիւն է։ Մարդ խորհում է և զգում, որ իւր մերձաւորի հետ անքակտելի է և անբաժան։ Գրիստոսի ձեռքով փրկուած մարդկութիւնը Գրիստոսի համար կենդանի միութիւն է, մարմին և անդամ։ Այս պատճառով էլ քրիստոնէութեան մէջ սէր առ Աստուած և սէր առ ընկեր այդպէս անքակտելի կապով են միացած իրար հետ։ Նորածին մանուկը կրում է Աստուծոյ պատկերը և աստուածային սիրոյ կնիքը. «պատկեր եմք անճառելի փառաց քոյ» երգում է թաղման հանդիսաւոր կարգի մէջ բաց դագաղի առաջ, որի մէջ կազմալուծուելու է դիակը։ Մահը Աստծոյ պատկերը կարող է աղարտել առ ժամանակ, սակայն չի կարող ոչնչացնել ընդմիշտ։ Աշխարհի ողբերգութիւնը լուծելու համար քրիստոնէութիւնը իսկապէս խոստանում է, որ մարդկութիւնը պէտք է վերանորոգուի յաւիտենական կեանքի համար։ Նշանակում է թէ մարդ այստեղ, երկրի վերայ, ոչ թէ, ինքնակոչ աստուած է, այլ աստուածացրած արարած, աստուած ըստ շնորհաց։ Ի զուր չէ, որ եկեղեցում աստուածպաշտութեան ժամանակ սրբերին խնկարկելու միջոցին՝ խնկարկում են և աղօթաւորներին, որոնք հաւատարմութիւն են սրբերին։

Եւ յիբաւի, երբ Աստուած մարդուն իւր պատկերն է տուել, միթէ մարդը կենդանի պատկեր չէ, եթէ նոյն իսկ այդ պատկերը աղարտելու լինի։

Ժամանակակից աշխարհայեցողութիւնը ամեն տեղ թունաւորելով աստուածային հաւատը և մերժելով այս վարդապետութեան կրօնական հիմքը՝ նորա մէջ պահպանեց միայն մարդուն վերաբերող կողմերը, այն է սէր առ ընկեր և այս սէրը կոչեց այլապաշտութիւն, հաւատաց մարդու աստուածութեան՝ և մարդ արարածին մարդ աստուած դարձրեց, և հաւատալով մարդկութեան փրկութեան՝ պինդ կանգնեց յառաջադիմութեան վարդապետութեան վերայ։ Արդեօք առանց հիմքի շինութիւնը չի քանդուի, արդեօք ժամանակակից մարդկութիւնը իւր ոտների տակի հողը չի կորցնի, արդեօք Ֆաուստին երեսցող դժգոյն տեսիլքի, երկրային ոգու նման մեր ձեռքից չի փախչի մարդկութիւնը, երբ ուղենանք գրկել Շասո նշաններ կան, որ այդ այդպէս և շատ պատճառներ՝ թէ ինչո՞ւ համար այլ կերպ լինել չի կարող։

Մարդուն ներշնչում են, որ նա աշխարհում ամենաբարձրն է, ինքնորոշ է, դեղեցիկ է, խոհուն է, աստուած է եթէ ոչ ինքը իւր անձով և առանձնացած կեանքով, գոնէ ուրիշների հետ միասին կազմած ամբողջութեամբ։ Բայց Աստուծուն յատուկ է կեանքը,

մինչդեռ այս աստուածը կազմալուծուող դիակ է, որի օրերը և տարիները աստիճանաբար մօտենում են մահուան գերեզմանին, որի մէջ, ինչպէս յայտնի է, «եւ հանճարի գանդը որդիքի ժառանգութիւն է»։ Պղատմներ թաղեց իւր Սոկրատէսին, աստուածային մարդուն, իւր կեանքի լոյսը և աշխարհը նորա համար գերեզման դարձաւ։ Վաղ թէ ուշ այգւոյիսի գերեզման կլինի աշխարհը և մեզանից իւրաքանչիւրի համար։ Միթէ այդ հակասութիւնը չի այրում և չի տանջում այժմ, երբ նյութան կեանքի եւ գոհ բերում ուղիղ կամ սխալ հասկացում գաղափարների պատճառով։ Եթէ երկաթեայ կամբի ուժով մէկը կարողանում է իւր մէջ ճնշել զգայմունքները և կարգադատութեան սովորութեամբ մնալ շարքի մէջ այն ժամանակ, երբ շուրջը ընկնում են մերձաւորները եւ թանկագինները, այդ չի նշանակում թէ նա կամքը զօրեղացնելով և շրթունքները կծոտելով ջաւը փարատեց։ Մահը աշխարհ է բերում մի այնպիսի աններգաշնակութիւն, որը լսելի է խուլին անդամ։ Եւ մահուան երկիւղի հետ կուռւմ են երբեմն Մեհնիկովի պատուաստով, երբեմն ալա ֆեյերբախ միթիթարանքներով։ Այս իսկ պատճառով քրիստոնէական հաւատոյ և ուրախութեան քարոզութիւնը նախ և առաջ բարի լուր է յարութեան և յաւիտենական կեանքի մասին։

Ուրեմն, մահկանացու է այդ աստուած առանձին վերցրած, մահկանացու է իւր ամբողջութեամբ։ Թողնելով բոլոր դործերը և հոգսերը՝ սերունդ սերնդի յետից շարան—շարան դիմում են դէպի գերեզման։ Իսկ մեզ ուզում են հաւատացնել, որ այդ գործերը և հոգսերը մեր կեանքին բովանդակութիւն տալու ընդունակութիւն ունեն։ Մարդկութեան այս կրօնը մի գերեզմանական փրկիստփայութիւն է և դարմանալի չէ, որ սա իւր վարկը կորցնելով տեղի է տալիս հայրս «ես»ի պաշտամունքին։ Մարդ ինքն իրեն գոհացնում է, իւր «ես»ին—կուռքին է երկրպագում։ Ինչո՞ւ համար կուռք որոնեմ ինձանից դուրս, ինձ նմանի կամ ինձանից վատի, ընդհանրապէս ամբոխի և ուրիշ շատերի մէջ, (Viel zu Viele) երբ ինքս կարող եմ ինձ երկրպագել, երբ ես «եզակի» եմ (der Einzige?) հնար գտիր քեզ համար ճանապարհ քաց անելու։ հնար գտիր տեղաւորուելու։ վայ յաղթութեամբներն։ Անձնաւորութեան մասին եղած այս նորամուլ հիւժախտը աւելի չափ երևում է հանրամասնելի փրկիստփայական գրականութեան մէջ։

Նիհիլ անհատականութիւնը, դէպի որը տանում է մեր քաղաքակրթութիւնը, ժամանակիս հոգեւոր կեանքի ամենալուրջ երևոյթն է կազմում։ Այս անհատականութեան հետ են կուռւմ համայնական կուսակցութիւնները, որպէս զի միացեալ ուժերով համախմբեն հատկացաց մարդկութիւնը, և անիշխան անհատակա-

նութիւնը սանձահարկն սոցիալական զօրեղ կազմակերպութեամբ։ Սակայն այդ միութեան նպատակը ինչպիսի հնարքներ կանո ինչից է յաղթում անհատականութեան քայքայիչ թոյնը։ Այն ժամանակահատիկը, երբ բարոյականութեան կրօնական հիմնաւորումը—Սատու-ծոյ պատգամը, իբրեւ բարոյական նորմա՝ մերժուեց, գիտակցութեան առաջ կանգնեց հարց բարոյականի, բարւոյ և չարի և պարտքի մասին, որպէս բարոյականի հիմքի։ Ինչքան փիլիսոփայութիւնը յանձին կան-տի և սորա գպրոցի յուսահատական ճիգ է արել և անում է պարտքի բարոյականը ազատելու համար, որի վերայ և ներկայումս իւր տրա-մաբանութիւնը ուժաւորու է անում՝ գերմանական գաղափարակա-նութիւնը, բարոյականը զարձակ կրօնի մօտ է գալիս, իբրեւ իւր համար անհրաժեշտ նախադրեալիւ կանտի սիստեմի մէջ գործնական բանականութիւնը տանում է գէպի Աստուծոյ գոյութիւն և հոգու անմահութիւն, որոնք համարւում են կրօնա-կան նեցուկներ, մինչդեռ կրօնական գոյնից դուրկ աշխարհայե-ցողութիւնների դաւանած բարոյականը լոյսորովին յուսահատ բնա-ւորութիւն ունի։ Մերժելով պարտքի գաղափարը և սորա տեղը դնելով անհատական կամ իմրական շահի գաղափար և դազանա-կան ինքնապաշտութեան բնապէ՝ բարոյականութիւնը ինքն իրեն վերջ է տալիս։ Նիցշէի ամօռալիցմի մէջ սրամտութեամբ արտա-յայտուած այդ տաղնապը անշուշտ ձեռակերպութեամբ գուշակել է Դոստոևսկին ասելով. « եթէ անմահութիւն չկայ, այն ժամանակ ամեն բան թոյլատրելի է »։

Անձնիշխանութիւն, իւրաքանչիւր « ես »ի կատարեալ գերիշ-խանութիւն, ծայրայեղ անհատականութիւն էր պաշտպանում Շտերները 40-ական թուականներին։ Շտերները փրկեց Ֆեյերբախի աշխարհիստական հովուերգութիւնը, որ մերժելով քրիստոնէու-թիւնը՝ պահպանում էր սէր առ մերձաւորը կամ օգտարեւ ցան-կութիւն, որպիսին ունի ամեն մի բարի ուսանող։ Շտերները ցոյց էր տալիս որ Ֆեյերբախը (ինչպէս և Կոնադ) այդ սէրը փոխ է տուել քրիստոնէութիւնից, որը թէև մերժում էր և ընդհանրապէս լոյսորովին անվիճելի կերպով ցոյց էր տալիս Ֆեյերբախի և նորա կողմնակիցների ամբողջ անհետեղականութիւնը անուանելով նորան բարեպաշտ « աէրաէր »։ Սիրոյ և համակրութեան բարոյականու-թեան, որը յաջողութիւն չունեցաւ, յաջորդեց օգուտ և անձնական շահասիրութիւն քարոզող վարդապետութիւնը, որի հիւլքը դրեց Ռենտամի Այս վարդապետութեան մէջ ասւում էր, որ այդ շահա-սիրութիւնը ուրիշների համար եւ պահանջում է բարեպաշտութիւն, ի սէր որոյ և կանգ չի առնի զոհաբերութիւնների ասաջ, մինչև իսկ կեանքի գնով. և քանի որ անձնական օգուտ ասելով մարդ-կութիւնը մերձաւորին ծառայել է հասկանում, նշանակում է թէ

նա դեռ ևս չի վառնել իւր ամբողջ քրիստոնէական ժառանգութիւնը: Սակայն կատկածելի է, որ անձնական օգտի կաթով սնուած ապագայ սերունդները մերձաւորի նկատմամբ այդ ժառանգութիւնը կարողանան արիւն և մարմին դարձնել: Այս վարդապետութեան ամենաանկեղծ ներկայացուցիչներէց մէկը, Ջ. Ստ. Միլլը քիչ մնաց անձնատպանութիւն գործէր, երբ ազնւութիւն և քաջութիւն ունեցաւ բացասական պատասխան տալու իւր այս հարցին. եթէ իւր դաւանած վարդապետութեան պահանջած չափերով իրականա-

նաք հանրամարդկային երջանկութիւնը, արդեօք ինքը դո՞ կլինէր: Շահի և օգտի պատճառով մարդկութիւնը չերտերի—կուսակցութիւնների է բաժանուում և հանրամարդկային միութեան զիտակցութիւնը—մարդու յարաբերութիւնը դէպի մարդը և ոչ կուսակցութեան և դասակարգի ներկայացուցիչ—աւելի և աւելի կորչում է: Գաշակցութիւնները և միութիւնները մարդկանց օտարացնում են. թաղաւորում է փոխադարձ անմիութեան ցրտութիւնը. ցրտութիւն այն «մենակութեան», որի պատճառով ողբում էր Մօպսանը և այդ ողբը ուժգին է հնչում զրականութեան և կեանքի մէջ: Շահը, տարբերութեան զիտակցութիւնը բաժանում են մարդկութիւնը, որը միաւորում է միայն ընդհանուր սիրով և ընդհանուր հաւատով, և այն զիտակցութեամբ թէ իւր էական ազգակցութիւնը, հաւասարութիւնը, ևղբայրութիւնը Աստուծոյ մէջ է: Մարդատեսչութեան ծանր միջոցաւորը, որը կռուի բոլոր միջոցները թոյլ է տալիս, հնչում է մեր գլխու և մարդասէր դարաշրջանը:

Սակայն մեզ հաւատացնում են, որ այդ երկարատեւ չէ, որ մօտենում է ոչ միայն ազատութեան և հաւասարութեան ոսկէ դարը, այլ և եղբայրութեան. իրենց այս ծրածանադոյն յոյսերը կապում են անտեսագիտութեան և սօցիօլօգիայի հետ: Գիտութիւնը գիտութիւն մնալով և իրեն յատուկ զգուշութիւնը և համեստութիւնը ունենալով՝ այդպիսի բաներ չի նախագուշակում: Աւաջին, շատերի հետ և ևս հերքում ևս սօցիալական գիտութեան նախագուշակութիւն անող ընդունակութիւնը. սօցիալական գիտութեան ուսումնասիրութիւնը այս է ասում. երկրորդ, որ էական է, եթէ անտեսագիտութիւնը կարող է նախատեսել թէ մօտիկ ապագայում անտեսական կազմը ինչ բնաւորութիւն կընդունի, չէ որ դորանով դեռ ևս ոչինչ ասուած չի լինի այն մասին, թէ այդ ապագան ինչպիսի հոգևոր կեանք և ինչպիսի մարդկային անձնաւորութիւն կունենայ: Ելակէտ ընդունելով որ, անտեսագիտութիւնը բարեփոխում է և հոգևորապէս վերակենդանացնում՝ մարդու նկատմամբ նախապէս այս վարդապետութիւնը պէտք է ընդունել, որ սա է «միայն այն, որը ուտում է», որ մարդ բոլորովին անտեսական հանգամանքների արտացոլումն է կամ արգասիք իւր դասակարգային

գրութեանս Բոլոր այս անընդունելի գրութիւնները ընդունելով հանդերձ՝ մի հարց եւ մնում է. արդեօք տնտեսական պայմանների փոփոխութիւնը ինչպիսի փոփոխութիւններ առաջ կբերէ հոգեբանութեան, իմացականութեան և ինքնագնահատութեան մէջ և արդեօք այդ փոփոխութիւնը կկատարուի յատկապէս երեակայած ուղղութեամբ:

Մարդկային անձնաւորութիւնը կախում ունի ուտելիքից և տնտեսական հանգամանքներից, ընդհանրապէս կեանքի պայմաններից, սակայն կարևորը այն է թէ նա ինչի է հաւատում, ինչով է կենդանի, ինչ է ուզում, ինչ է պաշտում. և այս ելակէտ ընդունելով, ամենաուղիղ կերպով պէտք է եզրակացնել, որ և նոր կազմի մէջ մարդ կլինի ամայացած և կազմալուծուած: Այս պատճառով էլ թշուառ դասակարգների նիւթական կարիքների հոգսերը բարձր դասելով՝ չի կարելի մոռանալ և մարդու հոգեւոր կարիքները: Ժամանակակից մարդը նմանում է այն տանալին, որ իւր տան մէջ չի ապրել և ինքը իրեն հետ երբեք չի եղել. նորա գիտակցութիւնը լիքն է. բայց երբ արտաքին տպաւորութիւնների գեղեցկացոյց գործիքը (կալէնդոսիօս) կանգնում է, միայն այն ժամանակ երևում է թէ նորա կեանքը ինչքան աղքատ է և դատարկ սեպհական բովանդակութիւնից: Պատմութիւնը պահել է մի գեղեցիկ և խորին նշանակութիւն ունեցող պատկեր, որը այլաբանօրէն ուսուցանում է մեր ներկայ հոգեւոր ձախորդութիւնը: Նախկին հումանիզմի ամենախոշոր ներկայացուցիչներից մէկը, Պետրարկան, իւր ճանապարհորդական նկարագրութեան մէջ պատմում է թէ ինչպէս ինքը ելաւ բարձր սարը, որտեղից երևում էր հրաշալի տեսարան, և Փոստոմինոսի « Խոստովանութեան » մէջ կարգաց հետեւեալ խօսքերը. « Եւ ահա մարդիկ գնում են և զարմացմամբ նայում բարձր սարերի, հեռաւոր ծովերի, կատաղի հեղեղատների և ովկիանոսի և երկնային լուսատու մարմինների վերայ, բայց այդ ժամանակ իրենց մասին մոռանում են »:

Ահա թէ ինչպէս է պատկերացնում տնտեսական յառաջագիմութեան նպատակը և բովանդակութիւնը մեր ժամանակի փայլուն տնտեսագէտ պրօֆ. Զօմբարդը. երկար դարերի զրկանքներից յետոյ ծնուելու է մի սերունդ, որը պէտք է ունենայ գեղեցկութեամբ և բաւականութեամբ սնուած մի կեանք, այս սերունդը կստեղծի բաղձանքներով և գեղեցիկ ձևերով լի մի աշխարհ, որի մէջ նորա ուղեկիցները կլինին վայելչութիւնը և կեանքի ուրախութիւնը: Այս նշանակում է թէ այդ սերնդի գեղեցկութեան քանակական պահանջը այնպիսի վիթխարի մեծութեան և հրաշակերտութեան կհասնի, որ նորա մասին այժմ մենք ամենափոքր չափով անդամ գաղափար չենք կարող կազմել և որոնց առաջ կնսեմանան « Հոովմի

կայանքական շքեղութիւնը»։ Վենետիկի փայլը և Վերսալի շոտլանդութիւնը։

Եւ, ի հարկէ, ոչ ոք էլ չի կարող երաշխաւորել, որ դեղնագոյն կամ թխագոյն դեղերը կամ նոյն իսկ պայթուցիկ նիւթերին լաւ ծանօթ մի քանի հոգի այդ գեղեցկութեամբ ճոխ կեանքը սատանի բաժին չեն անի։ Դեռ 1846 թուին Դոստոեւսկին գուշակել է այս բանի հնարաւորութիւնը, որ մի գեղեցիկ օր մի անհնորոջ, փտած գաղափարներով ջենտլմեն կիանցնի ապագայ իմաստութեան մէջ և ձեռքերը կողքերին զրած կապի մնդ բոլորիս։ «Ի՞նչ էք ասում պարոններ, արդեօք ոտքի մի շարժումով այս ամբողջ իմաստութիւնը փոշու պէս չթօթափեմ, որպէս զի մենք մեր իմար ինչքով ապրենք»։ Ի՞նչ կարող են ասել այդ ջենտլմենին պալակի* գեղասիրական ճաշակ ունեցող մարդիկ, ինչով կարող են նորա մեղմացնել մարդու մէջ նստած գաղափին, որին իրենք ան կրթել և չեն նախատեսել, որ ձեռնասուն դարձած գաղանք իւր ծագումով դարձեալ վայրենի է մնում։

Եւրոպական մարդկութեան հոգեւոր կեանքի յայտանիշները գիտելով՝ ոչ ոք չի վստահանայ ասելու թէ մարդկութիւնը հասաւ կամ սկսում է հասնել բաղդաւորութեան և ուրախութեան, ներքաշնակութեան և անգործութեան։ Ընդհակառակը լարուած անհանգստութեան, դժման և անպարտելի մահուան երկիւղի խորշմները զարգարում են նորա ճակատը. դարու տրամադրութիւնը «ժողովուրդների վհատութիւն և անգիտութիւն» աւետարանական խօսքերով կարելի է որոշել, կամ Յայտնութեան գրքի հետեւալ նախադասութիւնով. «Հրէշտակը բոլոր թագանի աթոռի վերայ և նորա թագաւորութիւնը եղաւ խաւարացին և նորա քաղիք իրենց լեզուներն էին ծամում»։

Յուրտ պետքովիցմը և կեանքի երկիւղը միացած մահուան երկիւղի հետ գէպի հոգին է սողում և թերահաւատները հեշտութեամբ դառնում են անտիապաշտ, հոգու մէջ ապրող գաղտնիքի զգացմունքը իւր լուծումն է որոնում խորհրդաւորութեան մէջ. կրօնի պահանջը արտաբացատրութիւն է գտնում անմիտ կրօնականութեան մէջ և իւր ծաղաւր յաջնդնում է կրօնական զգացմունքի երաժշտութեամբ, այսպիսով տանգւում է միտաբանի՝ առանց երձի և գիւտադատութիւն՝ առանց առ Աստուած հաստի։ Արժանանալից հոգին տանգւում է, որ ժամանակից սիրտը գէպի Աստուած տանող ճանապարհին վստահում է՝ այդ ամենայն պարզութեամբ երևում է ցնդաբունեւտի մէջ, որը ոչ ասում է և ոչ էլ զնդնում։

* Ընդգծ. թարգմ.

Սնդրեանի «Մարդու կեանքը» երկի մէջ է զուրս բերուած մարդկային կեանքի փոխոտփայութիւնը, որ յատուկ է ժամանակակից աշխարհաշէնարարութեան: Այս երկի տիրապետող գաղափարի համաձայն կամ պէտք է ապագայի համար բիւրեղեայ պալատներ կանգնեցնել կամ դնդակը տալ ճակատին: Իսկապէս տեղի և անտեղի, միայն վշտից, աննպատակ կեանքից յառաջացած սպանութիւնները շատ յաճախակի են դառնում, մանաւանդ մեր նեարդային և աննեցուկ երիտասարդութեան մէջ. անշուշտ ազդուած են և արտաքին դէպքերը, բայց նորա միայն տաղնապը մեծացնում են: Իրեն յատուկ թափանցկոտութեամբ Դոստոևսկիին այս երկով զխաւոր պատճառը հետեանք էր համարում կրօնական հաւատի կորստեան, ուրեմն անհաւատութեան և պեսիմիզմի ծնունդ, որոնք Հոգիմէական կայսրութեան անկման շրջանում բազմաթիւ ինքնսպանութիւնների պատճառ դարձան: Սենեկան վարդապետեց. «կեանքի աղքատութիւնների հակառակ կայ մահուան բարեգործութիւնը, որի մէջ գտնում ենք կամաւոր մահուան իսկական օրհներգ: Արդէն ծագում էր Բեթղեմեմի աստղը երկնքի երեսին. այդ աստղն էին գիտում իմաստունները և տգէտները, մոգերը և հովիւները. աշխարհ եկաւ մեծ ուրախութիւն, ուրախութիւն մինչ յաւիտեան: «Զի ուրախութիւն իմ ի ձեզ իցէ և ձեր ուրախութիւն յոյեալ եղիցի»: Իժէն աղջամուղջը նորից է շարժւում մարդկութեան գլխին, որը մտնէ ներքնայարկը և այնտեղ ուժասպառ լինում. սակայն Բեթղեմեմի աստղը այժմ էլ չուսատարում է և տարածում իւր մեղմ ճառագայթը, որը ամեն մի բայ սրտին չսելի է անում մեղմ կոչը. «եկեաք առ իս ամենայն վաստակեալք և բեռնատարք և ես հանգուցից գծեց»: Պեսիմիզմը յաղթւում է կրօնից: Աշխարհում շարութիւնը և աննկողնակութիւնը արտաքին միջոցներից չեն պարտւում. և այս անպարտութեան մէջ իւր անունըն է ստանում պեսիմիզմը մինչև այն բուպէն, երբ հոգու մէջ հաւատոյ և յուսոյ առողջարար աղբիւրն է սկսում բլթիկել, որը կեանքի լուծը գարձնում է շխմարի և հեզ: Կրօնի խոստացած տօնը առանց քաւի չէ. ընդհակառակը նա ծանր գործ է, խաչ է. սակայն կրօնը տալիս է և ոյժ. վերջապէս Գոթարտութիւնը զովացնում է այն մաքուր ուրախութեամբ, որը մարդկութիւնը չորացրել է: Ինչպիսի աշք ծակող հակադրութիւն է ստացւում, երբ մեր լուսկանութեան Ս. Գաբրի Նեթանոս հասարակութեան հոգեւոր ցրութիւնը, քաղաքակրթութիւնը, անբարոյականութիւնը և պեսիմիզմը համեմատում ենք առաջին քրիստոնեայ համայնքների հոգեւոր ցրութեան հետ. որ հկարագրուած է Գործ Առաքելոյի մէջ: Պատմութեան մէջ Գոթարտ է ցանկ մի շրջան, երբ մարդիկ աւելի ուրախ ասլրած լինեն, քան այդ խեղճ համայնքները, որոնք կաղ-

մուտք էին ձկնորսներից, ճորտերից, հովիտներից և քիչ թուով գիտուններից: Թէև սղքա չունէին հին քաղաքակրթութեան բարեքները, որոնց հետ իւր կեանքը քարշ էր տալիս հին հասարակութիւնը—հեթանոսութիւնը, բայց սղքա ունէին հոգեկան ուրախութիւն և հաւատոյ կենդանի աղբիւր, որը չնորհատու կեանք է: Պեսսիմիզմը գրաւական է այն բանի, որ մարդ յաւիտենականութեան և Աստուծոյ համար է ստեղծուած, և և կորցնելով այս՝ նա տանջուած է և վշտաբեկուած: Երբեք որ զիտնականները և փիլիսոփաները ինչքան որ զլուսի ցաւացիներ, ինչպիսի շինծու կրօններ էլ որ հնարեն՝ նոքա մարդուն չեն տայ այն անդորրութիւնը և վստահութիւնը, որ տալիս է դէպի Նա եղած հաւատը, ով խոստանում է. «եկայք առ իս և դռնիք հանգիստ անձանց ձերոց»:

Ժամանակակից հոգու տանջանքը, Աստուած տեսչացող սրտի վրէժը ամենայն պարզութեամբ արտափայլում է ղեղարուեստի մէջ, որը ոչ խաբուած է և ոչ էլ կեղծում: Այս հանդամանքը ապացոյց է, որ անհաւատ մարդկութեան հոգու կրօնական թելերը ոչ թէ մեռել են, այլ միայն նուաղել: Մարդկութիւնը հետաքրքրւում է գեղեցկութեամբ, գեղեցկութեան ծառայելու զգացմունքով է տարուած: Գեղեցկութիւնը աստուածային է: Աստուած ստեղծեց է տարուած: Գեղեցկութեամբ, և աստուածայինը գեաշխարհը և զարդարեց գեղեցկութեամբ, և աստուածայինը գեղեցկութեան մէջ՝ հոգու վերայ աղդում է անմիջապէս, կամ ինչպէս Սօլովիովը ասաց, կախարդօրէն, հակառակ մտածկոտ դատողութեան: Ընդունելով գեղեցկութիւնը՝ մարդ չնչում է աստուածայինը, և գեղարուեստը իւր առանձնայատուկ աշխարհով ժամանակակից զրկուած հոգուն մատակարարում է կրօնական անունդ: Բնութեան գեղեցկութեան զդայմունքը թերեւ աւելի զարգացած է մեր դարում, քան թէ առաջ, քան թէ երբեք է. երկնային եթերները, բարձր սարերի երաժշտութիւնը, ծովի անդունդը, ծաղիկների գեղեցկութիւնը սրտադին հարազատներ են դառնում ժամանակակից մարդու հոգու համար, որը սիրոյ ճառագայթներ է որոնում: Այսպէս մէջ «Ս. Հոգւով իւրաքանչիւր հոգի կենդանի է» խոսքերն են երգուած աստուածաշատութեան մէջ և գեղեցկութիւնը Ս. Հոգւոյ պարգև է և հոգով աղքատ մարդկութեան համար փրկութեան խարիսխ:

Գեղարուեստը նոյն իսկ այնպիսի զգացմունքներ և տրամադրութիւններ է իրեն հպատակեցնում, որ բոլորովին չեն համապատասխանում ժամանակակից աշխարհայեցողութեան: Եթէ ժամանակակից մարդը Բեօկլիի հետ խոնաւ քարայրում և ծովի ալիքների մէջ յաւերժահարսեր տեսնելու ընդունակութիւն ունի, նա ընդունակ է և աղօթական ոգևորութեան մէջ սքանչանալ: Սիկստինեան Մադոնայով և վերածնութեան ամբողջ գեղարուեստով:

Նորան մատչելի է գոթական տաճարի մոայլստ միստիքական վեհութիւնը, նա կարող է Բեթհովենի հետ գովաբանել Արարչին և զէպի այդ Արարիչը ուղղուած ուրախութեան և սիրոյ բոցեղէն օրհներգից ալրուել: Ժամանակակից մարդը տրամաբանօրէն և անձնական պատասխանատուութեամբ շատ բան վայելելու իրաւունք չի համարում. սակայն Նորան վայելելու այդ իրաւունքը տալիս է գեղարուեստը չնորհիւ գեղեցկութեան նա թևեր է ստանում և զգում է, որ ոչ նիւթի կտոր է և ոչ էլ կապիկ, այլ անվախճան հոգի, որը սնոււմ է բացարձակով և աստուածայինով:

Սակայն բացառապէս գեղարուեստի լեզուով կատարուած կրօնական կեանքի թարգմանութիւնը մեր չրջանի սահմանափակութիւնը, Նորա միակողմանիութիւնը և աղքատութիւնն է ցոյց տալիս: Գեղասիրական յուզմունքները դեռ ևս վերածնող հաւատ չեն ստեղծում. գեղասիրութիւնը հանրագիտական է, նա նմանում է ծաղկից ծաղիկ թռչկոտող մեղուի, նա կարող է բոլորովին անմիաբանելին միաբանել:

Չուտ գեղարուեստականի համար գոյութիւն չունեն չարն ու քարին, ոճրագործութիւնը և մեղքը. իսկապէս, ըստ էութեան միայն մնում է գեղեցիկ պողա, գեղեցիկ դրութիւն, բայց ոչ հոգևոր բովանդակութիւն « Գեղեցկութիւնը կիրկի աշխարհ » ասաց Դոստոևսկին: Եւ այժմ կարելի է ասել, որ գեղեցկութիւնը փրկում է աշխարհը յուսահատութիւնից, ռացիօնալիզմից, կնքնաբաւական մանրացած կեանքից և արդէն գեղեցկութիւնը պապականող հիւանդին ջուր է խմացնում և, կարելի է, Նորա ոյժերը պահպանում է մինչև առողջանալը:

Գաղաքակիրթ մարդկութեան մտածողութեան մէջ փոփոխութիւն եղել է. կարելի է անցկացած համարել ԺԸ դարու այսպէս կոչուած « լուսաւորութիւն » իւր ուղղագիծ բանականութեամբ և հասարակացած բացասութեամբ: Մեֆիստոֆելի դարին փոխարինեց Ֆաուստի դարը և գերմանական սպեկուլիատիւ գաղափարականութեան յաղթանակը: Ապա հետևեց պոզիտիվիզմի և մակերևոյթական նիւթապաշտութեան կարճ ժամանակեայ յաղթանակը, որը մարժում էր ամեն տեսակի փիլիսոփայութիւն: Սակայն, թէ նիւթապաշտութիւնը և թէ պոզիտիվիզմը ներկայումս անցած են: Վերստին վերածնում է կրօնական գաղափարականութիւնը, փիլիսոփայական և կրօնական հետաքրքրութիւնը, որը առատութեամբ իւր սնունդն է ստանում քրիստոնէական և միւս կրօնների պատմութեան ուսումնասիրութիւններից: Կրօնական փիլիսոփայական և պատմական ուսումնասիրութիւնների առարկան է Փրկչի անձնաւորութիւնը, « կարելի է ասել, ասում է գերմանացի գիտնական պրօֆ. Վայնելը, որ դեռ ևս ոչ մի դարաշրջան այնքան լարուած

կերպով չի դրադուել Յիսուսով և նորա մասին չի հարցրել՝ ինչքան ներկայ դարաշրջանը ։ Ահա ինչ է ասում պատկառելի պրոֆ. Բուդ-էյկինը. «Կրօնի համար բարեյաջող նոր արամադրութիւն և նոր ձգտումներ են դորեղանում ։ Ծշմարիտ է. կեանքի արտաքին հոսանքը դեռ ևս կրօնի դէմ է ուղղուած, սակայն յայտնի է, որ այդ հոսանքը մարդկային ամբողջ կեանքը չի ընդգրկում, որ սորան դիմագրում է ի ներքուստ այլ տեսակի հոսանք ։ Մենք մարդուն ազատեցինք ներքին ամեն տեսակի խնամակալութիւնից, որով մտածում էինք նորան պարզելու չլուած մի մեծութիւն. սակայն այս ազատութիւնը արտայայտուեց կեանքի բոլոր ներքին կապերից հրաժարուելու մէջ և ինքն իրեն թողնուած մարդը արտաքին աճեցողութեան ժամանակ ցոյց տուեց ներքին մանրութիւն. մենք զգում ենք, որ դարաշրջանի մեծ խնդիրներն և դոյա լուծում տուող զգում ենք, որ դարաշրջանի մեծ խնդիրներն և դոյա լուծում տուող անհատների ընդունակութեան մէջ ողբալի անհամաձայնութիւն կայ և շատ մտքեր դորեղ կերպով ձգտում են մարդու ներքինը լարձրացնելու ։ Մենք մեր կեանքի ամբողջութեան նկատմամբ խճճուել ենք և զգում ենք, ինչպէս ոչ երբէք, մեր գոյութեան առեղծուածային բնաւորութիւնը ։ Քաղաքակրթութեան արտաքին ամբողջ փայլը ամբամ մեզ չի ազատում կեանքի անհաստատ ցաւալի վիճակից և ներքին աղքատութիւնը լոյսի նման թափանցում է այդ փայլի միջով ։ Այսպիսով սա ոչ միայն կրօնի, այլ ընդհանրապէս ամբողջ կեանքի տագնապ է ։ Կրօնի պատճառով մղուած կռուի համար սա շատ բարեյաջող դրութիւն է ստեղծում, որովհետեւ կրօնի համար ոչ մի բան աւելի վտանգաւոր չէր լինի քան այն կարծիքը թէ հոգեորով և գաղափարական համոզմունքով լցուած քաղաքակրթութիւն կեանք հնարաւոր է առանց կրօնի օգնութեան, նոյն իսկ հակառակ նորան ։ Այժմ մենք տեսնում ենք, որ կրօնի խախտուելով խախտուում է և ամբողջ հոգևոր կեանքը և կարելի է յուսալ, որ եթէ կեանքը վերստին կազդուութիւն՝ գա կլինի ի նպաստ կրօնի և նորա զարգացման ։»*

Անձնաւորութեան և աշխարհահայեցողութեան վերոյիշեալ տագնապը աւելի զղալի է Ռուսաստանի համար չնորհիւ վերջին տարիներս այստեղ տեղի ունեցած պատմական շարժման և պատմական տագնապի ։ Ներկայումս ռուս հասարակութեան բանիմաց մասը իւր ծանր տարակուսանքից ազատուելու և ստեղծագործական աշխատանքի ձեռք գարնելու համար զիմում է անցեալին և այստեղից է ուղղում պատմական դասեր դուրս քաշել ։ Նա պակաս չափով է ուշադրութեան առնում հոգեոր տագնապը ։

* Արդի կրօնափիլիսոփայութեան զլիսաւոր պրօբլեմները, 1907 թ. հր. 145 և. շար.

Վերջին տարիների քաղաքական և տնտեսական շարժումը ինտելիգենտ ընաւորութիւն ունէր շարժմանը մասնակցողների իդէաների, իդեալների, ընդհանրապէս նոցա ամբողջ իդեոլոգիայի պատճառով: Գաղափարների և դաղափարական տրամադրութիւնները այստիղ տարերային թափով արտայայտուեցին և ցոյց տուին, որ այժմ արդէն ինտելիգենցիան Ռուսաստանում պատմական ոյժ է, որի նշանակութիւնը պատմական յետագայ դարգացման ընթացքում միայն կարող է մեծանալ:

Ռուսաստանի պատմական ասպզան, բարգաւաճումը կամ կազմալուծուելը ինտելիգենցիայից է կախուած, իբրև աճող ուժից և այս հանգամանքը նորան դարձնում է կրկնապատիկ պատասխանատու: Այսպիսի գնահատութիւնը ելակէտ ընդունելով՝ մեծ զգուշութեամբ և մեծ անհանգստութեամբ պէտք է մեզ հարցնենք. արդեօք ինտելիգենցիայի հոգու մէջ ամեն ինչ կարգին է, արդեօք այդ հոգին սիւներից պոկ չի եկել, արդեօք նա առնջ է Սորանով մենք ուզում ենք իմանալ պատճառները այն մաշող դառնութեան, որը մեր հոգու մէջ սողում է, չըջահայել այն մատախուղը, որ մեզ է պատել: Շատ անկեղծ մարդիկ, ինտելիգենցիայից ևս, որոնք իրենց դատողութիւնները չեն կապում տեսական վարդապետութեան կամ ծրագրի հետ, խոստովանում են, որ իրենց հոգու վերայ մնում է դառնութեան և ծանր տարակուսանքի մրուր. Բարութեան և չարութեան, թոյլատրելիի և ոչ թոյլատրելիի, ազատութեան և քռակալական կամ անիշխանական կամայականութեան, կուսակցական կարգապահութեան և հանրամարդկային բարոյականութեան միջև եղած սահմանը շատ յաճախ կորել է և շատ հեշտութեամբ տոնակոխ եղել ժամանակի ընթացքում: Այս բանը արդէն կասկած և անհանգստութիւն է թողել հոգու մէջ:

Կուսակցական սանձարձակութիւնը և քաղաքական ներքին ներկայառակութեան մթնոլորդը կասկածելի են դարձրել փոխադարձաբար իրար հասկանալու և համաձայնութեան գալու հնարաւորութիւնը: Մինչդեռ սա անհրաժեշտ է գործնական ստեղծագործական աշխատանքի, ընդհանուր ազգային գործի համար:

Մարդ չկայ, կան միայն դանաղան կուսակցութիւնների անդամներ կամ դանաղան շահերի ներկայացուցիչներ, որոնք միայն իրենց սահմաններն են որոշում: Սակայն հասարակութեան բարգաւաճման և կենսունակութեան համար անհրաժեշտ են որոշեալ բարոյական միաբանութիւն և փոխադարձ հասկացողութիւն. այլապէս այդ հասարակութիւնը կը թանուր մի քանի թշնամի բանակների և վերջի վերջոյ փոշի կդառնայ:

Ինտելիգենցիայի այս դառն և բարոյական—բացասական վիճակը հետեանք է տարածուած հակակրօնական աշխարհայեցո-

ղութեան: Հոգևոր առողջութեան բացակայութիւնը փայլում է կեանքի բոլոր երևոյթների և նորա ուղղութեան մէջ: Անկիրթ ժողովուրդը, մատաղ սերունդը չփուեցին ինտելիգենցիայի հետ և նոր վարդապետութիւնների կրտուածքին քննադատօրէն վերաբերուելու ոյժ և զէնք չունենալով՝ ընդունեցին զբանք առանց խօսելու, ինչպէս ասում են, գիտակցութիւն ձևը բերին: Եւ անկիրթ ժողովուրդը հեշտութեամբ ընդունեց տխուր, մեացնող հաւատը այսինքն անհաւատութիւն: Ժողովրդի հին հաւատը գիտակցութեամբ և ամբողջութեամբ զօրեղ չէ. սա մանկական, անմեղ հաւատ է, որ միանգամ իսկ դիպչելուց քայքայւում է. բայց և այնպէս այդ հաւատը ժողովրդին ուսուցանում էր տարբերել չարն ու բարին, ապրել ճշմարտութեամբ, պարտաճանաչութեամբ և արդարասիրութեամբ: Այդ հաւատը ժողովրդի հոգու մէջ ստեղծել է մի սքանչելի գեղեցկութիւն, որը զրօշմուտ է պատմութեան, Վարդ-Սրբոյի, զրականութեան և զեղարուեստի մէջ: Այդ հաւատի շնորհիւ է, որ ժողովուրդը իւր ուսերի վերայ է տարել և տանում իւր պատմական կեանքի խաչը: Ահա ինչ է ասում ժողովրդի այս հաւատի մասին սրտագէտ և ժողովրդասէր Դօստօեւսկին: «Մեր ժողովրդի մէջ կան դադանութիւն և մեղք. բայց նորա մէջ մի անվիճելի բան կայ. այդ այն է, որ նա իբրև ամբողջութիւն երբեք ճշմարտութեան դէմ չի մեղանչել և չի ուղեհայ մեղանչել: Նա կմեղանչի, բայց միշտ կասէ, վաղ թէ ուշ, ևս անարդար բան արի. եթէ յանցաւորը չի ասի՝ ուրիշը կասէ նորա տեղակ և արդարութիւնը կատարեալ կլինի: Մեղքը դարձահոտութիւն է, և դարձահոտութիւնը անցնում է, երբ արեւ բոլորովին պայծառանում է: Մեղքը անցաւոր է, իսկ Քրիստոս յաւիտենական: Ժողովուրդը մեղք է գործում և ամեն րոպէ ապականւում է, բայց լաւ րոպէներում, Քրիստոսի րոպէներում՝ նա երբեք արդարութեան մէջ չի սխալուել: Հենց կարևորն էլ այն է, թէ ժողովուրդը ինչի է հաւատում որպէս իւր արդարութեան և ինչ բանի մէջ է արդարութիւնը ենթադրում և ինչպէս է իրեն պատկերացնում. ինչն է համարում կարևոր, ինչ է սիրելի, ինչ է խնդրում Աստծուց, ինչ բանի համար ազօթքով լաց լինում: Ժողովրդի իդէալը Քրիստոս է: Իսկ Քրիստոսով է ի հարկէ լուսաւորութիւնը, և իւր լաւ և ճակատագրական րոպէներին՝ ժողովուրդը միշտ վճռում է և վճռել է ամեն տեսակի գործ քրիստոնէաբար...» Սակայն ժողովրդի հոգեկան տառապանքները աւելացնում են քարոզելով անաստեղծութեան վարդապետութիւնը և քանդում են նորա միամիտ—մանկական հաւատը: Հոգով հիւանդ, տանջուած, տգէտ, քաղաքակրթական անյաջող պայմանների մէջ ապրող մարդկանց կեանքի առաջնորդութեան համար յայտնում են այնպիսի զաւանանքներ, որոնք արդիւնը են փիլիսոփայու-

թեան և քաղաքակրթութեան երկարամեայ զարգացման: Այբ ուրէն չիմացող, աղքատ, իւր գիւղի կամ գործարանի սահմաններից դուրս չկլլող գիւղացուն հաղորդում են իւրի և վոյլտերի, հանրագէտների և լուսաւորիչների, ֆիզիքալի և Նիցչէի մտքի աշխատանքի արգիւնքներ: Սա աներևակայելի ծայրայեղութիւն է և յիրաւի գլուխ չչմեցնող մի բան: Իսկ հետեանքը լինում է. անձնաւորութիւնը քաջքայլում է, կամքը և բարոյական հասկացողութիւնը հաշմանգամ են դառնում: Եւ համոզուած եմ, որ quasi քաղաքաւորական սփառագործութիւնների ցաւալի և անվերջանալի վիտաւանութիւնը ծնունդ է ափսոսանքի վարդապետութիւնների սուտ կերակրի, որոնք մերժեցին կրօնը և բացարձակ բարոյականութիւնը: Մեր ժողովուրդը կարիք ունի գիտութիւնների, լուսաւորութեան, բայց այնպիսի լուսաւորութեան, որը նորան հոգեպէս աւելի չաղքատացնի և չքայքայի նորա բարոյական անձնաւորութիւնը: Մեր ժողովուրդը կարիք ունի քրիստոնէական լուսաւորութեան, որը աճեցնում է և կրթում անձնաւորութիւնը, մեր ժողովուրդը կարիք ունի գիտութիւնից պատահաբար պոկած հատուածների, որոնք կուսակցական կռիւների համար իբրեւ միջոց են ծառայում:

Իզուր չէին երկնային կայմակներ որոտմունքները մեր գլխին: Մի քիչ հանգստանալուց և ասպքինուելուց յետոյ՝ մենք չենք կարող նորից շարունակել ասլիկ հին կեանքով, հին զղացմունքներով, հին մաքերով, հին թեթեամտութեամբ՝ կարծելով թէ ոչինչ չի պատահել, ոչ մի ցաւ չենք քաշել: Ո՛չ, մենք չենք կարող վերադառնալ հին դիրքերը, որոնցից մեզ բաժանել է մեռնալներով իր անդունդը, մենք արբունքի մէջ ենք, պատմականորէն ծերացել ենք, երիտասարդանալը անօգուտ է և անվայել: Պէտք է մի նոր բան սկսել, պէտք է օգտուենք պատմութեան դասից և պատմութեան մէջ ճանաչենք մեզ: Հարկաւոր է սուղուել ներքին աշխարհը և ինքնադննել. հարկաւոր է ժողովել հոգևոր ուժերը և սանդղել քաղաքակրթութիւն: Մեր ինտելիգենցիան կրօնական զօրեղ եռանդ ունի. նա առանց նահանջելու իւր սեղանի վերայ զոհ է մատուցանում «անձանոթին Աստուծոյ», միթէ այս անգիտութիւնը ընդմիշտ պէտք է շարունակուի:

Մեր ամենամեծ յոյսը ամփոփուած է դարաշրջանի այս հոգևոր դատարկութեան և նորա անել կացութեան մէջ: Հոգևոր մահը հոգևոր յարութեան համար նախատօնակ կարող է լինել, ինչպէս որ եղաւ 19 դար առաջ, ինչպէս որ այդ շատ անգամ է պատահել պատմութեան մէջ, երբ հազիւ առկայծեալ խարոյկից նոր զօրութեամբ է բորբոքուել քրիստոնէական հօրը:

Պատմական դէպքերի զարգացումը պարզ կերպով ցոյց է տալիս, որ սուսական դրաման կրօնական իմաստ ունի,

որը արտայայտուելով քաղաքական և տնտեսական տագնապով արմատ է բռնում ուստի ժողովրդի հոգեկան անկման և ներքին կուռլի մէջ, եւ այդ զոհերով ու փորձութիւններով լի դրաման չի վերջացել: Հիւանդութիւնը ներս է գնացել և խրոնիքական դարձել: «Խնդրեցէք նախ զարքայութիւն Աստուծոյ և զարդարութիւն նորա եւ այլ ամենայն յաւելցի ձեզ»: Մենք բացառապէս «այլ ամենայն»ը հոգալով՝ անհոգութեան մատնեցինք մարդու ներքին աշխարհը՝ պատմութեան այդ ստեղծագործական ոյժը: Եւ մենք կորցրինք հոգեւոր հաւասարակշռութիւնը և ցիրուցան ընկանք զանազան կողմեր «այլ ամենայն»ի յետևից, որը աւելի և աւելի մանրուելով՝ բաժան-բաժան արաւ և մարդոց:

Ինչպէս յիշուում է Յիսուսի և Նիկիոյի մոսի խօսակցութեան մէջ, նոր մարդը մարդկային հոգու ծոցում և ինքնաճանաչ անձնաւորութեան գաղտնարաններում կարող է ծնուել: Պատմական ստեղծագործութեան աղնիւ դործը և մարդկային անձնաւորութեան վերածնութեան հոգեւոր դործը անբաժան են, և այդ վերածնութիւնը մեր կամքի հակառակ չի կատարուում: Ճշմարիտ է ասում Գլադստոնը. «բարւոյ և չարի ընդհարումը այժմ ոչ թէ պարլամենտներում կամ ժողովրդական ժողովներումն է առաջ դալիս, այլ մարդկանց հոգիներին մէջ», և Ռուսաստանի պատմական բազմը չափուում է այն անտեսանելի ներքին կուռլով, որը տեղի է ունենում ուստի մարդու հոգու մէջ: Հոգեկան այդ կուռլին և մեզ, որոնց մէջ այդ կուռլը առաջ է գալիս, յարմարում է Մովսիսի ահարկու խօսքը— Իսրայէլի առաջնորդ նախամարգարէի հոգեհարքի մէջ արած կտակը, որը նախասահմանում է Իսրայէլի ժողովրդի երկրային վիճակը, «երկինք և երկիր վկայ եմ կոչում, կեանք և մահ, անէծք և օրհնութիւն եմ քեզ տալիս. ընտրիր՝ կեանքը և կապրես դու և կապրի բո՞լ զաւակը»:

Փոխ. Լ. Ե. Ռ. Ն. Վ. Ա. Բ. Դ. Ա. Պ. Ե. Տ.



ԷԼԻԶԱ ՕԺԵՇԿՈ

Gloria victis

(Փառք յաղթուածներին)

Թարգմ. ռուս.

I.

Սաւառնում էր հետաքրքիր անհանգիստ Գամին աշխարհի վրայ, լսում ջրերի, արտերի, ճանապարհի ծառերի, դաշտային ծաղիկների ոտտալիւնն ու պատմութեանքները և—վշտում: Նա վշտում էր ամենի մասին, ինչ որ տեսնում, լսում էր լայնատարած, ընդարձակ աշխարհի երեսին ու սլանում ... մինչև որ գալիս հասնում է ջրերով, կանաչներով ու ծառերով հարուստ այն երկիրը, որ կոչւում է Լիտովական Պօլէսիա:

Հէյ, արագապահ Գամու համար լայնարձակ, անսահման տարածութիւն, որ ծայրէ ի ծայր լեցնում էր երկինքն անարգել ու յաւէտ պահպանող հարթութիւնները: Ո՛չ մի սար և ո՛չ մի բլուր, որին զսրնուէլ կարողանար արագաթեւ Գամին. ո՛չ մի բարձրութիւն, որ արգելէլ կարողանար նրա թռիչքը. էլի մութ անտառը գուցէ մուշկուած դէմ ելնէր և անսահման ճառագայթների ու նրանց վրայ տարածուած ջրերի գլխին մի խօք շնչար—դադանիք:

Բայց անտառը Գամուց դադանիք չունի. նրանք բարեկամներ են: Գամին մուտք է գործում անտառի խորքը, ծայրէ ի ծայր անցնում է մացառուտները, որոնք պատմում են նրան ինչ որ տեսիլ, ինչ որ լսել են: Իրար գիրկն ընկած, աստղազարդ գիշերները, ձիւնաշատ, լոյս օրերը, աշնանային թխպոմած, մուշկ, անձրեւային գիշերները երկու բարեկամները երկար զրոյց են անում իրար հետ:

Այս անգամին Գամին սաւառնում էր Պօլէսիայի վրայով, երբ ամառնային արեւը թեքուէլ էր արեմուտք և նրա ճառագայթների փայլի տակ արշալոյսի պէս կարմրէլ էին մարգա-

գեանի մեխաղները, և ծիածանի գոյն հագեւ ջրերը: Դանդաղ հոսում էին ջրերը իրենց բազմաթիւ հուններով, պլպլալով մանիշակի, ծիրանի և ոսկու գոյներով... Եսկ նրանց վրայ՝ օգի մէջ հեաղհեաէ տարածուում և աճում էր խորին լուսթիւն:

Քամին չէր խանդարում լուսթիւնը: Նա այն քամիներէջ չէր, որ մոնչում, շառաշում, դղրդեցնում ու տալիսուկեր են անում: Նա այն քամիներէջ էր, որ սիրում են աշխարհը: Նա սաւառնում էր աշխարհի երեսին, նրա աւանդութիւններն ու հեքիաթները, նրա անցած դործերը, դուրս ժայթքած հառաչանքները, անցեալ պատերազմների արձագանքը հաւաքելու հաւաքելու նրա վերջին յոյսերը, ահուէի տանջանքները, նրա երգերի արձագանքները, ու տանելու հեռուն՝ տարածութեան, ժամանակին, յեշտութեան ու սրտերին...

Անցնում է արագաթուիչ Քամին ընդարձակ մարդագեւորիներին վրայով և քնքոյշ նազանքով շոյում կարմրագոյն մեխաղներն ու թրթնուկը, մեղմիկ թրվուցով ջրի երեսին ծիածանագոյն թեթեւ ալիքներ առաջացնում, երբ յանկարծ նրա առաջ բացւում է միւսներից միանգամայն աւրբեր ջրի մի այլ շերտ, որ անշարժ կանգնած է մարդկային ձեռքերով շինուած աւաղանում:

Քամին զիտէր, թէ ինչ ջուր էր այդ և ինչպէս էր կոչւում. նա կէս դար առաջ եղել էր այտեղ և այդ ժամանակից յայտնի էր նրան, որ դա արքայական ջրանցքն է: Հէյ, բաց կապտաւուն ու ներհակ ջրի շերտիկ, մի՞թէ կարող ես դու արգելք հանդիսանալ արագաթուիչ Քամուն:

Թիթեռը ծովափնեայ կանաչից դեռ չէր թռել բոշիկ (ооёка) կատարը, այնտեղ քուն մանելիս իր ոսկեզօծ թևիկները հաւաքելու, երբ Քամին անցել էր արգէն արքայական ջրանցքը և դէմ առ դէմ կանգնել լայնատարած, բարձրաբուն, ոտուերախիա ու նախշուն անտառին: Ամբողջ կէս դար էր անցել այն օրից, երբ նա թողեց այտեղը, այնուամենայնիւ նա իսկոյն ճանաչեց իր բարեկամին:

— Ինչպէ՞ս ես, ուրախ ուրցով հարցրեց նա:

Անտառը խշալլով պատասխան տուեց. Բարով, հազար բարով, սիրելի շրջափակ:

Քամին անտառ է մտնում ուրախ, զուարթ, կայտառ, թրվում է եղևինների, թխտենիների, լաստենիների ու կաղնիների մէջ, թևերով դրկում է հին բարեկամների բները՝ ողջօյնի համբոյրներով ծածկելով նրանց ճեղքերը:

— Ինչպէ՞ս էք. շշնջում ու վշիշում էր նա. — Ինչ ան-

սաք, ի՞նչ լսեցիր այսքան ժամանակ. ի՞նչ էր լինում, ի՞նչ կատարւում այստեղ՝ ձեր շուրջը:

Իսկ հին եղևնիները, թխտենիներն ու կաղնիները շարժելով իրենց տարածուած ճիւղերը՝ պատասխանում էին.

— Զրաշալի դորժեր կատարուեցան այստեղ, զարմանալի դորժեր տեղի ունեցան մեր շուրջը, բարձրահնչուն, վոթորկալից դորժեր՝ լի հեծկլտանքով, հառաչանքով ու աղաղակներով...

— Ի՞նչ, ի՞նչ էր կատարւում այստեղ, սրպիտի, սրպիտի դորժեր. անսովոր արագութեամբ մոնչում, հարցնում էր Քամին:

Չէ՞ որ հէնց դրա համար էլ գոյութիւն ունէր նա՝ երկրային դորժերը հաւաքելու և տարածելու ամբողջ աշխարհի ծայրերը, երբեմն էլ մինչև երկինք հանելու ու երկնքին ցոյց տալու...

Անտառում պրպտում էին մայր մոնող արևի ճառագայթները. լայն ոտկեղոճ դօտիներով զարդարել էին նրանք դարասուր ծառերի ըները. բազմաթիւ ճաճանչներով փայլիլում էին նրանք մամուռների և ձարխոտերի (попоротникъ) վրայ. վառում էին բացուած մասրենու սղոցեղը, սրտածէ թերթիկները:

Նառ վայրի վարդեր, խոտեր և ձարխոտեր կային այս լայն ընդարձակ, չորս կողմից բարձր, հսկայ ծառերով շրջապատուած մարդագետնի վրայ: Այստեղ՝ այս մարդագետինը մուտք դորժեց Քամին և անմիջապէս մի արտասովոր արագութեամբ այնտեղ սաւառնել սկսեց: Նա բարձրանում իջնում էր, հարց ու փորձ անում, պարտում և հազար ու մի ձայնով մոնչում:

— Ի՞նչ է կատարուել այստեղ, ի՞նչ է կատարուել այստեղ՝ այս մարդագետնի վրայ: Մի առանձին արտասովոր բան պէտք է պատահած լինի այստեղ... Ես արեան հոտ եմ առնում: Ո՛հ, երկար, շատ երկար է արձակում երկիրը իր սրբւոյց — մարդկանց արեան հոտը: Ես հառաչանքներ եմ լսում. ո՛հ, երկար, շատ երկար են մնում օդի մէջ, երկնակամարի տակ՝ նրա զաւակներին — մարդկանց հառաչանքները: Այստեղ հռիւ է եղել, այստեղ մահ է պատահել. այստեղ վէրքեր, ձիւների դոփիւն, աղաղակներ են տեղի ունեցել: Խօսեցէք, սիրելի, անդին ծառեր. առայէք, պատմեցէք, դէ՛հ, շո՛ւտ արէք, խօսեցէք:

Ծառերը լուռ էին. նրանց սոտերի միջով միայն մի կարճատե թեթև սարսուռ անցաւ, կարճեռ յանկարծակի ցրտից

առաջացած, որ տարօրինակ էր թւում այս տաք ամառային օրին:

Նոյն այդ րոպէին զօրեղ թափով, բուռն ուժգնութեամբ մռնչաց Քամին, իրար յետեւից հարցեր տեղալով.

— Իսկ այս ի՞նչ է. ի՞նչ բան է սա. սա ընտելեան ստեղծածը չէ, սա մարդու ձեռքի դործ է: Բնութիւնն այստեղ ոչ մի բլուր չի կանգնել, այս բլուրը մարդիկ են կանգնել. ո՞վ, ո՞վ է կանգնել այդ բլուրը. ինչո՞ւ, ի՞նչ նպատակով. . . Իսկ բլուրի գագաթին մանիշակները դանդաղիկները մէջ ցցուած այդ փոքրիկ խաչը. Աստուած իմ, ինչքան փոքր, հասարակ ու խղճուկ է: Ինչի՞ նշան է այդ: Պատմեցէք ծառեր, աղաչում եմ, պատմեցէք:

Այն ժամանակ բարձր, զօրեղ կաղնին, որի սաղարթախիտ կախ ընկած ոստերը կաղմել էին նրա միւրուքը, վայելչակաղմ թխտենին, ամբողջապէս ծածկուած երկար, մինչև գետին հասնող խոպոպիքներով և բարեձև վեր ձգուած եղէնին իր սուր դադաթով, փշոտ դեփտով, պատասխանեցին նրան միաբերան՝ խուլ ձայներով:

— Գերեզման է այդ:

— Որչափ մեծ, որչափ մեծ, որչափ մեծ գերեզման, զարմացաւ Քամին:

Թխտենին հառաչեց.

— Եւ խաչը այդչափ փոքր:

Իսկ կաղնին խօսեց.

— Այնտեղ ննջում են զոհաբերուած, քաջարի շատ սրբաներ . . .

— Սրտերը շատ, իսկ խաչը մէկ. կրկին զարմացաւ Քամին: Թխտենին կրկին հառաչեց. և այդչափ վո՛րբ, այդչափ խղճով:

Բարեձև, փշաղարդ եղէնին գլուխը շարժեց և խօսեց.

— Ես ամենաբարձրն եմ այս անտառում, ես տեսնում եմ բոլորից հեռուն և դիտեմ—երկրիս վրայ կան պսակուած և անպսակ հերոսներ, արձաններ ունեցող և չունեցող հերոսներ:

Ահնաժողութեամբ շշնչաց Քամին:

— Ուրեմն դա հերոսներն՝ գերեզման է:

— Անանձուն հերոսների. պատասխանեց եղէնին:

Իսկ մանիշակի խիտ դանդաղիկները, որ աճել էին խաչի շուրջը, մեղմ զօղանջեցին.

— Վաղամեռ, վաղաթառամ հերոսներն . . .

— Եւ տանջանքներով մեռած հերոսները, մրմնջաց բլրի

գաղաթիւն ըստած վայրի վարդենին ... Այդ տեսելով նա պո-
կեց իր սղոցեղը, սրտածէ թերթիկներէց մէկը և ձգեց գերեզ-
մանի վրայ:

II.

Տերեւիկը թիթեռնիկի նման ընկաւ բարձր խոտերի մէջ, և
վարդենին հառաչեց.

— Միայն ես եմ ծաղիկներ ձգում այս գերեզմանի վրայ:
Համարեա թէ կէս դար է արդէն, որ ամեն ամառ ես հոտա-
ւէտ թերթիկներս եմ ձգում նրանց վրայ ... միայն ես:

Մանիշակի դանդաղիկները կրկին զօղանջեցին.

— Իսկ մենք հնչեցնում ենք թաղման երգը. կէս դար է
արդէն, որ մենք ամեն ամառ հնչեցնում ենք այս գերեզմանի
վրայ թաղման երգը ... միայն մենք ...

Արագաթե Գամլին խոցուած փարուեց գերեզմանի բլրա-
կին և մարեց ... Մարդկանց աչքերին նա աննկատելի էր, նրան
կարող էին տեսնել միայն ծառերը, խոտերն ու ծաղիկները:

Նորա ընկերակից և թիթեղներից շինուած, թափանցիկ ու
երերուն մարմինը օձանման ոլորումներով ծածկեց գերեզմանի
բլուրը: Մայր մանող արեւի արտացոլումները հազար ու մէկ
ոսկեծածանչ կայծերով շառագունեցան: Նրանք՝ այս փայլուն
արտացոլումները, վայելիլում ու շողշողում էին նրա լայն
թիւերի վրայ, որոնք հեղուկ ընկերակի ալիքների նման իջել էին
մարդադեմանի կանաչների վրայ. նրանք վայելում էին նրա
բացդոյն դանդաղների վրայ, որոնք եղեամբից հիւստած սարդի-
ոտային պէս տարածուել էին դաշտի երեսին. նրանք փալ-
փում էին նրա վայելչակազմ ուսերի վրայ, որոնք ընկերակի
սիւնների նման ձգւում էին դէպի ծառերը ... Իսկ օդի մէջ
լողում, տարածւում էր աղբրոզ, խաղաղ մրմուռ: Խօսեցէք,
արագաթե Գամու հիւն ընկերներ: Դուք, որ դաշեր էք անցկաց-
նում սուրբ մոահողութեան մէջ և ձեր, ամպերին հասնող
կառարներով պահպանում էք անհուն, մեկուսացած երկնա-
կամարը, դժբ, երկրային գործերի մտաղբաղ վիտներ, դժբ,
անտառների անանուն, մոռացուած, անթիւ անհամար գերեզ-
մանների բաղմալեղու և միւսնոյն ժամանակ լճու վիտներ, ո՛ր,
երգեցէք ինձ այդ գերեզմանի մասին կեանքի երգը, մահուան
երգը, որ ես կարողանամ ձեր երգերը երկինք հասցնել և ցոյց
տալ նրան, ապա տանել երկրի ծայրերը՝ հեռուն, տարածու-
թեան, ժամանակին, յիշողութեան, սրտերին ...

Արեւի հրեղէն գնդի վերջին պառնկն էլ իջաւ հորեղանից ներքեւ ու անյայտացաւ: Նորա փոխարէն անառուի յետեւ բարձրացաւ բոցավառ ու ծիրանագոյն վերջաւոյսը և լցրեց անառուը հրդեհի վայլով: Օդի մէջ՝ ծառերի տերեւների, թփերի ու խոտերի վրայ, բոբբոքուող արեան կաթիլները նման փռուեցան շողացող, պայծառ լուսնի բոցավառ ու կարմիր թիթեղները:

Հին, հզօր կաղնին իր թաւ մերուքի արեան բոբբոքուող կաթիլները ցլացնելով, բաց արաւ, տարածեց իր ընդարձակ ոտները, օդի մէջ շարժեց ու այսպէս խօսեց

Եկան նորա այստեղ մի քանի հարիւր հոգով և աղմուկի բաղմամարդ բանակ դրին. նրանց զգեստները բազմադան էին և փաւրիլում բազմատեսակ զէնքերով: Միատեսակ էր բոլորի զգեստի միայն մի մասը. այդ նրանց քառանկիւնի գլխարկն էր՝ մուգագոյն կամ դաշտային աստառակաւիշի երանդով. և յատուկ էր ամենքին մի ընդհանուր գլխածածկ—երկաւարդութիւնը: Նրանց դէմքերի վրայ լիթթում, տենչեքով ու յաւիշտակուած թեամբ լի աչքերի մէջ փայլում էր ինքը՝ կեանքի դարունը, վառ, ծաղկեալ դարուն, որին դեռ չէր խանձել աշխատանքի և կռիւների աթիւ: Նրանք բանակ դրին, հիւսածոյ ոտներեց մի քանի վրաններ կաղմեցին, տռաջնորդի, լաւագոյն ձիերի, ապագայ զինուորիների համար. դարձած խորոյի վրայ իրենց համար ընթրիք պատրաստեցին և դործերը վերջացնելուց յետոյ, երբ անառուի գլխին՝ երկնակամարի վրայ, պլպլացին աստղերը, դէպի երկինք և դէպի աստղերը բարձրացաւ նրանց զօրեղ ձայների խմբական օրհներգը, որի մէջ հնչում էր բողոք, յոյս և աղբերանք: Օրհներգը մենք ծառերս խորը մտորումով լսում էինք և մեղմ սօսափելւոյով ձայնակցում: Եւ տարակուսանքով լի մեք խշշոցը շնչում էր.—արդե՞ք, ի՞նչ է լինելու, արդե՞ք ի՞նչ է լինելու:

Նրանց առաջնորդը սուրբ անուան տէր մի մարդ էր: Այդ անունն է Ռօթուալդ Տրաուդատ: Դու կասե՞ն ինչո՞ւ այդ անունը սուրբ է: Սուրբ է այդ անունը, որովհետեւ յիշելով Աստուծոյ ուխտը, թողեց նա կնոջն ու զաւակներին, հարստութիւնն ու հանգիստը, ամենը, ինչ որ դրաւում, ինչ որ ուրախութիւն է պատճառում, ամենը, ինչ որ կեանքը դրաւիչ ու հրապուրելի է դարձնում, ինչ որ երջանկութիւն ու հաճոյք է պատճառում, և իր Ժողովրդի խաչն ուսերին՝ դնաց նա այն հրեղէն սեան յետեւից, որ ընթանում է երկրի վրայով և . . .

այրուեց նրա մէջ: Նա ո՛չ այստեղ այրուեց, ոչ էլ այս դերեզմանի մէջ է ննջում: Նա ննջում է ինչ որ հեռու տեղ, ոտկայն այս դաշտն եկաւ նա այն մի խումբ մարդկանց գլուխն անցած, և մենք՝ ծառերո, զարմացմամբ նայում էինք նրան:

Հին ժամանակ, երկիրը ճնշող ստրկութեան տակ, շատ անգամ է բարձրացել այդ հրեղէն սիւնը, որը տանում է դէպի ազատութեան խոտացումած երկիրը, և մարդկանց խմբեր հետեւէ են նրան: Միևնոյն սիւնը բարձրացաւ և այս անգամ ու դարձեալ մարդկանց խմբեր դնացին նրա յետեւից: Այս խումբն էլ յիշեալ խմբերից մէկն էր, և նա առաջնորդում էր նրան:

Մենք նայում էինք նրա սեահեր գլխին, խոհուն աչքերով, մանկական ժպիտով: Նրա աչքերը լսելացի էին և թախծոտ. ըստ երևութին մարդկանց թախիժը շատ անգամ մտքի երկուսրեակն է. խի ժպիտը թարմ, մարդարտանման էր՝ խառն մանկական համ հանացի թուլութեամբ:

Նշերական նախախնամութեան աներեւոյթ մատը շատ վաղ էր օհօսել նրա ճակատը՝ խոտութիւն, երբեմն էլ դաժանութիւն արտայայտող կնճիւռներով:

Ու լսեցինք մենք նրա ձայնը, պողպատի պէս հնչուն ու հնչեղ, հրամայողական, երբեմն նոյն խի սարսափ աղբոյ: Այդպէս պէտք է հնչելիս լինէր Լէոնիդասի ձայնը Թէրմոփիլէի կերճում:

Ո՛րտեղից գիտենք մենք Լեոնիդասի մասին. մեր նախապապերին պատմել են նրա մասին արագաթե Բամինների նախապապերը, և ո՛չ որ երբէք չի իմանայ, որտեղ և ինչ կերպ են պատմում մեծ և անմահ դործերի մասին ծառերը ամպերին, ամպերը՝ աստղերին, աստղերը՝ ոգիներին. խի երգերն ու հեքեաթները, լուրերն ու պատմութեանքները լողում են ու լողում տիեզերքի պէս լայնածաւալ և յաւիտենականութեան պէս երկար...

Լեոնիդասը, Թէրմոփիլէան կերճը իր մարդկանց դիակնելով ծածկելիս հաւատացած էր արդեօք, որ ստրկութիւնը ոտք չի կոխելու յունական երկիրը. եթէ հաւատացած էր՝ ուրեմն ուրախութեամբ պէտք է կանգնէր արնոտ պատնէշը, և իր անձն էլ իրքն կնիք պէտք է դնէր նրա վրայ:

Ռոմուալդն այդպէս չէր մտածում. նա փորձուած էր Պուրի դործերում և փորձառութիւնը նրան հեռատես էր դարձրել. նա տեսնում էր, որ կռիւնների և զոհերի ցերեկուան պիտի հետեւի ու, սարսափելի գիշերը:

Այնու ժամանակն էր նա դնում էր և իր յետեւից ուրիշներ:

ընն տանուամբ: Այդչամբ մեծ էր այն Ժամանակ երկրի երեսին կանգնած հրեղէն սեան զօրութիւնը, այդչամբ ուժգին էր խոտափառած, անձկալի, ջերմ ուրուած աղատութեան—երկրի կորուստը և այդպէս ծանր՝ նրա Ժողովրդի անտանելի խաչը...

Սահայն այժմ նրա մասին չէ՛ որ պիտի պատմեմ. նրա մասին ես կպատմեմ յետոյ, կպատմեմ ընդարձակ և երկար: Մեծ անուն թողած մեծ մարդու պատմութիւնը երկար պէտք է լինի:

Իսկ այժմ ես կպատմեմ անանուն կրտսերներէց և ամենաերկտառարդներէց մէկը մասին, որը դեռ համարեաւ մանկական գլխի վերեւը կուսական ձեռքով տնկուած է այս փոքրիկ խաչը:

Հրաշալի Մայիս ամիսն էր, երբ նրանք այստեղ եկան. շուշանները փթթել էին չտեսնուած առատութեամբ: Ոչ հեռու՝ թփերի մէջ կապտադոյն հոսանքի գլխին երգում էր սոխակը. նորաբոյս խոտերն ու ձարախոտները կանաչով էին ծածկել ամբողջ մարդագետիներ, շուշաններն ու վայրի վարդերը զարդարել նրան: Շնորհիւ գարնան՝ օդը պայծառ էր, տաք և անսւշաբոյր: Նրանց այստեղ դալովը դաշտը աղմկալի, բազմամարդ և ուրախ դարձաւ: Այո՛, այո՛, իսկապէս ուրախ:

Նրանք ստրուկներ չէին, որոնց բռնի ուժով թոկերով դէպի վտանգաւոր պտտերաղմբ են քաշ տալիս: Կամաւորներ էին նրանք, որոնք յօժար կամքով սուրբ սեղանին բերին իրենց զօհը: Գաղափարական լուսով առգորուած մտքով, սիրոյ կրակը սրտերին՝ նրանք բարձր էին պահում իրենց սրտերն ու գլուխները: Համարձակ էին նրանք, ուժեղ, խիզախ ու միեւնոյն Ժամանակ կհաւատաւոր արդեօք, արագաթեւ Քամի, նրանք և երջանիկ էին: Գու պէտք է հաւատաս, որովհետեւ զու գիտես, երկիր կոչուած Ասողի վրայ մարդկային հոգիներն ու մարդկային երջանկութիւնը շատ բազմազան են, և որ մարդկային հոգին թիթեռնիկի նման սովորաբար իջնում է ընտրեալ ծաղկի վրայ, երջանկութեան այն տեսակի, որին աւելի նման է ինքը: Նրանց հոգիները իրեն է քաշում այն երջանկութիւնը, որ բարձր սարերի վրայ է ծաղկում, որ ծիրանադոյն բաժակ և փշեայ պուակ ունի:

Ոմանք այստեղ ոտով եկան, ոմանք էլ ձիով. երկիրը դուրս էր թամբած ձիերի տրոփիւնից, օղը ամեն անգամ կայծեր էր արձակում նրանց մերկացրած ուրերից, երբ առաջնորդի պողպատէ ձայնը հնչում էր.

—Շարքեր կազմի՛ր:

Առաջնորդի ընտրութեամբ հեծելազօրի գլուխն էր ան-

ցել վայելչակազմ երևատարդը սե հրացայտ աչքերով: Կազմուածքով նա երևատարդ Հերակլէս էր, դէմքով՝ Սկիպլոնն Հռովմայեցի: Այստեղից հեռու չէր նրա հայրենի տունը, որ ամբողջապէս վերեւից ներքեւ պատած էր բաղեղներով, և ամեն կողմից շրջափակուած՝ դարաւոր ծառերով և ընդարձակ պլանդատ դաշտերով: Նա դուրս եկաւ կանաչ բաղեղների միջքից, եկաւ այստեղ երեսայի հնազանդութեամբ, և սիրահարուածի պէս առաջ էր թռչում իր վայելչակազմ, տաք, արաբական նոյնի վրայ ամեն անգամ, երբ հնչում էր առաջնորդի կանչող ձայնը.

— Եադմի՛ն:

Գիշերուայ պէս սե մաղերի վրայ կարմրին էր տալիս նրա քառանկիւնի գլխարկը, ձեռքը դրած էր սրի երակակալին, իսկ զօրեղ ուսերի յետեւից լուում էր հէնց նոյն վաղեմի աներեւոյթ թւերի ազմուկը ...

Բայց իմ այս փոքրիկը, իմ այս փոքրիկը (նորան բանաւում փոքրիկ ճաւրովսիկ էին անուանում) ... Նա ոչ այնքան զօրեղ էր, ոչ այնքան գեղեցիկ, և ոչ նոյն իսկ այնքան հարուստ, որ կարողանար գալ թանկագին, շքեղ զարդարած նոյնի վրայ: Երեւ թէ հէնց այն պատճառով էլ նա իմ սիրելին դարձաւ, որ թոյլ էր, նուազ, դէմքը քնքոյշ վարդադոյն, աչքերը կոյսի աչքերի պէս շոյսղ, անհամարձակ յատակ ու կատարաւ սրպէս մանուշակ, որ երբեմն փթթում է այստեղ իմ շուրջը: Կարծ՝ նա նման էր ծպտեալ անշուշտ կամ գեռու աի պատանու. և ցերեւի՛ նա նոր էր լրացրել 20 տարին:

III.

Նորա կուսական, հեղ աչքերի մէջ երբեմն խորը մտքեր էին արտացոլում, որ նորա երևատարդութեանը չէր համապատասխանում. իսկ փարդադոյն քնքոյշ դէմքին այնպիսի վառ շողքեր էին փալիւում, կարծես՝ նորա մոնիական նուրբ կազմուածքի ներսը մի բան բռնկուելիս, վառուելիս լինէր:

Ատենք ես սիրեցի նորան դեռ ևս նախքան նորա այստեղ գալը. նորա մասին իրար հետ խօսակցում էին այս դանդուր խոտերը, որոնք իրար փարուելով ինչ որ բաներ էին շշնջում իրար: Նրանք նորա մասին շատ փառաւոր և լու բաներ էին պատմում: Ես հիացմամբ էի լսում նրանց խաղաղ երեկոների միմուռնի ժամանակ:

Նա այս երկրում չէր ծնուել, այլ ինչ որ հեռու երկրում: Այստեղ նրան բերողը այն լեռնային հեղեղն էր, որ անցնում

էր մեր երկրով և դերքի տէր անձնաւորութեանց նետում էր հասարակ մարդկանց ձեռքը և նոյն իսկ նրանց ոտներէ տակ ձգում: Ինչո՞ւ նա յատկապէս մեր երկիրն ընտրեց. այդ ես չգիտեմ, այդ կարեւոր էլ չէ ամենեւին: Խորհրդաւոր քողով քողակուած բախտը իր ձեռքին ունի կապարճը՝ լի հաղար ու մի պատահարներով, որոնցով դէս ու դէն է չպրտում մարդկանց: Նա դնդակներէ պէս խաղում է նրանց հետ երկրի ամբողջ տարածութեան վրայ և պատահարներէ լայնածաւալ շրջանում:

Նա եկաւ մեզ մօտիկ մի տեղ, այնտեղ իւր համար փոքրիկ բուն հիւսեց, որ ամեն օր լիքն էր մանկական ձայների ծելվըլոցով: Նա մենակ չեկաւ այստեղ. նրա հետ էր նրա փոքրիկ քայրը, մի աղջիկ, որ չափազանց, զարմանալու աստիճան նման էր նրան: Միևնոյն փոքր հասակն ու քնքոյշ կազմուածքն ունէր, միևնոյն դիմագծերը, դէմքի միևնոյն դոյնն ու արտայայտութիւնը: Որքան սիրում էին նոքա միմեանց: Ըստ երևութիւն նոցա բոլոր մերձաւորները մեռել էին, և նրանք ամբողջ աշխարհում մենակ էին: Միայնութիւնը սրբութիւնը և հեռու հին լսրներով. հովանաւորուած հայրենի տունը ամբասնդել էին այն կապը, որ դեռ օրօրոցումն էր կապուած: Բացի այդ, հաւանորէն այդ կապն ամրասպնդել էին նաև միևնոյն աստղերը, որոնք կառավարում են մարդկանց հակումները, ցանկութիւններն ու ձգտումները: Նրանք աշխատում էին միասին. եղբայրը սովորեցնում էր քրոջը, քայրն օգնում էր եղբօրը. և մշտ երկուսով միասին էին թէ՛ տանը, թէ՛ աւանի փողոցներում, թէ՛ անտառի կաճաններում. ե թէ՛ դաշտում: Աղջիկը տղային Մարըն էր կոչում, իսկ վերջինս նրան՝ Անելկա: Նրանք շատ լաւ էին զգում իրենց, երբ միասին էին և երկուսի համար էլ միանգամայն պարզ էր, թէ որքան երջանիկ են իրենք աշխարհում:

Շուտով սակայն անուանի փողոցներում, անտառի կաճաններում և դաշտում նրանք չընէլ սկսեցին ո՛չ թէ երկուսով, այլ մի երրորդ անձնաւորութեան հետ: Նրանց ընկերակցում էր յաճախ կանաչ բաղեղների միջից ելած յիշեալ բարձրահասակ, ուժեղ, ճարպիկ երիտասարդը, հռովմայեցու պրօֆէլոր, որը յետոյ այս դաշտավայրում հեծելազօրի առաջնորդ հանդիսացաւ: Արտաքինով սա ամենեւին նման չէր նրանց. թուում էր կարճեւ ուրիշ ցեղից լինէր աւելի կարմիր արեամբ, որին բնութեան մուրճն աւելի մեծ և զօրեղ հարուածներով էր կռել ու կոխել: Չնայած այդ բանին նրանց յարաբերութիւններն աւելի կոխել: Չնայած այդ բանին նրանց յարաբերութիւններն աւելի ջերմ ու մոեբմական էին դառնում: Բարեկամութիւն էր այդ, թէ՛ ոչ. թէ՛ երկու զգացումն էլ միասին. յայտնի չէ. միայն

Թէ վերջացաւ նրանով, որ մի գեղեցիկ օր աղջիկը կարճատե բայց յուսահատ լացով հեկեկաց, և այդ՝ շնորհիւ նոր ընկերոջ:

Պատահեց այդ հետեալ կերպով. աւանի մօտիկ անտառում, մի վայր ընկած ծառի վրայ, քոյր ու եղբայր միասին նստած, գլուխները միմեանց թեքած՝ գիտում էին մի փեարած և անաչ, որի վրայ ողորում էր մանրիկ բզէզը, երբ յանկարծ շտապ քայլերով մօտեցաւ նրանց և կանգ տուաւ յիշեալ պատանին: Նա փնտռում էր նրանց և գտաւ. նա վաղուց գիտէր, թէ որտեղ և երբ հեշտ է նրանց գտնելը. նա այսօր տարօրինակ էր, սսփրականի պէս չէր. նրա աչքերը վառւում էին արտասովոր փայլով. ու բեխերի տակից շրթունքները կարծես բոցավառուելիս լինէին. զգացմունքների մի վոթորիկ էր արտայայտում նրա համարձակ գէմբը. նա կանգնեց նրանց առաջ առանց բարեւելու. հանեց դլսարկը, ձեռքը տարաւ ու մագերի վրայով և այդ բաղուկը, մեծ ու զօրեղ, թեթեւ դողում էր . . . նրանք խիոյն հասկացան նորան . . .

— Օրն արդէն նշանակուած է.

— Այո.

— Ե՞րբ.

— Մօտաւորապէս տասն օրից յետոյ.

— Ո՞րտեղ.

— Դէտկովիչում.

— Ո՞ր մասում.

— Արքայական ջրանցքի յետեւը, Հօրեցիան անտառներում: Ապա հնչեց աղջկայ ձայնը.

— Արդէն.

Պատանին հարցրեց եղբօրը.

— Դու քո վճիռը չես փոխել.

— Դու կարծում ես իմ հոգին փոխուել է, ի՞նչ է.

— Միասին ուրեմն.

— Միասին.

— Տասն օրից յետոյ լսողեմ ինձ մօտ, ապա միասին կերթանք այնտեղ, ուր բոլորը կլինին . . .

Նրանք լռեցին. նրանց խօսակցութիւնը կտրեց աղջկայ կրծքից դուրս թռած հեկեկանքը: Դէմքը ձեռներով ծածկած, Անեւիկան հեկեկում էր, հեկեկում յուսահատ:

Անեւիկան գիտէր, որ այդ կատարուելու է, բայց, հէնց որ ժամանակը հասաւ, նա դառնապէս լաց ելաւ և նորա քնքոյշ մարմինն ամբողջովին գալարւում, դողում էր: Խառտեալ մագերը փռուել էին ուսերին, և մասների արանքով դորշագոյն զգեստի վրայ հոսում էր արցունքի կայլակը: Բայց

այդ երկար չտեսցե՛ք. նա ամբողջ ուժերը լարեց հեկեկանքը կըտրելու՝ և լռեց: Նա ոտքի ելաւ և լիարուեց եղբօր լղլին: Ամուր, ուժգին սեղմուեցով եղբօր կրծքին՝ նա կրկնում էր.

— Գնա՛, Մարքո, գնա՛.

Արցունքից թաց երեսին. ժպտը սառեց, շրթունքները ցաւից ծամածռուեցան, կարմրութիւնը դէմքից թռաւ: Նա ամեն ձեւ դարձ էր գնում զսպելու երես և իր ողորմելի հայեացքը եղբօր աչքերին ուղղելով, որ նոյնպէս արեալաբար կըլուում էին արցունքների դէմ, կրկնում էր շարունակ.

— Գնա՛, Մարքո, գնա՛, այդպէս է պէտք:

Նոյն օրը, երեկոյեան, փոքրիկ պարակլում, ուր աճում էին մի քանի խնձորենիներ և ծաղկում յասմիկները մի քանի թփեր, մեղմ շքնչում էր մարդկային երկու ձայն: Կոյսի ձայնը խնդրում էր.

— Նա հոգւով առոյգ է, իսկ մարմնով թոյլ. նա սովոր չէ ֆիզիկական վարժութիւնների . . . Մանկութիւնից ի վեր զբաղուած է դրբերով, գիտութեամբ, մտաւոր աշխատանքով . . . Անվեհեր է նա հոգւով, օտաւայն ուր է ոյժը. սերում է նա սերում ուժգին, միայն ես գիտեմ, թէ ինչպէս, բայց արդեօք կարող է նա այդ տանել: Նրա հայրենիքն այստեղ չէ, և այնտեղ էլ ոչ մի մօտիկ մարդ ունենալու չէ: Գուր երեք լիտի զգացում չէր ունեցել. այդ պարզ երևում է. դրա համար էլ չէր ըմբռնում այն ներքին յուզումը . . . որ սառցի պէս պատել է հոգիս, սուր դանակի պէս ցցուել սիրտս . . . աղաչում եմ . . . աշխատեցէք նրան մենակ չթողնել:

Երիտասարդը խօսք տուեց:

Ուր նա չունի մերձաւորներ՝ ես կլինեմ նրա մերձաւորը. ես նրա մտերիմը, եղբայրը կլինեմ և պէտք եղած դէպքում՝ նաեւ պաշտպանը: Եւ ինչպէս հեռանում ենք միասին, միասին էլ կլինենք կտրճք կիճքի, սիրտ սրտի տուած . . . Միասին էլ յետ կդառնանք . . . և կամ . . .

Լայն կրծքից դուրս թռաւ և յասմիկների բուրմունքի հետ տարածուեց մի ուժգին հառաչանք. և յասմիկն էր միայն հանդիսատես՝ թէ ինչպէս հռովմայեցու պրօֆիլով աղամարդու մի դէմք կռացաւ, և նորա բոցավառ շրթունքները տեւական ջերմ դէմք կռացաւ, և նորա բոցավառ շրթունքները տեւական ջերմ համբոյններով ծափկեցին կոյսի դողդոջ փոքրիկ ձեռները: Այդ առաջին համբոյններն էին . . . բայց մի՞թէ և վերջինը: Ապա նրանց հայեացքները թաղուեցին իրար մէջ և միմեանց աստիճանից աստիճանից շրջապատեցին: Գուցէ նրանց շրթունքները զօրէին է՛լ աւելի բան պատմել, օտաւայն . . . այդ ճգնաժամին . . . անկարող էին: Ու արդեօք հնարաւորութիւն կու-

նենա՞ն երբ և իցէ ասելու: Մարդկանց թիվունքին կանգնած է խորհրդաւոր ծածկոցով քօղարկուած բախտը և ձեռքին բռնել է հաղար և մի պատահականութիւններով լի կապարճը . . .

Թոյլ տո՛ւր մի յիւրը հանգիստ առնեմ, արագաւազ Գամի. կան մարդկային այնպիսի վիճակներ, որոնց մասին երկար, առանց դադարի պատմել չեն կարող նոյն իսկ ինձպէս զօրեղ կաղնիները: Դող է անցնում ամբողջ ստեղծութիւն, և տերևներն իրանց սառն կաթիլներ են առաջանում . . .

Սառը ցօղն իջաւ անտառի վրայ և խոշոր կաթիլներով խիտ ծածկեց զօրեղ կաղնու թաւուտ միջուկը: Գանգաղ հոսում էին նրանք թխտենու գանգուրների վրայով, արծաթագոյն փոշու նման փայլիլում էին խոտերի, թիւերի, մանիշակագոյն զանգակիկներն իրայ, փայլիլում էին վայրի վարդենու թերթիկներն իրայ, որի, դեռ քիչ առաջ սուտակի (рубина) պէս փայլող սրտիկները հանգչում մարում էին:

Նրկներն էլ էր հանգչում, մարում, որի թափանցիկ սաղարթի միջով լուսաւորուող հրդեհի արկնոտ բոցը փոխուել էր վերջալոյսի տիեզոյն, գունատ լոյսի: Նրկներն այդ գունատ տիեզոյն լծից արձակուեցան տխուր ճառագայթներ-գիշերուայ առաջին սուրհանգակները, և տաղնապալից մեղամաղձոտ տխրութիւնը պատեց անտառը . . . Սակայն գիշերը դեռ չէր իջել, և երկներ իրայ աստղերը չէին երևում. միայն տեղ-տեղ լողում էին վերջալոյսի շողերով յստակացած ամպերը, որ աւելի շուտ նման էին ոսկէ փետուրներն կամ նուրբ կարմրի:

Նրկնային սոսկեփայլ փետրիկներն տակ, օրուայ հանգչող լոյսի մէջ, իր թաւուտ կատարը շարժեց բարձրահասակ վայելչակազմ եղևնին: Գողացին և լայն բացուեցան նրա փշոտ ոտերը, և մարգագետնի վրայ՝ օդի մէջ, տարածուեց անտառի ծառերի ամենաբարձրի հպարտ և մտածկոտ խշշոցը:

IV

Ես այս անտառի ամենաբարձր ծառն եմ. իմ հայեացքն ամենից հեռուն է տարածւում, ես բոլորից շատ եմ տեսնում:

Ես կռիւներ եմ տեսել. որ տեղի են ունեցել երբեմն հեռու, երբեմն մօտիկ. երբեմն այնչափ հեռու, որ նրանց ձայնը հասել է մեզ իրբև երկնակամարի ծայրում որոտացող ամպի խուլ դղրդոց, կամ իրբև անտառի խշշոց, երբ փոթորկում, խռովում է նրանց ուլացող Քաջբարձրին:

Այստեղ՝ այս մարգագետնի վրայ, այն ժամանակ տեսնում էր Գարնանային ջերմ և անուշ սրտը խաղաղութիւնը:

Թիթեոսիկները կաշուով էին ծաղիկներին, իսկ Թեաւոր միջատները, արւել ճառագայթների շողքերում, Թուլուում էին մամուռները և խոտերը վրայ:

Սոխակն էլ իր երգն էր սկսել արդէն թիւերը վրայ, Թեւեկները, որոնց խաղաղութիւնն էր հրապուրել այստեղ, աղմուկից սարսափած մեր ճիւղերը վրայ էին ապաստարան գտնում: Իսկ այնտեղ գաղանային կատաղութեամբ, սարսափելի ջղաձգութիւններով, մարդկային դիակներ էին Թաւալուում և, կռուի աղմուկի մէջ, հրացանների ոլորտի տակ, ահա գին կայծակների հեղեղի մէջ, նրանց արիւնն էր Թափուում խոտի, մամուռի, ծաղիկների վրայ և ծծուում թնդիկներից և դոփիկներից հեծող երկրի մէջ...

Սաղայն, արագաթեւ՝ Քամի, ես չեմ կարող քեզ պատմել այդ՝ երբեմն տեսածս և լսածս գործերի մասին. ես իմ խըշշոցով յաճախ եմ պատմում երկրին՝ նրա վշտերի անմեկնելի դաղտնիքների, զուր յոյսերի, միայնակ շերտների մասին, կամ փոթորկալից գիշերները խօսում եմ ամպերի հետ մեծ գործերի, անմահ գործերի մասին:

Բայց ես մարդկային արիւնոտ կռիւներն երգել անգոր եմ. ես, անտառային խաղաղութեան բնակչուհիս, դրա հահամար չէ՛ որ ծնուել եմ. ես ապահով ապաստարան եմ թըռչողների բների համար, ես մեղմիկ ստուեր եմ տարածում այն ամենի վրայ, ինչ որ տօթից առչուրում ու կորչում է:

Ես ուրախութիւնիցս դողում էի և ամեն անգամ, երբ նրանք կենդանի և յաղթող էին վերադառնում այստեղ, ես իմ խշշոցի միջոցով գահաբանական ուխտանաէի վերառաքում երկրին:

Շատ անգամ են նրանք յաղթող վերադարձել. ու թէ ես նրանց այրուած դէմքերը յաղթութեան հպարտութիւն էին արտացոլում, այնու ամենայնիւ առաջնորդի ձայնը լսելուն պէս՝ հնազանդութեամբ շարքեր էին կազմում և լուռ սպասում նորա հրամաններին:

Նա իշխում էր նրանց սրտերը վրայ. նա գիտէր ոգևորել նրանց: Նա այդ շարքերի ուռաջ բաց էր անում իր սև գլուխը և շնորհակալութիւն յայտնում նրանց, որ երեխայի պէս հնազանդ և առիւծի պէս անվեհեր՝ չցրուեցան գերադանցող ոյժի առաջ և ամօթով չժածկեցին իրենց ուսերին վերցրած խաչը: Բայց այդ շնորհակալութիւնը յայտնելիս էլ, նրա ձայնն իբրև մարտի կոչ էր հնչում, և չուներ այդ ձայնը չ'է քնքշութիւն և ո՛չ փաղաքշանք. այլ արտայայտում էր վճռակոխութիւն և երկաթի կամբ: Այդ հեզ և խիտ շնորհակալութիւնից նրանց՝

արեւից այրուած, վառօղից խանձուած, լիոշով ծածկուած դէմքերի վրայ չքնաղ ուրախութիւն էր բռնկում:

Եւ ապա... պատմուածքներ, աղմկալի խօսակցութիւն, անուշաբոյր ծխով խարոյկներ, ձիերի ուրախ խրինջոց, մամուռների և խոտերի վրայ խաղաղ, հանգիստ, ասաղերի լոյսի տակ մեղմ երգեր և խմբական երգի խուլ ձայներ, որոնք բոցավառ հնարանդութեամբ բարձրանում էին դէպի Նա, Որ ասաղերից վեր է դանւում:

Մեր փոքրիկ Տարլովսկին էր միայն. որ համարեա թէ չէր մասնկացում ընդհանուր խօսակցութիւններին և հանաքներին: Նա անհանգիստ և լրդովւած մտածում էր անդադար, կարծես թէ նրա հոգին ճօճուելիս լինէր կասկածներով, հարցերով, դադանքներով լի անդունդի վրայ:

Աստղերը պտպալալուն պէս նա պառկում էր այդ թխտենու տակը և երբ բոլորը արդէն քուն մտած էին լինում, նա դեռ ևս երկար ժամանակ արթուն էր մնում:

Սիւղբում մեղանից և մէջ մի ծառ չէր ըմբռնում նրա յուզմունքն ու վիշտը. առաջինը՝ ես հաճացայ նրան: Նա դրա համար ծնուած չէր. ինչպէս և ես... Ես յաճախ եմ խօսում երկներ ճեմ մեծ գործերի՝ անմահ գործերի մասին. իսկ մարդկային արիւնալի կռիւները վառաբանելու համար ես ոտեղծուած չեմ... Նա ևս, որ բուռն սիրով սիրում էր ընտելեան հանճարն ու մարդկային վեհ միտքը, ստեղծուած չէր այս արիւնալի կռիւների համար. նա ինչ որ այլ բանի համար էր աշխարհ եկած :

Ես մօտիկից էի ճանաչում նրան. ես լաւ գիտէի նրա մտքերն ու հակումները, շշնջաց թխտենին, որի երկար, սաղարթախիտ գանդուրները մինչև գետին կախ ընկած տեղ-տեղ արծաթի պէս լիայլիլում էին երեկոյեան ցօղից, իսկ սպիտակ թափանցիկ քաթանի զգեստի միջով արտացոլում էին երկար գանդուրները:

Նա ստեղծուած էր այն մտքերի համար, որ պատմում էր իր ընկերոջ այն միջոցին, երբ բոլորը քուն մտած՝ իսկ ինքն արթուն պառկած էր լինում իմ ոտների տակ՝ փարթամ կանանչի վրայ:

Քուն չունէր նաև նրա ընկերը. նրա աչքերից քունը հալածուած էր այն հսկայական առեղծոածի մտածմունքով, որի մէջ, որպէս արնոտ ուրդոտայնում, խճճուել էին թէ՛ այս երկիրը և թէ՛ նրա լաւագոյն գաւառները. խանդարում էր նրա քունը գուցէ նաև հեռու՝ հաւանօրէն կարօտող գուցէ և լա-

ցող, Անէլիայի մտածմունքը: Նա եկաւ Անէլիայի եղբօր մօտ
և, երկար ժամանակ, երեւները իրար դարձրած, պառկած էին
նրանք իմ ստներէ տակ: Գիշերային լուսթեան մէջ նրանք
հանդարտ խօսում էին, այնպէս հանդարտ, ինչպէս իմ գան-
գուներն են արտառում, երբ մայիսեան գիշերային անձրևի
կաթիլները թեթեւ լաշշոցով խոտի վրայ են գլորւում նրանց
վրայից:

Լուռ էր. բանակի մի ծայրում երբեմն ձին էր խրինճում,
մըւում մերթ ընդ մերթ քնած մարդու կրծքից խուլ ձայն,
կամ ծանր հառաչանք էր գուրս թռչում: Վերջին կուռում
վերադարձներէ մէկը հեծում էր կաշնու տակ՝ ճիւղերից
հիւստած վրանում: Իսկ մարդագետիւնը պատող ծառերի յե-
տեւ, աստղերի թոյլ լոյսով լուսաւորւած տարածութեան
վրայ, երևում էին ղինուած և անշարժ կանգնած պահակների
կերպարանքները:

Շնկերները զրուցում էին, իրանց աստղերին նայելով, այն
հեռու գալիք օրերի մասին, որանց գալը դեռ հաստատ չէր և
որոնք եթէ գան՝ կողողեն երկիրը սրբութեան և հանգստու-
թեան ջրերով . . .

Կարօտով և յափշտակութեամբ, բուռն ոգևորութեամբ
էին խօսում նրանք աշխարհի ապագայի մասին, որը, հարիւ-
րաւոր տարիներէ կուլներէից, չարութիւններից և տանջանք-
ներից յետոյ, փոխուելու է համաձայնութեան, սիրոյ և ուրա-
խութեան դրախտի:

— Թէև կուռի առարկան անշարժ թանգ և սուրբ է, բայց
այս կուռում թափուած մարդկային արիւնը իրեւ թոյն է հո-
տում երանքների մէջ և հաոցրած վէրքերը հաոցնողներին վէրք
պատճառում: Զայրոյթը, ցաւն ու մահը այն ուրուհներն են,
որոնք սնում են մարդկային յուսոյ, երջանկութեան և ուրա-
խութեան դիակներով: Մարդկային չափ ցեղ, որ ինքն իր դէմ է
սրում իր ճիրանները. խեղճ ցեղ, որ այգչափ քիչ է ապրում,
որի զաւակները փոխադարձաբար կարծում են իրար. կեանք
Դժբախտ ցեղ, որ ամեն կողմից վառնգւած է, որի զաւակ-
ները փոխադարձաբար ուղառնում են իրար իրանց մարմնով և
մտքով: Ո՛հ, երբ վերջապէս կփոխուի այս ամենը, և կփոխուի
արդեօք երբ և իցէ: Ինչո՞ւ ես աւելի ուշ չծնուեցի, երբ աշ-
խարհը փոխուած կլինէր, կամ աւելի վաղ, երբ անկարող կլի-
նէի նախատեսել, որ աշխարհը կարող է այլ կերպ լինել . . .
եթէ այլ կերպ լինէին մարդիկ:

Բոսկաւիան լուսթիւնից յետոյ նա ախուր ժպտավ յի-
շեց հին բանաստեղծի ոտանաւորը:

Աւանդութիւնն ասում է, որ Պրոմէթէոսը նախնական կառւի մէջ, որ մարդկային բնութեան հիմք է ծառայում, ածեց ամեն դադարի յատկութիւններից մի մի կաթիլ, իսկ մարդու սիրտը համեմեց դայլի ագահութեամբ և առիւծի կատաղութեամբ: Ահա թէ ուր է զայրոյթի և վրեժառութեան այն բռնկումները պատճառը, որոնք սոսկալի տանջանքներով դեղում են մարդկանց դէմքին. և ահա թէ ինչն է պատճառը, որ հոյակապ շինութիւնները փլատակների են փոխւում և թշնամու զօրքերը նուաճուած քաղաքների ամրութիւնները դուրսնով վարում՝ արտի են փոխում:

— Հօրացնողը հարցրեց խօսողի ընկերը, և նայն բոլորին զօրեղ բազկի ուժգին շարժումով ոտի ելաւ.

— Նուաճուած քաղաքների, կրկնեց միւսը՝ և բացականչեց.

— Այժմ այլ կերպ լինել չի՛ կարող. . . նուաճուած քաղաքների. . . Այժմ կռիւը մի պարտականութիւն է. . .

Մեղմ ձայնը հնչեց ի պատասխան այդ բուռն կոչի, հնչեց վճռական և համուղուած ձայնով:

— Այժմ այլ կերպ լինել չի՛ կարող: Քանի բռնութիւնը գոյութիւն ունի, այնչափ սուրբ է զայրոյթը ընդդէմ բռնութեան. քանի անարդարութիւն է, այնչափ պիտի շարունակուէ կռիւը: Արեան և մահուան միջով, յուսալից կամ անյոյս, կռիւ պէտք է մղել երկրային դժոխքի դէմ յանուն երկրների, որը աշխարհ է իջնելու:

Այդպէս էին խօսում նրանք յաճախ գիշերային մթութեան մէջ, երբ բանակը քուն էր մտած, իսկ բանակի շուրջը աստղերի թոյլ լոյսով լուսաւորուած տարածութեան վրայ երևում էին զինուած պահակների սև կերպարանքները:

Վերջապէս հասաւ օրը . . . թխտենու շնջիւնը հեռագհատէ ավելի և ավելի էր մեղմանում. վերջապէս. . . կարուեց: Նորա փոխարէն խօսեց միութեամբ զօրեղ կաշնին.

— Վերջապէս հասաւ սարսափելի օրը: Լուր բերեց հեռուոր գիշերային խուզարկու պահակը. . .

Բացի բանակի շուրջն եղած մօտիկ պահապաններից նրանք ունէին նաև հեռաւոր գիշերաշրջիկ պահակախմբեր, որոնք լուրեր էին հասցնում այստեղ, տեղեկութիւններ, և նախադրուշայնում: Նրանց այստեղ լուրեր բերելը յիշեցնում էր առասպելական թագաւորադնին, որ, փամպկներով լի տափտակոտ թփերի և ահռելի դրակոններով վիտայցիք ճահճային եղէգնուտները միջով, առաջ է որսնում դէպի կախարդուած թագուհու դղեակը: Այդ սուրհանգակները երբեմն կարուտի

էին մատնուում վամպիրները գրկում կամ դրակոնի երախում, երբեմն էլ հասնում էին իրենց նպատակին:

Հեռուից լսելի էր արդէն անտառի միջով արշաւող ձիու զուլիւնը:

— Պարօշն ի՞նչ է:

— Յուսի՛վ կամ անյոյս:

Մարդագեանում՝ երեսը քրախնքով ծածկուած ուժասպառ ձիու վրայ երևաց երկատարի ձիաւորը: Միջօրէի սթըրտոյնում էր նրան: Մի քանի հոգի միաձայն բացականչեցին:

— Հա՛, Կալիստն է, Կալիստը: Հը՛, ի՞նչ կայ:

Բայց հեծեալը ողջոյնի, պատասխանի ժամանակ չունէր. նա անմիջապէս ցած թռաւ ձիուց:

— Ո՛րտեղ է հրամանատարը. շո՛ւա արեք, տարէ՛ք ինձ նրա մօտ. հրամանատարի աղիւտանտն ու ռազմական պօստի սուրհանդակը միասին մօտն առաջնորդի վրանը:

Բանակում լռութիւն տիրեց: Այգպիսի արտաքուստ խաղաղ, իսկ ներքուստ դղրդացող լռութեամբ համակուած է լինում ընտելիւնը լիթորիկի նախալայրկեանին, որը վրայ է հասնում մըրիկներով և շանթի հարուածներով:

Շուտով առաջնորդի վրանը մօտն նրա հրամանով հեծելազօրի հրամանատարն ու երկու ուրիշ ընկերներ, որոնք քիչ թէ շատ լիործուած էին ռազմական դործում: Սկսուեցաւ խորհրդակցութիւնը:

Երկար սպասեցին: Վերջապէս Ռօմուալդ Տրաուդուարը դուրս եկաւ վրանից և բոլորին յայտնեց ստացուած լուրերի մասին:

Այդ լուրերի մէջ լսուում էր մօտիկ կռուի ուրաւ... Մահուան հոտ փչեց:

Մօտենում է ահագին ղօրքը, չորս կողմից շրջապատում անտառը: Նրա հետեակ և ձիաւոր շարքերը աղմկալից գետերի նման ողողում են անտառը: Ծառերի անտառի միջով շարժւում է աէգերի, հրացանների, սուլինների անտառը: Մի երկու ժամից յետոյ նրանք այստեղ կլինին: Սուրհանդակն այդ լուրք ըբեց երկար, դժուարին ճանապարհներով, բայց այնու ամենայնիւ էլի ժամանակին ըբեց: Հարիւր հրացան մէկ հրացանի հարիւր նիզակ մէկ նիզակի դէմ: Այդպէս է հեքեաթների մէջ. սակայն նոյնը պատահում է և իրականութեան մէջ: Երկիւղ կը կրէն արդեօք նրանք այդ իրականութիւնից: Սակայն ուղքեր են նրանք. չէ՛ որ նրանք թոկի ոյժով կռուի արեան դաշտը քաշ տուած ռարուկներ չեն. նրանք կամաւորներ են, որոնք, ուրախութեամբ են մատուցանում իրենց զոհը բարձր սեղանին:

V

Նրանցից անբաժան է սխրագործութեան և զոհողութեան ոգին, անբաժան է և այն սիրոյ ոգին որ նրանց այստեղ մղեց: Մեռնողները իրենք սերմանող կլինին, որոնք իրենց իբրեւ հատիկ կնետեն հողի մէջ տալագայ հունձի համար: Ո՛չ մի բան ի զուր չի կորչում: աշտօրուայ պատնէշները վաղուայ յաղթողների համար կաճեն՝ ղէնք և պաշտպան կռառնան. նրանք կլարեն իրենց բոլոր ոյժերը. իրենց անվհեհեղութեան, սխրագործութեան տոկունութեան ամբողջ եռանդը, որպէս զի յաղթեն թշնամիներին. նրանց մարտական կոչը կլինի՝ յանուն հայրենիքի և Աստուծոյ. այդ հոգով նրանք կնետուն կռուի մէջ — կամ յաղթութիւն կամ մահ:

Այդպէս խօսեց առաջնորդը. նրա հնչեղ, կարճ խօսքերը ծայրէ ի ծայր լցրին ամբողջ բանակը. այդ խօսքերը հեաղհեաժ աւելի և աւելի զօրեղանում, աւելի և աւելի կրակ ստանում և շանթերի նման թափւում էին շքապատողների գլխին. մինչև որ վերջապէս նրանք մարգագէտնի ծաղիկների նման ալեկոծուեցան, և հարկւրաւոր լայնացած կրճերից դուրս թռաւ ցնծութեան մի զօրեղ աղաղակ:

Այնուհետեւ զըզաց, եռաց ամեն ինչ. ձիերի թամբերը, ղէնքերի մաքրելը, զօրախմբերի կոչը, շարքերի կազմելը, բարձրաձայն հրամաններն ու մեղմ կարգադրութիւնները... Կեանքն եռում էր, հնչում էին ձայներ, լսւում էին սմբակների գոփիւն. ղէնքերը փայլիւում էին արթ և արեւի լոյսով լի օդի մէջ:

Ռազմական պոստի ուղեւորանքակը պէտք է վերադառնար նոյն երկար և դժուարին ճանապարհով: Սահայն նախ քան ճանապարհ ընկնելը՝ նա կանգնացրեց իր ձին արդէն կազմուած հետևակ շարքերից մէկի առաջ և, «Քրոջից», կարճ խօսքն արտասանելով, յանձնեց ամենից մանկահասակին մի փոքրիկ իր, այնչափ փոքր, որ դժուարութեամբ կարելի կլինէր նկատել:

Դա մի փոքրիկ թղթի կտոր էր, ամբողջապէս գրուած և այնպէս փոքր ծալուած, որ հարկաւոր ղէպքում հեշտութեամբ կարելի լինէր կուլ տալ: Այն ժամանակ զրոյց այդպիսի՝ նամակներ էին ուղարկւում բանակը:

Հեծելազնդի հրամանատարը արաբական ղեղեցիկ նժոյգը տակին անցաւ Տարլովսիու մօտով և գլխով նշան անելով՝ հարցրեց.

— Պաննա Անէկայից է.

Նրանք փոխադարձաբար իրար նայեցին և երկուսի երեսին էլ ժպտը խաղաց: Դա մի ծաղիկ էր հեռուից կոյսի ձեռքով

նեառուած այդ բաց շերիմներն վրայ: Ի՞նչ էր գրել նա. այդ ըոպէին եղբայրը չլմացաւ: Բարձրաձայն հրամանը հնչեց, և նա շտապով թաղցրեց թղթիկը իր կրծքի վրայ. կլմանայ արդեօք երբ և իցէ նա այդ թղթի բովանդակութիւնը:

Ապա նրանք նախկին կարգով, խորը լռութեամբ շարժուեցան այդտեղից: Դատարկացած մարդագետնի վրայ մնացին միայն կոխորտուած խոտը, մեռնող ծաղիկներն ու դատարկ վրանները: Իմ ոտներն տակ դանսուած վերաւորներն վրանն էլ նրանց մեկնելու այդ ժամին նոյնպէս դատարկ էր, ինչպէս և միւսները. սակայն շուտով նա նորից պէտք է լցուէր:

Ծրագիրն ըստ երեւութին վարպետօրէն և խիստ ճարպիկ ձեռով էր կազմուած. պաշտպանութիւնը տեղի պիտի ունենար յարձակման հետ միաժամանակ: Դարան մտածները թագ էին կացել աչքի համար աննկատելի անտառի խիտ մասում. խոկ աւելի բաց տեղերում ամեն մի ծառի յետեւը թագ էր կացած հրացանի խողովակ. մամուռի, ձարխոտի ամեն մի ծածկոցի տակ, ամեն ստուերախիտ ճիւղերի մէջ թագ էին կացած մերկացրած սրեր:

Տարօրինակ տեսք ունէր այդ ամենը. ասում եմ քեզ, արագասլաց քամի, դա մի տարօրինակ տեսարան էր. մօայլ լռու սպասողութեան մէջ քարացած դէմքեր էին դրանք, ծաղիկներով զարդարուած անտառի կանաչի՝ սօսիների մայրսեան ընձիւղների մէջ. այն սօսիների, որոնք անշուրջ տօթի լռութեամբ վեր էին բարձրացրել իրենց պայծառ երկճիւղ շիւղերը:

Օդի մէջ չէր լսուում թռչունների ծլվլոցը. նրանք վախել էին երկիւղից, և միայն մի քանի հարկը մարդկային կրծքերի բուռն և անհանդիստ շնչառութիւնն էր զգացուում:

Վերջապէս անտառի խորքից մօտենալ սկսեց հեռզհետէ աւելի և աւելի մեծացող աղմուկը. Նա՛ այդ աղմուկը, մեծանում, մօտենում էր, զօրեղանում էր հեռզհետէ աւելի և աւելի. թռում էր թէ օդի միջով թռչելին, կամ անտառի միջով՝ դեանով սողոսկելիս լինէր մի ինչ որ սարսափելի բան.

Բայց դեռ ևս ոչինչ չէր նկատուում.

— Ուշադրութիւն, դէնքը դատարարներ:

Այս մօտիկ, հէնց քամակիս արձակումս՝ հրամանին հետեց հեռուից մի ուրիշ կտրուկ և հրամայողական ձայն:

Եւ արդէն նկատելի դարձաւ.

Դորձագոյն ահագին մասսան դժուարութեամբ, դանդաղ կերպով շարժուում էր խիտ ծառերի միջով, մացառի ճկուն ոտներով ծածկուած ու ոլորուն բոյսերի ցանցով սլաքած գետնի վրայով. նա դժուարանում էր ուռաջ՝ անցնել. նրա քայլերն

աղմուկէն մէջ լուռում էր կոտորատուող ճիւղերէն ճարճատիւնն ու կայնի հարուածը:

Վերջապէս բոլորովին պարզ տեսանելի դարձաւ... եւ ապա... ծառերի յետեւը, թփուտներէ մէջ բախկեցին, թընդացին յաճախակի, առանձին, իրար արագութեամբ հետեող հրացանաղարկէր. վայրկենապէս ցրուել սկսեցին ծառերի և թփուտներէ մէջ կարճ հրային կայծերի ամբողջ փնջեր:

Շարժուող գորշագոյն մասոյցի կողմից ի պատասխան թնդաց և դղրդաց զօրեղ տեւական հարուածը, և անմիջապէս բարձրացան այգաեղից ծխի թանձր քուլաներ: Բաւականին տարածութիւն բռնած հատ ու կտոր հրացանաձգութիւն ներքին պատասխանում էին խմբական ծանր ռազմական համադարկերը: Դա երկու բոլորովին տարբեր սրտաների խօսակցութիւն էր. և այդ հնչիւնների երկիւղից դողում էին անտառի ամենազօրեղ ծառերը:

Արդեօք երկուք տեւեց այդ Այո՛ երկար, ժամերը սահում էին իրար յետեւից:

Ամեն անգամ՝ երբ ծխի եթեր ծովը մի րոպէ երկու մասի էր բաժանւում, երկու կողմից էլ հեռւում և մօտիկ երեւում էին մարդկային կերպարանքներ ու ստուերների պէս ընկած մամուռներ և գանգուր կանաչների վրայ:

Երկու կողմից էլ դիտկներ էին գլորւում. ոտկայն դիտիչ էին ըստը ընկածները: Այստեղից ոչ հեռու պոստերի մէջ ընկաւ ու ձգուեց փոքրիկ ճարլովակին. բայց նա դեռ կենդանի էր...

Կռուի հէնց սկզբից, մի ծնկան երկճիւղ լաստենու յետեւ տեղաւորուելով՝ նա լցնում էր հրացանը մոլի, արագութեամբ և ռազմական կեանքում ձեռք բերած հմտութեամբ: Կարճես նա երբէք չէր էլ մտածել այն ժամանակի մասին, երբ աշխարհի վրայ պիտի թագաւորէր յաւիտենական խղաղութիւնը. կարճես նա երբէք բանաստեղծի բերանով չէր նղովել մարդու սրտի մէջ կաթեցրած առիւծային կատաղութեան շիթը... Ինչ որ առիւծային կամ վագրային բան էր փայլում նրա հրալու կապոյտ աչքերում և արապողում էր նրա լարուած ուշադրութիւնից կնճռոտած դէմքին ու յամառութիւնից դաժանացած ճակատին:

Յանկարծ ծխի գորշ քուլաների միջով, սև մեղուի պէս մի բան վրայ հասաւ և մխուեց նրա ձեռքը: Նա փորձեց ոտի կանգնել... երբեք և ընկաւ բարձր պուտերի մէջ: Սակայն դա կենդանի էր. և մի քանի րոպէից յետոյ երկու զոյգ զօրեղ բաղաւկներ բարձրացրին սրան արնեշաղախ պուտերի միջից և

տարան իմ ոտները տակ գտնուած վրանը: — Վրանն այլ ևս գատարել չէր:

Կանաչ ոտներէց հիւսած բարձր ծածկի տակ, մամուռի և պուտերի փուռածքի վրայ, պառկած էին մի քանի տառնեակ մարդիկ. սե մեղունները նրանց մէջ էլ էին խրել իրենց խայթոցները: Երկու հոգի, հոգատար դէմքով, քրտինքը կաթիլները ճակատին շարունակ կռանում էին մէկից միւսին անցնելով. դրանք զօրաքանակը բժիշկներն էին:

Այդ միջոցին տօթը մարգագետնի շուրջը աւելի ևս ոտոտ կանում էր. հրացանները կրակը հետզհետէ աւելի արագանում, տեական դառնում ու խտանում էր: Մարդկային գորշ մաստան այնքան մօտ էր արդէն, որ հասարակ աչքով կարելի էր որոշել առանձին կերպարանքներ, դէմքեր զգեստ ու գէնքեր: Անշեղ, անյողգող հաշտառութեամբ նա աւելի էր կորացնում իր կիսաշրջանը, հետզհետէ շրջափակում մարգագետինը և առաջ շարժւում: Երկու կողմն էլ արդէն իրար են հանդիպել երես առ երես, և կուրծք կրծքի տալով կռուի բռնուել:

Հետզհետէ այոտեղ ամեն ինչ աւելի խտանում, սոսկալի, արիւնոտ և կատաղի դառնում...

Իժմիք, առում եմ քեզ, արագաուլաց Քամի, մի զարհուրելի դժոխք էր եռում այոտեղ, այս խաղաղ, անուշաբոյր, ծաղկալից կուսական անտառի զրախտում... Մարդկային դժոխք...

Քուռ էր՝ այոտեղ կատարուածից աւելի ուրսափելի քան լինել չէր կարող ամբողջ երկրագնդի վրայ. և ոսկայն...

Եթէ դո՛ւ, արագախաղաց Քամի, դիտում ես մարդկանց, երբէք մի՛ առա, այս ինչ տեղ է նրանց եղբրականի սահմանը. որովհետեւ ամբողջ աշխարհում ոչ ոք չի կարող գուշակել կամ գտնել այն ամենաբարձր մակերեսութիւնը, ուր հասնել կարող է նրանց եղբրակներ, նրանց սնրագործութիւններն ու անզուգական տանջանքները:

Եւ ահա...

Ի՞նչ լաստենիներ և բարդիներ յետեւից հէնց այն, տեսնում ես, դիմացի աճող բարդու քամակից, թիւումները միջից երեւաց հեծելաժօրի մի գունդ, գլխավերեք երկար սուրճից անտառ կաղմելով, ձիերի մէջքին կախած՝ սուր ճիւղ քաղելով, նրանք ունենում էին դատարկ դաշտի միջով դէպի այդ վրանը: Տեսնելով մարդկանցով լի վրանը նրանք ուղիղ այնտեղ դիմեցին: Այնտեղ պառկած էին ուժից ու գէնքից ընկած վիրաւորներ, և նրանց գլխին կռացած աշխատում էին բժիշկներ:

Սուրեններով զինուած արագընթաց ձիերի վրայ կռացած ունում էին ձիաւորները սուր ճիչ արձակելով, ռազմական վառօդից խանձուած դէմքերով, և... առիւծի կտաղու-թիւն էր եռում նրանց երակներում..

Յանկարծ յետեւիցս հնչուեցաւ կռուի աղմուկը խլացնող պողպատի ձայնը.

— Վերուորներին օգնութեան, յառաձ հեծելագունդ:

Մի տկնթարթում իրենց ղեկավարի առաջնորդութեամբ հեծելագունդը դաշտ դուրս ելաւ: Դժոխային ծխից սևացած, յոգնած ձիերի վրայ, հեծեալները ծառերի ու թփուտների յետեւից դուրս թռան և մերկացրած սրերը բարձրացրած նրանց դէմ ընթացան. . .

Արեւն արդէն արեամուտք էր թեքւում և ծխի միջով շեկացած պղնձի կէտի կարմիր լոյս էր արձակում: Մուգ կարմիր, մարած ու մռայլ լոյսն ընկել էր արշաւող ձիաւորների վրայ լուսաւորում էր նրանց արեառ դէմքերն ու մերկացրած սրերը: Այդպիսի արեւի ճառագայթներով լուսաւորուած՝ նըրանք հասան թշնամիներով շրջապատուած վրանք: Զիւղերից հիւսած բարակ պատը խախտուել էր արդէն, սարսափելի նեղուածք էր տիրում, սարսափելի ողբ ու կոծ էր հնչում: Ամբողջ թափով ճեղքեցին ամբոխը, աջ ու ձախ սրի հարուածներ, ատրճանակի տրաքոցներ տեղալով: Հեծելագնդի սևահեր առաջնորդը, նման հրեղէն սուրը ձեւին Հրեշտակին առաջինը խուժեց վրանը և... կանգ առաւ, կարծես ձին դետին միտուեցաւ:

Աստուած իմ, վրանում այլ ևս չկային ո՛չ վերաւորներ և ո՛չ էլ բժիշկներ. կային արնաքամ դիակներ, որոնք նորանոր վէրքեր էին ստանում. նրանցից ոմանք շունչը փչել՝ մըւսները դեռ ևս խռաացնում էին հողեարբի ջղաձգութիւնների մէջ: Մեռնողների այս կոտորածի դաշտում իր շունչն էր փչում նաև վերջինը: Մի քանի սուրիների ծայրին ցցած, օդի մէջ բարձրացրած, իր՝ թաշկինակի պէս սպիտակ, դէմքը դէմ էր արել փոքրիկ Տարլովսիկին արեւի մուգ կարմիր փայլին: Այս նահատակ դէմքը մարող աչքերով, կարմիր արնոտ շերտով ոսկեգոյն մաղբերից սկսած մինչև ջղաձգաբար ծամածռուող շուրթերը, այնուամենայնիւ ճանաչեց իր ընկերոջը: Մեռնողը բազկի արագ շարժումով գցեց նրան մի կարմիր բան, իսկ մարող ձայնը կանչեց.

— Եադմէն, քրո՛ջս.

Վերջին նուէրը, վերջին մոռածմունքը, վերջին խօսքն էր այդ: Կարմիր թռչունն պէս իջաւ արնեշաղախ թաշկինակը

հեճեւադնդի առաջնորդի լայն կրճքի վրայ. նոյն այդ քաղէին նրա տակի դնդահահար ձին գլորուեց, ինքն էլ անյայտացաւ ժլորի, ծխի, աղմուկի, արաքոցների սրտի հրեղէն կայծերի հեղեղի մէջ ...

VI

... Դադարեց մերսւքաւոր կաղնին խշշալուց և գիշերային խաղաղութիւնը պատեց մարդագետիւնը: Իջաւ մուայլ, բայց ոչ խաւար, պարզ, աստղալից մայիսեան գիշերը:

Գերեզմանաբլրի, բարձր խոտերի վրայ հանգչում էր Քամին. նա այնպիսի թեթևութեամբ էր հանգչում, որ տակի բարձր խոտերը չէին կռնում գետնին: Աղէտոչոր կճկուել էին նրա լայն թևերը և տխուր գետնին փռուել նրա, արժաթի թելերով հիւսուած մաղերը: Նրա բիւրեղ մարմնի երկարաւուն ոլորտների մէջ մեղմ արտափայլում էին աստղերը, և այդ արտափայլումներից միայն մէկն էր, որի փայլը հետզհետէ անձնով, զօրեղանալով, փոքրիկ կրակի փոխուեցաւ, որից հալուել ոկոսեց նրա կրճքի բիւրեղը:

Նա՛ արաքաւարաց Քամու կրճքի բիւրեղը, հալուում էր բոցավառուող կրակից և հոսում էր բարձր խոտերի վրայ մեղմ սօսափիւնով, այնպէս մեղմ, ինչպէս թխտենիներն են լալիս, երբ նրանց վրայից գետնն են գլորուում մայիսեան գիշերային անձրևի կաթիլները: Այդպէս էր ողջում Քամին անտառի անանուն, մուսայուսծ, անյայտ գերեզմանի վրայ:

Եւ խոտերի միջից մեղմ շշնջաց նա.

— Իսկ այդ փոքրիկ խալը:

Գետնի երեսով սահող մեղմ զողանջը պատասխանեց նրան.

— Մենք մանիշակի փոքրիկ զանգակիկներն ենք կարեկցութեամբ զովոցընք այդ կոյսի այրուող երեսը և ծծեցընք նրա աչքերից հոսող արցունքը:

Տարիներ յետոյ, ուշ աշնանը եկաւ նա այստեղ փոքրիկ, ախուր. և բլրի ստորոտում երեսի վրայ ընկաւ դեղնած խոտերի մէջ:

Խեղճ դէմք, նա՛ այլ ևս առաջուայ պէս սպիտակ ու քնքայլ չէր. կեանքը քամել էր նրա սպիտակութիւնն ու քնքեղութիւնը: Խեղճ կեանք, մեղ յայտնի չէ ինչ էր անում նա այնտեղ՝ լոյս աշխարհում. բայց նրա ձեռները ծանր աշխատանքից կոշտացել էին, աչքերն արտայայտում էին թախծատ գուն միայնութիւն:

Խեղճ ձեռներ, որ երբեմն ջերմ համբոյրներով էին ծածկ-

ւում, ինչո՞ւ աչքեր, որ երբեմն նման էիք եղբօր հապոյտ, հուստիան յոստի աչքերի:

Նա ննջել էր յաւերսեանական քնով այս թմբի յատակում, կրծքին այն պաղուենքը աճիւնը փռելուցած, որ հոյսի վերջին հրաժեշտն էր:

Միւսն էլ...

Կոյսն ընկած էր թմբի վրայ, սպրտուն, գէմբը դեղնած խոտերին սղփած, ծածկելով դեռինը իր հնամաշ զգեստով: Այստեղ այդ ժամանակ ծաղկիներ չկային. չէ՞ որ աշուն էր, ուռը տերեւներն էին միայն ծածկում նրա՝ ջերմ արցունքից շերտացած գէմբը ու ծծում այդ արցունքները, որոնք անզաղ-ըստ հոսում էին նրա աչքերից:

Երկուր, շատ երկուր նստեց նա դեռինի վրայ, և վերիկ-նալուռ մեր ցաղունների մէջ խրեց իր հեռ բերած այս փոքրիկ խաչը: Այդ նրա փոքրիկ պատկերն անյայտապաւ երեկոյեան ազնամուղջին այս դեղնած ծառերի մէջ, և նա այլ ևս երբեք չվերադարձաւ այստեղ.

... Այդ կրկին խոսեց միբուքաւոր, հզօր Կաղնին.

— Տարիները սահում էին իրար յետեւից...

Ամեն դարձան թռչունները երամներով թռչում գալիս էին այստեղ: Եւրաբանները դարուն սկիւռները ցատկաւոր էին եղևնիները վրայ և կանաչների մէջ վազվզում. սողում ու թռչկոտում էին մանրիկ միջատները, բզէզներն ու ճիճուները. վայրի վարդենիները ծաղկում էին և թիթեռնիկները կաշում նրանց պտակներին: Արեւ լայն սուկեղօծ շերտեր էր գոյացնում խոտերի վրայ. իրիկուայ վերջալոյսից երկնքի երեսին լող էին տալիս հարմաւուն ամպեր. գիշերային ազնամուղջին փայլ-փլում էին բարձր առաղերն ու ծառեր, սե ծածկուցի նման դեա-նից սահում էին ամպերը. օրերն ու գիշերները սահում էին իրար յետեւից...

Ամեն տարի ուշ աշնան մունչում էին փոթորիկներ, շա-ւաչում հեղեղաւաններ և խշշում անվերջ անձրևներ: Իսկ ձիւ-նաչափ պարզ ձմեռները մենք՝ ծառերս մեր դուրսն էինք բարձրացնում և, իբրև սառցից ու ձիւնից կերտած, ոտն ու սպիտակ նկարներով, ափներով դարգարուած մահաբաժաններ, ցլում էինք այս բլրի վրայ: Երբեմն այս մահաբաժանները վրայ իջնում էին աղւաւների ու ճայեակների երամներ և օդը լըց-նում իրենց դեքեղմանային կռիւոցով, երբեմն էլ իր հասակի հպարտ վայելչութեամբ այստեղ կոնդ էր առնում աղնիւ եղջերուն, մօտով վաղ էր տալիս երկչոտ քարայծերի հօտը,

վախճում, ծղիւում էր փոքրիկ նապաստակը՝ ձեան վրայ թողնելով համբ հետքերի զեղադներ: Եւ այսպէս անվերջ դարուն ու ձմեռ յաջորդում էին իրար:

Երկու բան միայն անփոփոխ էր մնում. նախ՝ միայնու թիւնն էր, որ այստեղ խոր լուսութեան մէջ համակել էր համայն բնութիւնը երկնքից երկիր. և երկրորդ՝ շարունակ ու հող ժամանակի անմահ հոսանքը, որ անդադար կրկնում էր՝ vae victis; vae victis! vae victis (վայ յաղթուածներին) . . .

Արագասաց Քամին այլ ևս չէր ողբում. նրա բիւրեղ մարմինը հեղձեալ տարածում էր գերեզմանի հողաթմբի վրայ, աւելի և աւելի բարձր ուժգին ու հզօր:

Քամին ոտքի ելաւ և օրօրուող սեան պէս ձգուեց աւելի և աւելի բարձր նախ մընչև ծառերի կատարները և ապա նրանցից էլ վեր շատ վեր, երկրի վրայ ամենայն ուժգնութեամբ թափահարուող թևերի՝ ցատկոտ աղմուկով, նման սարդոստայնի ահադին ցանցի պէս սփռուած հերարձակ մազերի, ցանցի, որ հազար ու մը զեղինեցով աչք էր խտտեցնում:

Վերջապէս բարձր զգացումն, անհամար ասաղերի արտափայլումով առկայծուած, տարածեց նա իր եթեր լայն թևերը և անտառը թնդացրեց իր հզօր կոչով.

— Gloria victis!

Գերեզմանի թմբից բաժանուեց, բարձրացաւ անտառի վրայ մրդիկ արհաւիրքով զարնուեց մուսյլ երկնքին, թարթող ասաղերին, արձաթափայլ ծիր կաթին և բացականչեց.

— Gloria victis!

Նա կրկին իջաւ երկրի վրայ, և, անհանգիստ, ցատումով ու սրբազան կատաղութեամբ համակուած՝ խաւարի աղմկող փոթորկի պէս պատուեց դաշտերի ջրերի ու անտառների քաղաքների ու դիւղերի վրայ տարածուած օդը և, երկրագունդը պատող, օդային տարածութիւնը թևակոխող ու կրկին սարսող ձայնով, հնչեցրեց.

— Gloria victis!


Այս կոչը լսելով՝ զարմանում էին դաշտերը, ջրերը, անտառները, դիւղերն ու քաղաքները, զարմանում էին երկրագունդն ու եթեր տարածութիւնը և զարմանալով հարցնում՝ ո՞վ է, որ աշխարհին յայտարարում է այս խոշոր անլուր-երեւակայական և անսպասելի նորութիւնը. արդեօք հեքեաթը չէ՞, որ թևառած թռչում է և գիշերներն աշխարհին պատմել է սկսում զարմանալի բաներ. թէ՞ միւս մոլորակներից վերնե-

սուած ոգիներն են այդ աղգարարողը. և կամ երազ ցնորքները չեն, կամ անմարմին տեսիլները՝ ուրուականները: Եւ ի՞նչ է յայտարարում այդ ձայնը, արդեօք աշխարհի վերածնունթիւնը, թէ՞ կործանումը:

Եւ արագաուլաց Քամին սաւառնում էր ու սաւառնում անյայտ, անանուն, անտառային հսկայ գերեզմանից աւելի հեռու, և ամենուրեք, — թէ՛ տարածութեան, թէ՛ հեռաւորութեան, թէ՛ ժամանակին, թէ՛ յիշողութեան, և թէ՛ սրտերին, իւր հեա տանում է հեռաւոր ապագայի յաղթանակով հնչող հզօր կոչը.

— Gloria victis.

Ն. Քիւրքեանց.



*
* *

Սիրտս թռաւ երկինքն ի վեր
Ինչպէս մրրիկ ու կայծակ.
Հոգիս առաւ արծուի թևեր,
Վեր սլացաւ համարձակ.

Անհունի մէջ՝ լազուր ծովում,
Որ ծայր չունի ու սահման,
Սիրտս աղատ, անվախ լողում,
Ափ է վազում անսասան:

Եւ իմ հոգին նրան ընկեր
Ճիգ է թափում քաջի պէս,
Սուրում, թռչում և անվեհեր
Ճեղքում ալիք փրփրադէղ...

Գարուբին Պետրոսեան

1908 թ. 48 Ապրիլի



ՏԻՄՈԹԷՈՍ ԿՈՒԶԻ ՀԱՎԱՃԱՌՈՒԹԵԱՆ

ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

ԵՒ

ՍՈՒՐԲ ԳՐԲԻ ԵՐՐՈՐԴ ԿԱՄ «ՆՈՐԱՐԵՐ»

ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ.

1. Մեր տղարանից լոյս տեսաւ Կարապետ և Երուանդ վարդապետների աշխատութեամբ և Սուրբառ արքեպիսկոպոսի ծախքով «Տիմոթէոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ Հակաճառութիւնն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի» շատ կողմերով նշանաւոր գրուածքը, որի երկաթագիր մագաղաթեայ հին ձեռագիրը չէր խուսափել էջմիածնի մատենադարանում աշխատող բանասէրների ուշադրութիւնից: Դեռ 1892-ին հանդուցեալ աստուածաբան Արշակ Տէր Միքելեանի ուշադրութիւնն հրաւիրեցի իբրև մասնագէտի յի շարք աստուածաբանական—կրօնական կարեւոր անտիպների, ի թիւս որոց և Անանիա Մոկացու նամակների և Կուղի այս կարեւոր գրուածքի վրայ, խորհուրդ տալով նրան նուիրուել այդ գործերի հրատարակութեանը: Նա նամակով խոստացաւ ինձ ձեռնարկել այդ գործին, այդ ժամանակ գտնուում էի ես Պարիզում, սակայն էջմիածին պաշտօն ստանալով՝ փոխեց իւր աշխատութեան ծրագիրը և գլուխ բերեց Սամուէլ Անեցու հրատարակութիւնը, բաւականանալով այդ հրատարակութեան վերջում, բաւական խառնաշփոթ եղանակով, ծանօթութեանց մէջ թեթև ակնարկներ անելով այս և այլ անտիպների մասին (Անանիա Մոկացու մասին տես էջ 292, ծան. 46. Կուղի մասին էջ 292, ծան. 40), Տարիներ անցած՝ Անանիայի նամակներն հրատարակեցի Արարատում, իսկ Կուղի մասին՝ գրեց Կարապետ վարդապետը, որոշելով գրուածքի կա-

քուսութիւնը, սակայն առանց հնարաւորութիւն ունենալու հրատարակութիւնը գլուխ բերել, մինչև որ Սուքիաս արքեպիսկոպոսի նպաստը և Երուանդ վարդապետի ջանասէր գործակցութիւնը վերջապէս գործը յաջողեցրին: Եւ ահա մենք ունինք մեր առաջ մի ստուար հատոր՝ XXXV + 396, գեղեցիկ և խնամուած հրատարակութեամբ: Կուզի և նրա աշխատութեանը նուիրուած յառաջաբանը հրատարակիչների կողմից՝ լիովին և ամփոփ կերպով պարզում է գրողի, գրուածքի և հայ թարգմանութեան կարեւորութիւնը:

2. Իմ նպատակս չէ այստեղ՝ այս կարեւոր հրատարակութիւնը քննադատել, կամ ցոյց տալ այդ երկասիրութեան հայ կրօնական մատենագրութեան և մտածողութեան մէջ թողած մեծ ազդեցութիւնը և անջնջելի հետքերը, որոնց վրայ մասամբ մատնանիշ են լինում և հրատարակիչները, աւելի մանրամասն նոյն խնդրին վերադառնալը վերապահելով իրենց և մի այլ յարմար ժամանակի: Թէև անցողակի պէտք է նկատել, որ Օձնեցուց, Խոսրովկից համեմատութիւններ բերելիս (տ. յառաջաբան XIX,) անհրաժեշտ էր աչքից չփախցնել և Ստեփանոս Իմաստասիրի իմ հրատարակած պիտառութիւնըը (Արարատ 1902, և արտատպութիւն), նոյն Մանազկերտի Ժողովի շուրջը եղած կուսակցութեանց մէկից մեզ հասած ամենակարեւոր վաւերագիրը: Հրատարակիչների ուշադրութիւնից վրիպել է ոչ նուազ կարեւոր և աւելի հին (Եօթնեւորդ գարսւ վերջից) դոկումենտը՝ Կայսերաց Պատմութիւնը, պահուած մեր հնագոյն ձեռագրերից (Ժ-երորդ դար) մէկում և այժմս արդէն հրատարակուած Հ. Սարգսեանի աշխատութեամբ, որի մէջ լիովին արտացոլում է Տիմոթէոսի ազդեցութիւնը: Համեմատիր, օրինակի համար, Ստեփ. Իմաստ. (արատապ. էջ 13, Արարատ էջ 378) Տիմոթէոսից 3 հատուած, մէջ բերուած Կիւրղի և Փիլաքսոնի միջև, կամ Տիմոթ. էջ 198 և Ստ. Իմաստ. էջ 26 (Արար. 391) Կիւրղի «Յաղագս Կայծին» հատուածը ըստացի, Տիմոթէոս էջ 276 — Ստ. Իմաստ. էջ 26 Յովհաննէս կամ Յոհան

նպիսկոպոսի «Հատառոյ ճառից» հատուածը ըստացի, Կալսերաց պատմութեան* Թէոդոս փոքրին, Մարկիանոսին,

* Ասիթից օգտուելով հարկ եւ համարում վարատել բազմաշխատ բանասէր Հ. Բ. Սարգսեանի տարակուսանքը, Մեր Գէորգեան յուլյակի Թ. 102, հնագոյն թուղթ, երկաթագիր Զ-ից է Վենետիկցիների ունեցած ընդօրինակութիւնը, 1836 թուին կատարուած, Հ. Սէթեանի ձեռքով: Սէթեանի ընդօրինակութիւնից է Հ. Սարգսեանի հրատարակութիւնը «Անանուն Ժամանակագրութիւն» վերնագրի տակ (1904, Վենետիկ): Սարգսեան անշուշտ սխալուած է՝ ժողովածուի տարբեր աղբիւրներից քաղած Ժամանակագրական հատուածները մի ամբողջական գրութիւն համարելով: Բուն Կայսերաց Պատմութիւնը սխալուած է Վենետիկի հրատ. էջ 35 «Կայսերք Հոովմոյ» վերնագրով: Դրանից առաջ եղածը՝ տարբեր աղբիւրներից հաւաքածու է. էջ 1—4 Խորենացուց է. էջ 4 սկսում է Անդրէասի մասը, որի Հիպպոլիտի հետ նոյնութիւնը առաջին անգամ մասնանշեց Գր. Խալաթեան, թէև Հ. Սարգսեան այդ մասին տեղեկութիւն չունի կամ դանի է անունով յիշել: Անդրէասի և Կայսերաց պատմութեան միջև կան այլ օտար պատմութիւններ, ժողովածուն կազմողից հաւաքուած: Կ. Պատմութիւնը եւ տարիներ առաջ ունէի պատրաստած տպագրութեան համար, բայց միջոցների պակասութեան պատճառով՝ դործը մնաց անտիպ: Սէթեանի ընդօրինակութիւնը ղերծ չէ դանազան անյաջող վերծանուած վրիպակներից: Բաւականանաք մի օրինակով. էջ 57, Հայոց զրի գիւտի հատուածում Հոովմանսը կարգացուած է Ստեփանոս, որն և մտել է բնագրի մէջ, չնայելով որ ուրիշ ձեռագրերից յայտնի է Հոովմանոս ընթերցուածը: Մեր երկաթագիրը ոչ մի «Ստեփանոս» չունի: Անշուշտ այս աղբիւրից է ծագում՝ նաև Կոնիքերի սխալը, որ Լինչի «Արմենիային» տալիս է հետեւեալ տեղեկութիւնը. «The Armenian alphabet was imposed on Sahak (Isaac the Great) by Persian Government as a political device to estrange the Armenians both from Greeks and from Syrians. The only historical account is that of Anania of Shirak (unedited chronicle in an uncial Ms. at Mush), who relates that the twenty—nine consonants were «arranged in order» by Daniel, a Syrian philosopher, and sent (during the reign of Theodosius the Less) to the Armenian Satrap Vakortsh by Viram Shaput the king by hand of the Elder Abel. The seven vowels were still wanted, and Mesrop received these from Hayek, a noble of Taron. Stephanus, a scribe of Samosata, incorporated these seven vowels among the consonants. Armenia by H. F. Lynch, vol. I, p. 312, n. 1. Այս

Ղևոնդ մեծ իննուերուած գլուխները, մասնաւորապէս՝ տպագրի էջ 62 և Տիմոթէոս էջ 146, այն հատուածները, որտեղ գործ է ածուած Եւտիքէսի ձեռնարկի համար լատին-յոյն «Լըւբեզոն, Ղեաւբեղովն», «ի ձեռն Ղիբբեղանն» բառը Տիմոթէոսի իբրեւ աւելի խոր ազդեցութեան նմուշ կարելի է ցոյց տալ «Ով հրաշալի նախահարը» մարտական շարականի մէջ գործածուած նոյն իսկ իւր Տիմոթէոսի ասութիւնը բառացի. «Ուրացան զՏէր ի Քաղկեդոնի» = «ի Քաղկեդոնի զՏէրն ուրացան» 36, 37. հմտ. և «Ուրացողքն ի Քաղկեդոնի զՏէրն» 35, 22. և այլուր. Շարական, տուն 7-երորդ. տես ձեռ. շարականներ, տպագրերի մէջ շարականի վերջին տները

տեղեկութեան մէջ Vakortsh-ը անշուշտ վաճարին է, «Ստեփանոս» = Հովիանոս. սխալը ծագել է Սէթեանի բնագործակութիւնից, մեր Զ-րն ազատ է, բայց չունի Ստեփանոս իսկ աւելի խորհրդաւոր՝ Տարծնի իշխան Հայեիւր անշուշտ Հայեկայ բառի սխալ ընթերցումն է, կարգացուած Հայեկայ. «ի Հայեկայ Տարաւոյ յազատ տանէ», որով Հայեկայ գիւղը դարձել է Hayek, a noble of Taron Չախագանցութիւն է նաև՝ միակ պատմական տեղեկութիւն (այս բառերի անգղերէնը իմ ստորագծածն է) համարել այս Անանուն ժամանակագրութեան հաջորդածը հայ գրի գիւռի մասին։ Անշուշտ պատմական են և աւելի կանուխ ժամանակով՝ և բուն Կորիւնը (ընդարձակը) և ֆարսեցին, մինչև իսկ որոշ չափով նաև Հարքայութիւն մասին աւելցնումը (տես իմ հրատ.)։ Շիրակացու գրութիւնների մի մասը հրատարակելիս «Կայսերաց Պատմութեան» յիշատակութիւն չանկա մի միայն այն պատճառով է, որ որևէ հաստատուն կտան չկայ Շիրակունուն վերագրելու այդ աշխատութիւնը, ինչպէս որ այդ անում են նոր Հայկ. Բառ. յառաջարան, Զարբանաւեան, Սարգսեան և ուրիշները։ Անյաջող եւ համարում նաև Սարգսեանի փորձը՝ եկամտա յաւելուածներ համարել Կ. Պ-եան հակաքաղկեդոնական բաղմաթիւ կտորները։ Կայս. Պատ-ը ոչ միայն հակաքաղկեդոնական է, այլ և ծայրայեղ միաբնակ-յուլիանիտ. տես Ալիկառնաոի Յուլիան եպիսկոպոսի մասին Կ. Պ. էջ 69 և հետ. Կ. Պ-ը շատ անգամ քաղաւաքաւ և հետզհետէ կրճատուած, բայց ոչ երբէք ընդլայնուած, ձեռագրերում է սրահպանուած, որոնցից հնագոյնը և համեմատաբար ամբողջականը, ոչ առանց թերիների, մեր երկաթադիրն է։ Հմտ. Հ. Սարգսեանի ուսումնասիրութիւնը «Անանուն ժամանակագրութեան» յառաջ. և վերջարան, մասնաւորապէս էջ 14, ծանոթութիւն։

դուրս են ձգուած խաղաղասիրական նկատումներով: Համեմատելու նիւթ շատ կայ նաեւ «Հաւատարմատնե-
րում» և դաւանաբանական վիճական գրուածքներում:

3. Անցնինք մեր յօդուածի բուն նիւթին, թարգ-
մանչին և թարգմանութեան ժամանակին: Կար, և եր.
վարդապետները ցոյց տալով Թղթոյ Գրքի վկայութեամբ,
որ հայ-վրական եկեղեցական վէճերի ժամանակ յականէ
յանուանէ յիշուած է Տիմոթէոսի այս գրուածքը, իրաւամբ
թարգմանութեան ժամանակը դնում են եօթներորդից
առաջ, և մի քանի այլ մանր նշանների վրայ հիմնուած՝
ենթադրաբար աշխատում են կապել Արգելոյ առօրու հետ,
կամ թարգմանութիւնը վերագրել նրա ձեռներիցով թեանն
ու աղգեցով թեանը (յառաջ. էջ XXIII): Վեցերորդ դա-
րումն են ստեղծուած համարում «մեր եկեղեցական
գրականութեան ամենահարուստ ձեռքերից մէկը»՝ այն է
դաւանաբանականը (էջ XXII): Հիմնուելով լեզուի ստըր-
կաբար յունարանութեան վրայ, հնարաւոր են համարում
թարգմանչին ենթադրել օտարազգի, բայց շատ լաւ տե-
ղեակ հայերէնին: Յատուկ անունների գրութեան զանա-
զան ձևերը կարծել են տալիս հրատարակիչներին «թէ
թարգմանիչները մի քանի հօգի են եղել, ոմանք նոցանից
թերևս օտարազգիներ»: Ես չեմ գտնում որ և է քիչ թէ
շատ կշիւ ունեցող փաստ թարգմանչին օտարազգի հա-
մարելու. կամ մի քանի թարգմանիչներ ենթադրելու
փոխանակ մէկի: Յատուկ անունների գրութեան և ընդ-
հանրապէս ուղղագրական տարբեր ձևերը մեծ մասամբ
ասաջ են գալիս հետզհետէ ժամանակի ընթացքում ար-
տագորոնների զրշի տակ, բայց յաճախ պատկանում են
նաեւ բուն թարգմանչին: Օրինակի համար Ղեւոն, Ղեոն
ձևերի փոխանակ՝ երկրորդ, տւելի նոր, Զ-իւրը գործ է
ածում Ղեւոն ձևը, հարկաւ ոչ տարբեր թարգմանչի, այլ
տարբեր գրչի արգիւնք: Եթէ ցոյց տրուէր որ, օրինակ,
Ղեւոն ձևը, գործ է ածում բացաւաբար գրքի այս էջից
մինչև այն էջը որոշ գլուխներում, իսկ Ղեւոն ձևը բոլո-
րովին ուրիշ գլուխներում, այն ժամանակ թերևս հնարա-

ւոր լինէր դրբի զանազան մասերն անջատել միմեանցից
և վերագրել զանազան թարգմանիչների, բայց այդպիսի
հիմունք չունին հրատարակիչները իրենց ենթադրութեան
համար: Թէ յատուկ անուանց ձևերի ինչպիսի այլազա-
նութիւն կարող է երևան գալ նոյն գրողի գրչի տակից,
միևնոյն դրքում, առանց հեռու գնալու կարելի է օրինակ
բերել իւր իսկ Նրուանդ վարդապետի մի սուրիշ աշխու-
տութիւնից*, ուր լատին, յոյն, նոր գերման, հայ, հին
հայ, պարսիկ ձևերը շարուած են միմեանց կողքին, և հայ
ականջի համար այնպիսի խորթութիւններ կան, ինչպէս են՝
Նէսպէլ, Մայլանդ, Յոսիմոս, Փափղադոնիա և այլն և այլն:
Կամ միևնոյն տնունը գրւում է զանազան ձևերով՝ Աբ-
գիշօ, Աբգիշօ, Աբգիշոյ:

4. Ընդհանրապէս առած հրատարակիչները գլխաւոր
թեղիսների հետ թարգմանչի և թարգմանութեան ժամա-
նակի վերաբերեալ ես կհամաձայնէի, այս սահմանափա-
կութեամբ, որ Տիմոթէոսը թարգմանուած է վեցերորդ
դարու երկրորդ կիսին, յոյն բնագրից, յունարան լեզուով,
առանց երկրորդական ենթադրարար աւելածների և առան-
ձին կշիռ ընծայելու: Բայց բարեբախտաբար Տիմոթէոսի
հայ թարգմանութեան մէջ պահուած է մի այնպիսի ճիշտ
ժամանակաբանական ցուցում, որով հնարաւոր է ճշտու-
որոշել թարգմանութեան քառամեակը, և որով յեղաշը-
ջւում են ոչ միայն հրատարակիչների յառաջաբանում
յաւաջ բերուած գլխաւոր թեղիսները, այլ և մեր, վերջին
քաւորդ դարում, հայագիտութեան մէջ մշակուած ընդ-
հանուր հայեացքները յունաբան դպրոցի, դաւանաբանա-

* Տես Ընդ. Եկեղ. Պատմութիւն Ա. հատ. Էջմիածին 1908,
քաղուածաբար կաղմուած, նոր գիտական պահանջներին բոլորովին
համապատասխան աշխատութիւն, չհաշուելով մի քանի անյաջող
և անզգոյշ ասացումները և տեղ տեղ անխուսափելի մանր մունր
սխալներ: Վերջիններիցս աչքի ընկնողը, հայերիս վերաբերեալը, պիտի
ուղղել: Բարդածանի ալցեյած Անի ամրոցը ոչ թէ Կարսի մօտի
Անին է, այլ արևմտեան Հայաստանինը, Եփրատի աւազանում
(տ. էջ 82):

կան վէճերի շրջանի և յատկապէս՝ նրա սկզբնաւորութեան վերաբերեալ, Մօտ մի դարով ընդլայնուած է տեսութեան հորիզոնը գէպի յետ և փոխուած է այդ խնդիրներին վերաբերեալ հարցերի հիմնակէտը:

5. Կուզի գրուածքում, էջ 277, կարգում ենք պիտառութեան մի այսպիսի վերնագիր. «Երանելոյ Հաւր մերոյ Դիտակորոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ և խոստովանողի՝ ի գրեցելոյ առ Սեկունդինան թղթոյ ի Գանդրայ յեքստրաց*», ուր զ[ը]նթացսն կատարեաց ի Քրիստոս: Թուղթ եւթներորդ, Սեպտեմբերի երկրորդ, Հոռի վեցերորդ». Տիմոթէոսը, որ իւր «Հօրը», իւր մեծաւորին, այն է Դիտակորոսին՝ ընկերակցել էր և աքսորում, անշուշտ լաւ տեղեակ էր Դիտակորոսի թղթերին, և այս պիտառութիւնը բերելիս պահել է թղթի գրութեան ամիսն ու ամսաթիւը՝ Սեպտեմբերի 2: Ակնհայտ է որ հայ թարգմանչինն է համապատասխան հայ ամսաթիւը՝ Հոռի վեց: Հայ հին տարին շարժական էր, այսինքն միշտ կազմուած էր լինում 365 օրից և նահանջ տարիներին յետ էր մնում կամ գէպի յետ շարժուում մի օրով յուլեան տարուց: Ո՞ր թուակաշինն կարող էր հայ հոռի ամսուայ վեցը ընկնել սեպտեմբերի երկուսին: Այդ այնպիսի մի տարի պիտի լինէր, երբ նաւասարդի մէկը ընկնում էր յուլիոյ 29-ին: Եւ յիրաւի նաւասարդ. 1=յուլիոյ 29, նաւ. 3=յուլ. 31, նաւ. 30=օգոստոս 27, հոռի 1=օգոստ. 28, հոռի 4=օգոստոս 31, հոռի 6=սեպտ. 2: Այսպիսի տարրական մանրամասնութեանց մէջ եմ մտնում այն բանասէրների համար, որոնք տեղեակ չեն տոմարական դիտելիքայինային: Նաւասարդի 1-ը յուլիոյ 29-ին է հանդիպում միմիայն 480—483 փրկչական թուերին: Եղած ցանկերից, որտեղ տրւում

* Հրատարակիչները «յեքստրաց» ուղղում են «յաքստրաց», բայց անտեղի: Եքսորի, եքսորիք, եքսոր, եքսորք, եքսորել ձևերը տառացի համապատասխանում են յունականին՝ ἄξορία, իսկ aksoria ասորի ձևն է, տես Arm. Gram. ուրեմն բառն ունինք երկու ձևով, ուղղակի յունարէնից փոխ առնուած եքսորի, նոյնը ասորական ճանապարհով եկած՝ աքսոր: Arm. Gram.-ին անձնօթ է հայ եքսորի ձևը:

է նաւասարդի 1-ի հանդիպումները, լաւագոյնն է Դիւլորիէ-ինը (Recherches sur la Chronologie Arménienne, Paris 1859, էջ 383. Աւելի կանուխ է կազմուած, բայց սխալների պատճառով անգործածելի է՝ Խաչ. վ. Սիւրմէլեանինը (Տօմարադիտութիւն, Վենետ. 1818), որից կան և արտատպութիւններ զանազան «էփիմերոլական» հրատարակութեանց մէջ («Ոսկի բարեկամ» Թիֆլիս, մի քանի տպագր. և այլն):

6. Մեզ հետաքրքրող թուականի կարեւորութեան պատճառով, և կարելի սխալից խուսափելու համար, նաւասարդ 1-ի յուլիսի 29-ին հանդիպումը վերադասուցում եմ նաեւ սասանեան տոմարով, Խնդրին ծանօթներին յայտնի է, որ պարսիկ նոր տարին մեր նաւասարդ 1-ից հինգ օր առաջ է: Հայ բանասէրի յիշողութեան դիւրութեան համար կարելի է ձեռկերպել այսպէս. սասանեան նոր տարին ընկնում է մեր Աւելեաց մէկին, նեօլդը-քէն տալիս է սասանեան նոր—տարիների ցանկը (Tabari, Anhang B.): 480—483 վրկչ. թուականին, ըստ այդ ցանկի, սասանեան նոր—տարին հանդիպում է յուլիսի 24-ին. (=հայ Աւելեաց 1) որին աւելացնելով 5 օր՝ ստանում ենք յուլիս 29—հայ նաւասարդ 1-ին:

7. Կարելի է հաշուել և առանց պատրաստ ցուցակի: Պէտք է վեր առնել մի հաստատուն զուգաւորութիւն հայ և լատին ամսաթուի և հաշուել դէպի յետ: Միջին և վերջին դարերում այդպիսի զուգաւորութեան անհամար օրինակներ ունինք յիշատակարաններից: Դիւրութեան համար պէտք է վեր առնել մեր որոնած թուականին ըստ կարելւոյն մօտիկ մի զուգաւորութիւն: Այդպիսի մի հաշիւ ունիմ արած ես վեցերորդ դարու կիսին Յիդիտբուզիտի նահատակութեան օրը որոշելու համար: Սուրբը նահատակուել է «ի քսաներորդի երրորդի ամին Խոսրովու թագաւորի, որ օր երկու էր քաղոց ամսոյ, յաւուր կիրակէի, յերրորդ ժամու»: Տես այս թուականի վերլուծութիւնը իմ «Գրիգոր—Մանանդի Ռաթիկ»-ում, էջ 7—8, կամ Արարատ 1902, 468—474: Այս ճշտուած հաշուով 553-ին. նաւասարդի 1-ը ընկնում է յուլիսի 11-ին, և օրովհետեւ

Նաւաստ. 1-ը տեղափոխուում է իւրաքանչիւր քառամեակ՝ նահանջից նահանջ, ուստի այդ յուլիս $11=1$ նաւասարդի՝ 552—556 քառամեակին է վերաբերում: Մեզ հետաքրքրող 480-ից մինչև 552-ը 72 տարի է ($21+51=72$). Կամ 18 քառամեակ ($4 \times 18=72$): Իւրաքանչիւր քառամեակին նաւասարդ. 1-ը շարժական թուականում յետամնացում թեամբ պիտի տեղափոխուէր մի օր, 18 քառամեակներին՝ 18 օր: Եւ յիրաւի՝ տեսնում ենք որ 480 թուի յուլիսի 29-ից նաւասարդ. մէկը իջնում է 552—555 թուին՝ յուլիսի 11-ին, այն է յետադիմում է 18 օր ($29-18=11$):

8. Ուրեմն ապահովապէս կարելի է համազուտ լինել, որ սեպտ. 2=հոռի 6 զուգաւորութիւնը կարող է հանդիսանալ միմիայն 480—483 քառամեակին: Եւ որովհետեւ ամսաթուերի զուգաւորութեան փոփոխութիւնը չէ կախուած ոչ յուլեան տարու և ոչ հայ շարժական տարու սկզբնաւորութիւնից, ինչպէս որ համարողներից նոյն իսկ լաւագոյնները անուշադրութեամբ անում են այդպիսի սխալ, այլ յուլեան նահանջի մի յաւելեալ օրից, այն է փետր. 29-ից, ուստի մեզ հետաքրքրող քառամեակի ճշտադրոյն սահմաններն են 480 փետր. 29—484 փետր. 28: Ահա այս քառամեակն է Տիմոթէոս Կուղի հայ թարգմանութեան հաստատուն և անխախտելի թուականը:

9. Կասկած յարուցանելու ուրիշ որ և է ճանապարհ պակասում է: Թերեւս մէկը իրեն թոյլ տայ ենթադրել, թէ հայ թարգմանը հոռի վեց դնելով կամեցել է հաշուել ոչ իւր թարգմանութեան, այլ Դիոսկորոսի Ուելունգինանին դրած թղթի ժամանակը: Բայց այդպիսի հաշուի համար պակասում են անհրաժեշտ պայմանները: Միմիայն «սեպտ. 2» ունենալով անհնար է այդպիսի յետադարձ հաշիւը անհրաժեշտ էր ունենալ նաև թղթի գրութեան տարեթիւը: Բայց թոյլ տանք ենթադրել նաև, որ թարգմանին ուրիշ աղբիւրից յայտնի էր և այդ տուեալը, այն է թղթի տարեթիւը: Այս ենթադրական դէպքում էլ անհնար էր հոռի վեցը զուգաւորել սեպտեմբերի 2-ին: Դիոսկորոսի մահուան թուականը մեզ յայտնի է. նա մեռաւ աքսորում Պափս

ղաղանիայի Գանդրայ քաղաքում 454-ին*, Նրա մեզ հետաքրքրող թուղթը կարող էր ուրեմն գրուած լինել ոչ ուշ այդ 454-ից, 452—455 քառամեակին նաւասարդի մէկը հանդիպում էր օգոստոսի 5-ին, ուրեմն սեպտեմբերի 2-ը ընկնում էր նաւասարդի 29-ին, մինչդեռ հոռի վեցը հանդիպում էր սեպտեմբերի 9-ին, ուրեմն և անհնարին էր «սեպտ. 2 = հոռի 6» զուգաւորութիւնը:

10. Կամ թերեւ հնարաւոր համարուի ենթադրել, որ «հոռի վեց» առացուածը ուշ ժամանակ, մի 50, 100, կամ աւելի տարիներ յետոյ, աւելացրել է որ և է գրիչ կամ համարող: Այդպիսի յետադարձ հաշիւների օրինակներ ունինք: Օրինակ՝ հայ շարժական թուականով յետադարձ հաշուած է Քրիստոսի ծննդեան օրը, թէ որ հայ ամսի քանի՞երորդ օրը կհանդիպէր: Բայց այսպիսի հաշուի համար ընտրովին անբաւարար է «սեպտ. 2» տուեալը, անհրաժեշտ էր ունենալ նաև տարեթիւը որ և է թուականով: Եւ յիշելով՝ սեպտեմբերի 2-ը հայ որ ամսի և քանիսին է հանդիպում՝ հարցմանը, ոչ մի համարող պատասխան տալ չէ կարող, որովհետև այդ կարող է հանդիպել հայ շարժական ըստ ամիսներին և ըստ օրաթուերին: Ուրեմն այսպիսի ենթադրութեան ճանապարհն էլ փակուած է:

11. Կարող է լինել ուրիշ կասկածի տեղիք. արդեօք մեզ համար կարեւոր ընթերցւածը՝ «հոռի վեց» անաղարտ է հասել մեզ, չէ՞ աղճատուած: Բայց այսպիսի հարցմանը

* Տես և Կայսր. Պատմ. 66. «ՂԻԽՍԻՐՈՍ ԿԱՒԻՍԿՈՒՄՈՍ ՆԱԽԻ Ի ԿԻԼԻԻՆՆ ԱՔՍՐԵՅԻՆ, ԱՊԱ յԵՐԱԿԻԼԱՅ, ԱՊԱ Ի ՊԱՓԻՂԱԳՈՎԷՐԻԱ, և անդ կատարեցաւ բարի վկայութեամբ և խոստովանութեամբ ի Քրիստոս»: Տիմոթէոսի մասին ուշադրութեան արժեք է և հետևեալ տեղեկութիւնը. «Յետ որոյ (==Պատեւրայ, Կալիսկոպոսին Աղեքսանդրիոյ) յաջորդէ զաթոս Կալիսկոպոսութեանն Տիմոթէոս Երանելի և հաստատէր յուղղափառութեան հաւատս զկործանեալսն ի Պատորայ (==Պատեւրայ) Ղևովն մեծ [թագաւորէ] ամս ինն և ասան: Ի սորա երրորդ ամին՝ Տիմոթէոս և Անատոլի Նորին Եղբայր յաիշտակեալ ի Սիղասիոսէ աքսորեցան ի Քերսովն, վասն չընդունելոյ զսահման Քաղկեդոնի ժողովոյն»: (Կայս. Պատմ. Էջ 67.)

բանասիրական գիտութեանց մէջ պատասխան չկայ: Հարկաւ, եթէ որ և է նորագիւտ աղբիւր փոխէ այդ ընթերցուածը՝ այդ նորութեան հետ կարող է փոխուել՝ և եզրակացութիւնը: Բայց բացառիկ բարեբախտութեամբ մեզ հասել է այդ կարեւոր ընթերցուածը ոչ միայն հնագոյն երկաթագիր ընտիր ձեռագրում, այլ ունինք նոյնը պահուած և մի ուրիշ նորագոյն*, բայց մեր երկաթագրից անպայման անկախ ձեռագրում, մեր մատենադարանի № 454 (կար.), տես Տիմոթ. էջ 335. Այդ ձեռագրում կարգում ենք մեր վերևում մէջ բերած հատուածը այսպէս. «Երանել[ւ]ոյն հաւրն մերոյ Դիոսկորոսի եպիսկոպոսապետին Աղէքսանդրու և [խոստովանողի ի] գրեցելոյ թղթոյն ի դանգրա[յ] յասորիս, ուր զաշակերտսն կատարեաց ի Քրիստոս. թուղթ է-երդ. սեպտեմբերի Բ, հոսի վեցերորդն. | առ միայնակեացսն ի հենատոն գրեցեալ թղթոյն. | Ուղղանկին փակագծերով իմ աւելացրածներն են նորագոյն ձեռագրի բաց թողած մասերը: Շղագրածները ձեռագրական մանր տարբերութիւններն են: Ուղղահայեաց գծիկով բաժանուած վերջին աւելի մասը՝ «առ միայնակեացսն ...

* Կար. և Եր. վարդապետների հրատարակութեան թոյլ կտրմերիցն է այն, որ նրանք աւելորդ են համարել իրենց դործածած ձեռագրերի գոնէ ամիսի նկարագիրը և այլ հանգամանքները (տփի Կազմութիւն, ժամանակ, գրչութիւն և այլն) տալ մեզ, քանի որ այդ տուեալներն անհրաժեշտ են ուսումնասիրողին, և շատ անգամ անսպասելի լոյս են սփռում վիճելի հարցի վրայ: Հրատարակիչները լռում են նաև կէտադրութեան մասին: Փակագծի () և ? հարցական նշանի լինչ գէպքերում և արգեօք միատեսակ դործածութիւնը շատ անորոշ է և իրաւամբ տեղիք է տալիս ընթերցողին թիւրիմացութեան կամ տատամսութեան մէջ ընկնել: Ապագայ հրատարակութեանց մէջ անհրաժեշտ է այս թոյլ կէտերին առանձին ուշադրութիւն դարձնել: Շատ լաւ է կազմուած ո. գրոց վկայութեանց ցանկը, վատ չեն նաև յատուկ անուանց և նիւթերի ցանկը: հարկաւ ոչ զերծ անխուսափելի թերիներից և վրիպակներից: Օրինակ՝ մեզ հետաքրքրող փոքրիկ վերնագրից՝ ցանկերում չգտանք ոչ Աւագեմբեր, ոչ Հոսի, ոչ Հենատոն: Ցանկերում յատուկ ուշադրութիւն է դարձնելու ամիսների անուններին, որոնցից շատ անգամ կախուած է լինում գրութեան բախտի որոշումը:

թղթոյ» առնուած է ուրիշ վերնագրից (տես Տիմոթ. էջ 279): Ուշագրաւ տարբերութիւն է «յաստորիս, ուր զաշա-
կերտան» ընթերցուածը, սինչդեռ երկաթադիրն ունի
«յեքսորաց, ուր զլընթացան»: Ինչ թուում է որ նորագոյն
ձեռագրի հին նախագաղափարը, հարկաւ ոչ անմիջականը,
առնենալու էր «ի գրեցելոյ թղթոյ ի Գանգրոյ յեքսորիս, ուր
զարշաւանան կատարեաց ի Քրիստոս»: Եքսորիս-յոյն բառից
ունինք հայերէն եքսորի, եքսորիք*: Իսկ «զարշաւանան
կատարել» ինչպէս «զընթացան կատարել» նշանակում է
մեռնել: Համեմատիր «զընթացս կատարել» Տիմ. էջ 1 և
277: «Ջարշաւանան կատարել» բացի մեր այս ենթագրա-
ծից տես նաև Տիմ. էջ 147, «և լուծին, որպէս կարծեցին,
զերանելին մեր հայր և եպիսկոպոսապետ Դիոսկորոս... և
արտասահմանելով զճշմարտապէս պահապանն հաւատոյ ի
Կիլիկիոն նախկին, ապա յերկաղեա, յետ այսորիկ ի դան-
դրացւոցն քաղաք, ի Պափղագոնիա, աստ ուր զարշաւանն
կատարեաց և զհաւատն պահելով կատարեցաւ, ընդունե-
լով զարգարութեանն պսակ առ ի նահատակագրէն Քրիս-
տոսէ, յարդար դատաւորէ, ընդ ամենայն սուրբս»: (Հմտ.
Կայս. Պատմ. էջ 66): Անհմուտ արտագրողների ձեռքի
տակ անհասկանալի «յեքսորիս» կամ «յեքսորս» բառը
սխալագրուել է «յասորիս», իսկ «զարշաւանան կատարեաց»
նոյնպէս անհասկանալի ոճը՝ «զաշակերտոն կատարեաց»
անյաջող սրբագրութեամբ փոխարինուել: Մեր երկաթա-
գիրը չէր կարող նոր ձեռագրի նախագաղափարը լինել, քանի
որ չունի «զարշաւանան» բառը, այլ դրա փոխարէն, հա-
ւանականօրէն լուսանցքագրութիւնից մտած, տւելի հաս-
կանալին «զընթացան»: Չնայելով այս բոլոր աղճատումնե-
րին, այսուամենայնիւ նոր ձեռագիրը անաղարտ պահել է

* Տես յատկապէս Սոկրատ մեծ. «Բանգի փոքր ինչ յառաջ և
սայ ի յարդարմանէ արիանոսայն ի յեփսորիս առաքել» էջ 171.
«ոմանց արաքսիլ և առաքիլ յեփսորիս» 183. «փոքր ինչ յետոյ
յեքսորեայն կոչեցեալ» 184. «զոմանս հատանէր յոտից (=բառնայր
ի միջոյ) ի ձեռն եփսորեաց» 179, յաճախ է պատահում նաև բայա-
ծիք «եքսորել»: Սոկր. Սքոլ. հրատ. Մեսրոպ վարդապետի:

մեզ համար «սեպտ. 2—հունի 6» զուգադարձութիւնը:

12. Մեր այս բոլոր ապացոյցներին կարող է լինել, մեր կարծիքով, մի վերջին, բայց քիչ թէ շատ կշիռ ունեցող առարկութիւն, այն է թէ՛ մեզ կռուան ծառայող զուգադարձութիւնը թերեւս ոչ չարժական տոմարով է, այլ որ և է անշարժ սիւստեմի վրայ է հիմնուած: Մի տառնեակ տոմարական սիւստեմներից, որոնք որ և է շանս կարող էին ունենալ իբրեւ եկեղեցական անշարժ տոմար դարձածուած լինել հայերիս մօտ, հինգ և վեցերորդ դարերում, և ոչ մէկը չէ սկսուում յուլիսի 29—ից: Անշարժ տոմարն ունենում է և անշարժ սկզբնակէտ: Եթէ յուլիսի 29-ի փոխանակ Տիմոթէոսի թարգմանութեան զուգադարձութիւնը տար 25, 29 կամ 30 օգոստոսի, կամ 1 սեպտեմբերի, կամ 1 հոկտեմբերի, կամ 1 յունուարի, կամ 21 կամ 22 փետրուարի և այլն, այն ժամանակ դործին ծանօթ տոմարագէտը կարող էր որ և է կասկածով կանգ առնել մի այդպիսի հնարատրութեան վրայ, ենթադրելով՝ եգիպտական, կապադովկական, բիւզանդական, ասորա-մակեդոնական կամ մի այլ անշարժ սիւստեմի ազդեցութիւն: Բայց 29 յուլիսին, իբրեւ անշարժ սիւստեմի ելակէտ, նոյն լակնուղագոյն հաւանականութեան ուսմաններից դուրս է վանում մի այդպիսի ենթադրութիւնը:

13. Ի վերջոյ մնում է ինձ աւելացնել մի ուրիշ գիտողութիւն: Տիմոթէոսը իւր պիտառութիւնները քաղելիս երևում է որ խնամքով մէջ էր բերում գործածած գրութիւնների վերնագրերը, յատուկ ցուցումներով թէ ինչ հատուած որ գրութիւնից է առնուած, շատ անգամ առանց զանց առնելու և գրութեան ժամանակաբանական ցուցումները (տարեթիւ, ամսութիւ), իւր եպիսկոպոսի՝ Գրիսիորոսի նամակից քաղելիս պահել է գրութեան ամսաթիւը (սեպտ. 2), բայց այդ միակ ժամանականիշ ցուցումը չէ: Ուշագրութեամբ թերթելով պիտառութեանց վերնագրերը ինձ յայտնեց գտնել և հետեւեալ թուականները, որ դատելով կէտադրութիւնից և մի տեղ նաև բաւերի անիմաստ յեռառաջութիւնից՝ իբրեւ թուական չեն հասկացուել հրա-

տարակիչներից: Դնում եմ այդ թուականով վերնագրերը ժամանակի կարգով: Բայց ել Աթանասի զատկական տառնականներից են, որով ճշտիւ որոշում են Աթանասի այդ գրութիանց տարեթուերը: Տպագրի կէտագրութիւնը չեմ պահում, այլ փոփոխում եմ ըստ իմաստի, իմ հասկացած ձևով:

1. «Երանելոյ Աթանասի եպիսկոպոստպետի Աղեքսանդրեայ ի տառնականի երկրորդում: Դիոկղետիանոսի ԽԶ» (էջ 140).

2. «Նորին՝ Գ* տառնականէն: Դիոկղետիանոսի ԽԷ» (էջ 140).

3. «Նորին՝ հինգերորդ տառնականէն: Դիոկղետիանոսի ԽԹ» (էջ 140).

4. «Նորին՝ ի տառնականէն **»: ԾԴ Դիոկղետիանոսի» (էջ 118).

5. «Նորին՝ ի տառնականէ ԺԱ երորդէ: ԾԵ Դիոկղետիանոսի» (134).

6. «Նորին՝ ԺԱ տառնականէն: Դիոկղետիանոսի ԾԵ» (էջ 141).

Երկու տեղ (№ 3, 5) Դիոկղետիանոսէ ընթերցուածը ուղղեցի Դիոկղետիանոսի: № 3-ը տպագրում բառերի յետևառաջութեամբ այսպէս է. «ԽԺ. նորին հինգերորդ տառնականէն Դիոկղետիանոսէ» որ ըստ իմաստին տեղափոխեցի: Եկեղեցական հայրերից յաճախ գործածուած այս թուականի սկիզբն է Դիոկղետիանոսի առաջին տարին, այն է 284: Թուականի սկզբնաորութիւնն է եգիպտական

* Իմ կարծիքով պիտի լինի Գ, տպագրում Դ է, ուրեմն Գ և Դ տառերի շփոթութիւն:

** Պակասում է տօնականի համարը, որ գտաւիով Դիոկղետ. թուականից պիտի լինի Ժ: Եթէ նախագրել որ ընդհատումներ չեն եղել՝ կարելի է վերականգնել տօնականների համարները Դիոկ. թուականների համեմատ այսպէս. [Ա. տառնական ԽԵ թուին], Բ. տօնակ. ԽԶ թուին, Գ. տառնակ. ԽԷ թուին, [Դ. տօնակ ԽԸ թուին], Ե. տառնակ. ԽԹ թուին, [Զ. տառնակ. Ծ թուին, Է. տառնակ. ԾԱ. թուին, Ը. տառնակ. ԾԲ թուին, Թ. տառնակ. ԾԴ թուին], Ժ. տառնակ. ԾԵ թուին, ԺԱ. տառնակ. ԾԶ թուին:

շարժական տարով 17 սեպտեմբերի, իսկ անշարժով, որ գործածութիւնից դուրս վանեց շարժականը և միակ տիրողը դարձաւ՝ սեպտեմբերի 29: Այս թուականի հետ է կապուած եգիպտական զատկական տոմարը: Այս թուականը կոչուում է նաև Մարտիրոսաց թուական, Դիոկղետիանոսի 19-րդ տարում տեղի ունեցած մեծ հալածանքների պատճառով: Մեր ունեցած ամենականուիս թիւը՝ Դիոկղետիանոսի ԽԶ՝ համապատասխանում է փրկչական (46+283) 329—330, բայց որովհետև տօնականի, այն է զատկական թղթի հետ է կապուած, ուստի և համապատասխանում է 330 թ. զատկին: Այս նրկորորդ տօնականի թուականն է, ուստի և առաջին տօնականինը, որից հատուած չունինք, պիտի լինէր 329 զատկին: Այսպիսով միւս թուերը համապատասխանում են հետևեալ փրկչ. տարիներին, բոլորն էլ զատկին. ԽԷ=331, ԽԹ=333, ԾԴ=338, ԾԵ=339. Ուշագրութեան արժանի է որ տօնականների համարները տարի տարի համապատասխանում են թուականի յառաջխաղացութեանը, որով կարելի է հետևյալն որ տօնական Ա.—ԺԱ՝ տարի տարի ընկնում են 329—339 թուերին, որով և Աթանասի եպիսկոպոսութեան տարին պիտի լինի 329 թ. զատկից առաջ, բայց 328 թ. զատկից յետոյ: Loofs-ը Աթանասի եպիսկոպոսանալու տարին դնում է 326-ին, բայց Լօֆսի գրութիւնը ձեռքի տակ չունենալով, անկարող եմ վերաստուգել նրա հիմունքները, որն և մեր այս յօդուածի նպատակից դուրս է*. Ասորերէն պահուած են Աթանասի զատկական տօնականներից 13 հատ «յառաջաբանով» 329—348 թուերից: Յունարէն կան հատուածներ: Հմմտ. W. Moeller, Lehrbuch der Kirchengeschichte ², 1899, էջ 438: Այս թուերը շատ կարևոր՝ Աթանասի կենսագրութեան և թղթերի ժամանակաբանութեանը, Տիմոթէոսի գրութեան և թարգմանութեան ժամանակի համար նշանակութիւն չունին:

* H. Weingarten (Leipzig, 1897 Zeitafeln etc.) Աթանասի եպիսկոպ. տարիները դնում է 328 յունիս 8—2 մայիս 373. իսկ ¹⁵ զատկական թղթերը 329—348-ին:

14. Այսպիսով հասնում ենք հետևեալ եզրակացութեանը: Տիմոթէոսի Հակաճառութիւնը՝ ունենալով սեպտ. 2—հոռի 6 զուգաւորութիւնը հայերէն թարգմանուել է 480 փետր. 29—484 փետր. 28 քառամեակին, երբ յիրաւի կարող էր տեղի ունենալ ամիսների և ամսաթուերի այդպիսի զուգաւորութիւն: 480 թուից՝ 1460 տարի յետոյ (ըստ յուլեան տոմարի, ըստ հայ շարժականի՝ 1461 տարի յետոյ) միայն կարող է նորից հանդիպել այդպիսի զուգաւորութիւն, այն է՝ 1940-ին, մի գալիք տարեթիւ որին մենք դեռ չենք հասել. կամ 1460 տարի առաջ կարող էր նոյնը պատահել՝ Քրիստոսի ծննդից 1000 տարուց առաջ, երբ պատմական Հայաստանում ոչ հայ կար և ոչ էլ հին հայ ամիսների անունները գոյութիւն ունէին հայոց մօտ, քանի որ այդ անունները մեծ մասամբ պարսիկ ծագումից են, և փոխ են առնուել հայ և պարսիկ ցեղերի միմեանց հետ շփման գալուց յետոյ:

Այս զուգաւորութեամբ առաջին անգամ ունենում ենք, հինգերորդ դարից, մաթեմատիկօրէն ճշտուած քառամեակ դրական աշխատութեան, որով և դրւում է առաջին հաստատուն հիմնաքարը մեր գրականութեան ապագայ ճշգրտուած ժամանակաբանութեանը, այն է՝ քրոնոլոգիայի, որ հայագիտական բոլոր ճիւղերի ամենաթոյլ կողմն է, մասնաւորապէս ինչ վերաբերում է հին դարերին (V—X):

* *
*

15. Վերջացնելով ժամանակի խնդիրը մի վերջին դիտողութիւն: Նպատակն չէր կանգ առնել Տիմոթէոսի թարգմանութեան լեզուի վերայ, որ արժանի է յատուկ ուսումնասիրութեան*: Յունաբանութեան հետ միասին

* Ուստի և կանգ չեմ առնում՝ նաև հրատարակիչների աչքից չիտւաւորած՝ (դնում են հարցական)՝ Զ-րի տեղ տեղ կասկածելի ընթերցումների վրայ, որոնցից օրինակ, էջ 94, 1, տմ փակագծաց

բաւական բազմութիւն որ բաւեր, ինչպէս օրինակ՝ խայտաղան (էջ 281, 26), կամ բարբառական ձևեր ինչպէս՝ նոջա (մի քանի անգամ) փոխանակ նոցա (հմտ. գնոյ, գնոյ), յաճախ աշխատ փխ. աշխարհ** և ուրիշներ անկարող են չգրաւել ընթերցողի ուշադրութիւնը. բայց յատուկ մտադրութեան արժանի է Ս. Գրքի հատուածների լեզունը եւ իրաւամբ նկատում են հրատարակիչները, որ «խորթ է մանաւանդ այն հանգամանքը, որ Ս. Գրքի կտորները փոխանակ դասական թարգմանութիւնից ընդօրինակելու, նորից թարգմանել են՝ եզնիկից հաղիւ մի դար ժամանակով բաժնուած, եղիշէին գրեթէ ժամանակակից մարդոց համար՝ օտարոտի մի բարբառով, նոյն իսկ բառակազմութեան մէջ այնքան ստրկօրէն մօտ յունարէնին, որ կարելի է ենթադրել, թէ թարգմանողը օտարազգի է եղել միայն շատ լաւ տեղեակ հայերէնին» (յառաջաբան XXIII): Ինչպէս տեսանք թարգմանչին օտարազգի համարելուն եւ համաձայն չեմ. Բայց Ս. Գրքի, մանաւանդ Նոր Կտակարանի (տ. Ս. Գ. վկայութեանց ցանկ, 3 էջ հին կտակ. 9 էջ Նոր կտակ.) այդպիսի տառացի յունաբան Նոր թարգմանութիւնը և դասական թարգմանութեան անտես առնելը իսկ որ մի կարևոր երևոյթ է, կարօտ բացատրութեան, Հարկաւ կարելի է ենթադրել, որ օտարութեան մէջ թարգ-

թւում է ինձ, թէ պիտի կարդալ մոմ փակաւնաց, ինչպէս ունինք մոմ կնեոյ և նման ասութիւններ, Մ և Տ երկաթագրի սովորական չփոթութիւն է, թէ և ոչ Տիմոթէոսի մեր ձեռագրինը (տես երկու էջ լուսատիպ դրքի սկզբում, ուր Տ և Մ շատ որոշակի տարբերում են), ավ հաւանականաբար աւելի հնագոյն նախադադափարից: Էջ 43, 26, «յամենայն եղիպտոսի, եղիպղէ (?) և ի Պաղիստինէ», հարցախնդրով բառը կարգաւոր է «և ի Ղիրիէ»: Հրատարակիչները ցանկում եղիպղէ դնում են իբրեւ եղիպտոսի մի ուրիշ ձև, բայց եղիպտոսի հետ կապ չունի, քանի որ եղիպտոս յատուկ յիշուած է: Մեր առաջարկած սրբագրութեան համար հմտ. էջ 150, 54, «որ եկեղեցի ոչ սգայ յեղիպտոս և ի Ղիրիէ և յԱրևելս»:

** Օրինակ՝ Յովնանու Աւետարանից . . . «Վամենայն մարդ եկեալն յաշխահ. յաշխահի էր և աշխահ նովաւ եղև և աշխահ զնա ոչ գիտաց» Տիմոթ. էջ 297, 5—7.

մանը ձեռքի տակ չունէր հայերէն Ս. Դրքի օրինակ, բայց հազիւ թէ Թուում է ինձ թէ լինելու է աւելի խոր պատճառ։ Դաւանաբանական, քրիստոսաբանական վէճերին անհրաժեշտ էր մանուածապատ և նրբին երանգաւորութեանց համար ոչ միայն նոր տերմինոլոգիա, այլ և Ս. Դրքի բնագրից տառացի ճիշտ կոչումներ, հիմնուած յոյն բնագրի վրայ, որից և հետեւում էր նոր թարգմանութեան անհրաժեշտութիւնը։ Սահակ — Մեսրոպեան ասորերէնից «փութանակի» կատարուած թարգմանութիւնը, որ հայ Ս. Դրքով զբաղւողներէից կոչուում է առաջին թարգմանութիւն, թէև յետոյ ուղղուած և վերաստուգուած յոյն լաւ բնագրի վրայ (==երկրորդ թարգմանութիւն), համարուելու էր անբաւարար։ Խորենացին մի այդպիսի ակնարկութիւն ունի «զոր» (=զստոյգ օրինակս գրոց) առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ՝ դարձեալ թարգմանեցին զմի անգամ թարգմանեալն փութանակի, հանդերձ նոքօք վերստին յօրինեալ նորագումբ։ Բայց քանզի անգէտք էին մերում արուեստի, ի բազում մասանց թերացեալ գործն գտանէր...» Գ, 61։

16. Կային դատական հին բայց վերանորոգուած [=երկրորդ] թարգմանութիւնը ոչ միայն թերացեալ, այլ և գլխովին անընդունելի համարողներ։ Գոնէ այդպիսի մի կարևոր վկայութիւն ինձ յայտնի է իմ հրատարակած «Հերձուածոց գրքի» մի աւելի հին օրինակից (Խաչիկ վարդապետի հաւաքածու, № 77, Սամուել Անեցի և Հերձ. գիրք, գրութեան թուականն է հայոց ՉԿԴ (764+551=1315), Ահա այդ հատուածը.

«ՃԾԶ; Մայրագոմացոց աղանդ ընդ [=լատ] Ապողինարի(ն) հերձուածողի անուրէնութեանն երևեցաւ և աւելի ևս սոցա [=սոցայն անօրէնութիւն], զկիրս մարդկային մարմնոյն Գրիստոսի ոչ ընդունին, մանաւանդ զթըլփատութիւնն, զերկիւղն, զհաբարտնութիւնն, զբաղցն, նաև զխոնարհական բարբառն որ վասն Գրիստոսի այլ եւ զճին թարգմանութիւնս զոր ընգնեալք ի սրտոյն Սահակայ ոչ ընդունին, և զերրորդ Թուղթն Կորնթացոց ի Պաւղոսէ

գրեալ, զընգալեալն ի սրբոյն Գրիգորէ, նզովեն, և զչարչարանան սոսկ աստուածութեանն տան և ոչ միաւորութեան տնաւրենութեանն»:

17. Այս բոլորը քաղուած է թուում Թէոդորոս Քրոթենաւորի «Ընդդէմ Մայրագումացոյն» ճառից (Վենետ. 1833), ուր գտնուում են մեր մէջ բերած հատուածի բոլոր մասերը աւելի մանրամասն, թէև աւելի մութ. Քրոթենաւորից բերում ենք հին և նոր տարբեր թարգմանութեանց խնդրին վերաբերեալ գլխաւոր կտորները.

— «Ոչ, ասեն, տկարութեամբ, այլ կարողութեամբ յաղթեաց (Յիսուս) մարտի թշնամոյն. իւրական վկայենք անքն, «Ոչ աւարի տուն սկայի, եթէ ոչ նախկին հզօրն կապի» (Մարկ. Գ, 27). եւ եթէ այս ճշմարիտ է՝ յայտ է, ասեն, թէ անընդունակ է առաջթարգմանութիւն աւետարանին, որ յաղթակայութեանն զհաքրտնութիւնն պատմեն ամենակարողի Բանին Աստուծոյ, և զի հրըշտակէն քաջալերելն» (էջ 148). «Առաջթարգմանութիւն» մի բառ համարենք թէ երկու՝ նշանակում է «առաջին թարգմանութիւն»: Մայրագումեցիների շընդունածն են՝ Ղուկասի ԻԲ, 43—44 տները, որ այժմեան մեր ունեցած շատ Զ-երում նոյնպէս պակասում են. (Տես Մետրոպ վարդապետի Петрія Перевода Библии на Арм. яз. էջ 203).

— «Քանզի բազմերգելին Գրիգոր առաքելաքարողն հատակն Քրիստոսի զամենայն աւետարանական պիտառութիւնն ճառագրեաց՝ զոր ինչ յաղագս Աստուծոյ Բանի տնօրինական կիրառութիւն պիտառէր, իսկ զհաքրտնիլն և ոչ յատուկ ձայնիւ յիշատակեաց, ուստի յայտ է, ասեն, եթէ ննապատմութիւն աւետարանին ոչ է ընդունակ: եւ եթէ ոչ քան զնախաքարողն Գրիգոր խորհեացի լինել իմաստուն, և այլ ինչ նորաձեւեցէ ճառել, այնպիսին դատապարտեալ է ասեն» (էջ 154).

— «Արդ ով խաբողորսակ թշնամիք, ներբողելով ձեր զճշմարտաքարող վկայն Քրիստոսի զյօգներշնակն Գրիգոր՝ սըտաղաղակ բանիւ սիւսածանել մերկութեանն ծածկւոյթ, դովին այդու բանիւ ցուցից յայլում տեղոյ՝ բամբասանս»

յարդարեալ ձեր նախագրութեան Գրիգորի, այլ ոչ գովեստ. քանզի որ թողոքսական վերնագրիտօղ քրիստոսազգեստ նախահայրքն գումարեալք ի Նիկիապօղիս՝ կանոնադրեցին երկակի հնգեակ և եզակի քառեակ (= ուզում է ասել 14) թուով միայն՝ ի սրբունմն կոչարանին ընթեռնուլ թուղթս զաստուածաբարոզ առաքելոյն Պաւղոսի. և ի նորապատում գրութեանն զնոյն շարագրութիւն վերառեալ է. իսկ բարեդրութեանն Գրիգոր զառ ի հարցն լուեալն և ոչ մակադրեալ ի նոր թարգմանութիւնս, վկայաբանութեամբ ճառագրեաց, թէ «Անորէն իշխանն իբրև աստուածանալն կամեցաւ, ասէ մաքուր առաքեալն, զամենեւին ընդ մեզօք դրաւեաց» (Երրորդ Կորնթ. Բ, 16). և այս ի հնապատում տառն վերատառեալ է, այլ ոչ ի նորապատում՝ շարագրութեանն: Արդ՝ եթէ սակօ ոչ գծագրութեան ի նորարեր թարգմանութեանցն՝ հնապատում (տպ. հնագում) աւետարանին իբր զոչ ճշմարիտ ի բաց ընկեցեալ՝ մերժեցի յեկեղեցւոյ, ընդ նմին խոտեալ բամբասի և մեծ մակադրիտօղն Գրիգոր, ասուերաբանութեամբ դրուատեալն ի ձէնջ» (էջ 154—155):

18. Այս հատուածների մէջ «առաջ թարգմանութիւն», «հնապատմութիւն», «հնապատում տառք», «հնապատում աւետարան» նշանակում են անշուշտ Սահակ—Մեսրոպեան խմբագրութիւնները (առաջին կամ «փութանակի» թարգմանութիւնը ասորականից և երկրորդը՝ յունականի վրայ յօրինուած), իսկ «նորապատում գրութիւն», «նորապատում շարագրութիւն», «նոր թարգմանութիւն», «նորաբեր թարգմանութիւնը» նշանակում են իմ կարծիքով մի երրորդ թարգմանութիւն, բոլորովին տարբեր Սահակ—Մեսրոպեան խմբագրութիւններից*։ Նորաբեր բառը ցոյց է տալիս նաև, որ այս, ըստ իս Երրորդ, թարգմանութիւնը չէ կատարուած բուն երկրում, այլ օտարութեան մէջ։ Խորեհնացուց վերևում մէջ բերուածը՝ գի-

* Անշուշտ այդ հին խմբագրութեանցն են պատկանում նաև Ղազար Փարպեցու և Թովմա Արծրունու ակնարկածները՝ հմմտ. Զարբ. Հ. Թարգմ. էջ 217.

տութեան արդի վիճակում, հարկաւ չէ կարելի հառկանալ պատմաբանի, այլ բոլոր հաւանականութեամբ Ղազարից յիշուած հալածուած և « փաթաղիկէս » Մովսէս փիլիսոփոսի համար, որի հետ յիշում են և ուրիշ երկու թարգմաններ՝ Տէր և Խոսրովիկ, վերջինս օտարութեան մէջ մեռած։ Պատմաբանը շահագործելով Մովսէս փիլիսոփոսի անունը՝ ստիպուած պիտի իւրացնէր և նրա գործերը։

19. Ս. Գրքի հայ թարգմանութեամբ զբաղուողները շատ անգամ են օգտուել Քաթենաւորի այս հատուածներից, գլխաւորապէս Ղուկասի ԻԲ, 43—44 տների և Կորնթացւոց Երրորդ թղթից մէջ բերուած վկայութեան [առնուած Աղաթանգեղոսից, Վարդապետութիւն Գրիգ. Գլ, ԻԵ, մեր նոր հրատ. (Թիֆլիս) § 280] համար, Մինչդեռ մեզ կարեորը այս հատուածներում հին և նոր թարգմանութիւնն է, այնչափ պարզ շեշտուած « Հերձուածոց գրքի » կտորում։ Այս « նորաբեր » թարգմանութիւնից առ այժմ մեզ շատ քիչ բան է յայտնի. 1. որ նա չունէր Կորնթ. երրորդ թուղթը, 2. չունէր Ղուկ. ԻԲ, 43—44 տները, որոնք դուրս ձգուեցան յետոյ և հին թարգմանութեան 2-երի շատերից. և 3. մի տուն միայն ունինք ապահովապէս այս թարգմանութիւնից, վերեւում մէջ բերուածը. « Ոչ աւարի տուն սկայի, եթէ ոչ նախկին հօրն կապի » (Մարկ. Գ, 27)։ Մայրադասեցիք չընդունելով Սահակ-Մեսրոպեան թարգմանութիւնը՝ հարկաւ իրենց գրութեան մէջ վկայութիւնը բերելու էին իրենց ընդունելի նոր թարգմանութիւնից, և այս բանին վկայում է Քաթենաւորը իւր ուղղակի, ոչ նուազ յունաբան և մութ ոճովը. « Այդ չարահաւեալ [Մայրադասեցիք] ղիսոբհուրգս իւրեանց՝ սկզբնականին [= սկսանին] մատննազրել այսպէս. Ոչ, ասեն, տկարութեամբ . . . » և այլն, (տես վերեւում մէջ բերուած)։ Այս միակ տան մէջ լեզուի կոճկից ամենից բնորոշն է նախկին բառը նախ-ի առմամբ։ Աւբօղ Սուրբ Գրքում, գասական թարգմանութեամբ՝ և ոչ մի անգամ չէ գործածուած նախկին բառը և ոչ նրա բարդութիւն-

ներից որ և է մէկը: Նախկին, նախկին, նախկինութիւն և այլն յունաբան դպրոցի յաճախ դորձածուած բառերիցն են (տես վկայութիւնները Հայկ. Բառ.) և մեզ իրաւունք են տալիս ենթադրելու, որ «նորաբեր» թարգմանութիւնը յունաբան էր, որ շատ լաւ յարմարում է այդ թարգմանութեան մեզ յայտնի բոլոր այլ հանգամանքներին: Տիմոթէոսի Հակաճառութեան տարօրինակ յունաբան և բաղմամբիւ, մանաւանդ նոր կտակարանից, վկայութիւնները մեզ առիթ տուին «նորաբեր» թարգմանութեան մասին այս ենթադրութիւնը կազմելուն: Հարց է, արդեօք Տիմոթէոսի հայ թարգմանչինն են բոլոր այդ յունաբան վկայութիւնները, թէ նա ձեռքի տակ ունէր մեր ենթադրած «նորաբեր» Ս. Գիրքը և թարգմանութեան ժամանակ հետեւում էր նրան, ինչպէս ուրիշները, նոյն իսկ յունաբաններից, հետեւում են հին թարգմանութեան այս կամ այն խմբագրութեանը: Այս հարցերին պատասխան տալը պահանջում է աւելի մանրակրկիտ ուսումնասիրութիւն և նոր վերերևումներ, անտիպների հրատարակութիւն և այլն, ուստի և դուրս է մնում այս յօդուածի սահմաններից: Մեր նպատակն էր միայն «նորաբեր» կամ «երրորդ» թարգմանութեան վարկածը յանձնարարել բանասէրների ուշադրութեանը:

20. Քոթենաւորի դրութեան ժամանակը մօտաւորապէս յայտնի է, եօթներորդ դարու վերջերը: Մայրագոմեցիներին նա հեղնում է ասելով, «գրէ թէ 2 (եօթն հարիւր) ամ լիեալ յետ չարչարանաց Որդւոյն Աստուծոյ՝ և այսքան ժամանակք յանդիտութեան դնացին բոլոր մանկունք եկեղեցւոյ» էջ 157: Չեռագրում եղել է 2, բայց հրատարակիչները, ինչ թւում է թէ իրաւամբ, տառերի նմանութիւնից օգտուելով ուղղել են 2 (հիմա. Օձնեցու վարժապետ Թէօդորոսի մասին՝ իւր Օձնեցու գրածները Ա. գլ.): Ուրեմն ապահովապէս եօթներորդ դարում կար այդ «նորաբեր» թարգմանութիւնը: Խորենացու ասածները իւր, այսինքն իւր փոխդանիմի մասին, Ղազարի տեղեկութիւնները, մեզ հասած հին աւանդութիւնը «երկրորդ»

կամ «փոքր» թարգմանիչների մասին, իմ այս յօդուածում արծարծուած նոր առումով, վերջապէս Տիմոթէոսի յունաբան հայ թարգմանութեան հաստատուն ժամանակը, հազիւ մի քանի տարի Տիմոթէոսի մահից (+ 477, յուլիս 31) յետոյ կատարուած, կարծեմ մեզ իրաւունք են տալիս առանց անպատեհութեան հինգերորդ դարու երկրորդ կիսին դնել յունաբան դպրոցի սկզբնաւորութիւնը՝ և այդ դպրոցի առաջին գործերիցն համարել իմ ենթադրած երրորդ թարգմանութիւնը, նոր գիւտերը և նոր հրատարակութիւնները հնարաւորութիւն կտան ապագայում իմ այս խոշոր գծերով սերուագծածը ճշտելու, լրացնելու և եթէ հարկ լինի՝ նաև փոփոխելու*:

* *

*

21. Ըստ ինքեան իմ ծրագրից դուրս էր խօսել Տիմոթէոսի Հակաճառութեան յոյն ընագրի գրութեան ժամանակի և տեղի մասին: Հրատարակիչները մի քանի կարևոր դիտողութիւններ անում են այդ մասին յառաջաբանում, հիմնուած հայ բնագրի վրայ: Ակներև է «յարտասահմանութեան պարապաւղի խօսքերից» (յառաջ. X) որ Տիմոթէոսը գրել է աքսորում. իւր հակաքաղկեդոնական գրութեանց անունները տալիս ասում է «շարագրեցի

* Խորենացու Պատմութեան վաւերականութեան պաշտպանները, խօսքս հարկաւ ոչ փողոցի, այլ այնպիսի հմուտների մասին է, ինչպէս են՝ Նորայր Բիւղանդացին, Հ. Սարգսեանը, Մալխասեանը, Կոնիքիբը, կարող են նոր ողի առնել: Տիմոթէոսի ժամանակի ճիշտ որոշմամբ այլևս ոչ մի արդելք չկայ լեզուական կոպից Խորենացու Պատմութիւնը դնել հինգերորդ դարու վերջին քառորդին, աւանդ, եթէ միայն չլինէին միւս անհարթիկ արգելաւիթները: Խորենացով զբաղւողների համար հետաքրքրական է Միլանի կամ Մեդիոլանի եպիսկոպոս Ամբրոսիոսի մի հատուածի վերնագիրը. «Երա նկուց Ամբրոսեայ եպիսկոպոսի Մեգիլանացւոց» (Տիմոթ. Լջ 18): Խորենացին ունի «Միդուդանն» (Գ. 4.), անչուշտ յոյն Δ և Δ տառերի շփոթմամբ [MIZOYΔANON կարդայուած MIZOYΔANON], Մալալասը՝ Միդուլաննոն Հմմտ. Կարիէրի Nouvelles Sources de Moïse de Khoren V, Հանդ. Ամս. 1894, փետր.: Խորենացու և Մալալասի առնչութեան խնդրի լուծման համար անկարելի չէ Տիմոթէոսի այս ասորայայն (Չ փն. Դ-ի) ընթերցուածը հինգերորդ դարից:

նախ այսորիկ մատեան Աստուծոյն Բայից»։ «Աստուծոյն Բայից» կոչուող մատեանը, ինչպէս կարելի է հետեցնել իմ կարծիքով «նախ այսորիկ» յունաբան ասացուածից, որ նշանակում է «սրանից առաջ» (հմտ. դասական «յես այսորիկ»), գրուած է Հակաճառութիւնից առաջ։ Միւս գրուածքի մասին ասուած է. «գրեցի և այժմ՝ յերկուս մատեանս», որ հրատարակիչները իրաւամբ հասկանում են Հակաճառութիւնը, իւր երկու մասերով։ Մանաւանդ այդ հետեւում է «յերկուս» ձևից, որ չէ նշանակում երկու մատեան, այլ «երկու գրքով» կամ որ նոյնն է՝ հատորով, ուրեմն խօսքը իրօք պիտի հասկանալ Հակաճառութեան մասին, որ բաղկացած է երկու մասից։ Տիմոթէոսը աքսոր գնաց 460-ի սկզբին, նախ Գանգրա և ապա Խերսոն (յառաջ. VIII)։ Հետաքրքրական է Զաքարիա Հռետորից առնուած այդ տեղեկութիւնները համեմատել Կայսերաց Պատմութեան աւանդածի հետ։ «Ղեւոյն մեծ ամս ինն և տասն (= Լևոն Ա Մակկելէսն է, 457—474 թ.) ի սորա երրորդ ամին Տիմոթեոս և Անատոլի նորին եղբայր՝ յափշտակեալ ի Սիղասկոսէ աքսորեցան ի Քերսոյն, վասն չընդունելոյ զսահման Քաղկեդոնի ժողովոյն. . . . Զենոն՝ ամս վեշտասան (474—491). . . . գրեաց թուղթ, որ կոչի Հենատիկոյն, այս է՝ միաւորիչ. . . . և գործեցաւ այս յառաջին ամի թագաւորութեանն Զենոնի. . . . և ի նմին ամի՝ հրամանաւ թագաւորին դարձաւ Տիմոթեոս յԱղեքսանդր. և յերկրորդ ամին վախճանեցաւ»։ Լևոն Ա.ը Անատոլիոս պատրիարքից թագաւոր պսակուեց 7 փետր. 457, այնպէս որ Տիմոթէոսի աքսորը 460-ի սկզբին՝ չէ հակասում Կայս. Պատմ. հաղորդածին (երրորդ ամ Լևոնի)։ Հենատիկոնի ճիշդ թուականն է 482-ը, որից երեւում է որ Կայս. Պատմ.-ը շփոթում է Հենատիկոնը և Բասիլիսկոս բռնաւորի 476-ի հրովարտակը ընդդէմ Քաղկեդոնի։ Տիմոթէոսը վերադարձաւ աքսորից 476-ին և մեռաւ 477 յուլիսի 31-ին, Զենոնի Հենատիկոնից տարիներ առաջ։ Տիմոթէոսի առաջին գիրքը ինչպէս և երկրորդը՝ Հակաճառութիւնը, գրուած պիտի լինին ուրեմն 460—476-ի մէջերը։ Այս սահմանը կարելի է

աւելի ևս սեղմել, քանի որ Գեննադիոս պատրիարքին (458—471, սեպտ.) յայտնի է Տիմոթէոսի երկի լատին թարգմանութիւնը, որով և ապահովութեամբ պիտի դնել Հակաճառութեան գրութեան ժամանակը հինգերորդ դարու վաթսուներկան թուերին:

22. Աւելի ևս կարելի էր ճշտել այդ թուականը, եթէ իմ ձեռքի տակ եղած միջոցներով կարելի լինէր իմանալ թէ քանի տարի տեւեց Տիմոթէոսի աքսորի առաջին մասը Գանգրայում, որովհետեւ հայ թարգմանութեան մի բառից կարելի է հետևեցնել, որ Հակաճառութիւնը գրուած է Գանգրայում և ոչ թէ Քերսոնում, ուրեմն Տիմոթէոսի աքսորի առաջին տարիները: Էջ 147 Տիմոթէոսը առում է, որ Դիոսկորոսին աքսորեցին «...ի Գանգրացոցն քաղաք, ի Պափղագոնիա, այստ ուր զարչաւանն կատարեաց...»: Իմ կարծիքով «աստ»ի գործածութիւնը Գանգրայի մասին՝ ապահովաբար ցոյց է տալիս, որ այդ տողերը գրելիս Տիմոթէոսը գտնուում էր Գանգրայում, եթէ Քերսոնում գրելիս լինէր՝ Գանգրայի մասին պիտի ասէր անդ կամ լաւ ևս առանց այդպիսի մի ցուցականի՝ «ի Պափղագոնիա, ուր զարչաւանն կատարեաց»: Ուրեմն Տիմոթէոսը գրել է Ն դարու վաթսուներկան թուերուն Պանգրայում: Երևի նոյն այդ տասնամեակից էր և լատին թարգմանութիւնը (471-ից ոչ ուշ): Ասորին, որին ակնարկում են և հրատարակիչները յառաջաբանում, պահուած է մի շատ հին ձեռագրում, որի գրչութեան թուականն է 562*, ուրեմն և այդ թուից առաջ է ասորերէն թարգմանութիւնը, շատ հաւանականութեամբ կատարուած նոյնպէս հինգերորդ դարում: Ինչպէս տեսանք հայ թարգմանութիւնը 480 մարտ 29—484 մարտ 28 քառամեակից է: Այսպիսով շատ կանոնի թարգմանուած է Տիմոթէոսը, և մատչելի դարձած այն դարու քրիստոնեայ աշ-

* Ռայտի Кр. Очеркъ Истории Сирийской Литературы. шп. Турева-ի թարգ. պրոֆ. Կոկովցովի լրացուցումներով С. Петерб. 1902, էջ 228.

խորհի չորս գրական մեծ լեզուներով գրեթէ ըստ գրադէտներին: Այդ ցոյց է տալիս Հակաճառութեան նիւթի հրատապութիւնը և ժամանակակիցների համար ունեցած կենսաթրթիւ նշանակութիւնը, ճիշտ այնպէս, ինչպէս մեզ համար են այժմս քաղաքական-տնտեսական խնդիրները*:

Այստեղից էլ պարզ է, որ հայերէնը հինգերորդ դարում, քրիստոնեայ քաղաքակրթ աշխարհում, անհամեմատ աւելի մեծ նշանակութիւն ունէր, քան այժմս, երբ մենք թէ թուով և թէ քաղաքակրթութեամբ շատ յետ ենք մնացել լուսաւոր ազգերից, և հազիւ թէ ընդունակ և՛ մեր ներկան և՛ մեր անցեալը ճիշտ ըմբռնելու:

ԳԱՆՈՒՍՏ ՏԵՐ ՄԿՐՏՁԵԱՆ

Յունիս 3 էջմիածին.



* Տիմոթէոսի՝ էլուրոս—կատու մականունան համար պիտի նկատել, որ Կուղ, (ասորերէն qûzâ) դասական հայերէնում արգէն նշանակում է կատու. «Կուղք և մկունք» թուղթ Բարուքայ, տ. Հայկ. Բառ. կատու բառի գործածութիւնը համեմատաբար աւելի ուշ է, առաջին անգամ մեզ յայտնի է Փիլոնի թարգմանչից (Եղիշից առաջ, բայց ճիշտ ժամանակը՝ դեռ անորոշ): Մատենադրական վկայութիւններով թէև աւելի նոր ժամանակից, բայց իրօք աւելի հին է թւում Կուղի երկրորդ նշանակութիւնը martes, սամար, որի անունը հին հայերը տուել են իրենց անձանթ ընտանի կենդանուն՝ կատուին:

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐՔԸ ԵՒ ՊԱՍԿՈՒԻԼԸ ՄԵՐ ՄԷՋ

Երեւան 46-ին Ապրիլի

Մօտ ժամանակներս լոյս է տեսել և լրագրիւններն մէջ հռանդագին յայտարարութիւններով հայ ժողովրդին է հրամայում իբրեւ ընթերցանութեան նիւթ մի գիրք, որի վերագիրն է «Իմ պատանխանը բարոյապէս ընկած և ամենքից արհամարումս ձին»։ Հեղինակը՝ պ. Լևոն Մելիք Ադամեանցը՝ 276 էջից կազմուած իր ոտուար գիրքը լցրել է մի անօրինակ, գրական ասպարիզի վերայ դեռ չտեսուած և մարդուն սարսուռ ազդող հայհոյանքներով ու գռեհկական յիշոցներով։ Նա նպատակ է ունեցել այլ միջոցով վրէժ հանել իր համագիւղացի պ. Ս. Քամալեանից, որի հետ անձնական թշնամութիւն ունի։ Գիրքը ամբողջովին ցեխ է և կարգաւ չի լինում, մի երկու տողից յետոյ ընթերցողը պատրաստ է դէն շարաւել։ Այդ բանը զգացել է հեղինակը. ուստի յառաջաբանում դիմում է ընթերցողին յանուն «ազգի գոյութեան, ընդհանուր բարոյականութեան, հայ-ընտանիքի ու գլխոցի բարոյականութեան» և խնդրում է անպատճառ կարգաւ և, թէ զուրկ չէ բարոյականութեան զգացումից, իր ասելիքը ասել՝ սակայն այն պայմանով միայն, որ հաստատէ իր ասածները, խաչին գամէ այն մարդոց, որոց ինքը մի գլուխ հայհոյում է, և յարգանքի գլուխ իջնէ իրեն՝ իր այս մեծ քաջագործութեան համար. հակառակը պնդել և մտածել համարձակողներին ոպառնում է մի շարք անյարմար անուններով*։ Սա-

* Գրական ապականութեան այս կոյտի հեղինակը մասամբ իր ապառնայիւններով կարողացել է ապահովել իրեն. այս յօդուածը պ. Թադէոսեանի ասելով ուղարկուած է եղի նախ «Մշակ» ի խմբագրութեան քայց հաւանօրէն «անյարմար անուններ» չստանալու եւ այս արտաքայ կարգի «ցած ու ստոր դրչակից» գլուխներն ազատելու համար, չեն տպել։ Ուրիշ տեղեր էլ իրենց տարբեր մտածողների հասցէին շատ աղնիւ կոհարներ ունի շուայլած. օր. եր. 422 «եթէ գտնուի այդպիսին, անշուշտ դա պիտի լինի տխմարների տխմարը, անմիտների անմիտը եւ կամ Քամալեանց Ս-ի նման այլանդակ բարոյականի տէր մի երկոտաւի հրէշ մարիշներից էլ լսել ենք. որ զարշանքով են կարողացել այդ ապականութիւնը եւ կկամենային իրենց նողկանքը յատնել, բայց վախենում են «խելագարի» հետ զօրծ ունենալուց։

Խ մ բ.

կայն հակառակ այս տարօրինակ հեղինակի աւելի քան օտարօտի պահանջի, համարձակում ենք մի երկու խօսք ասել նրա գրքի մասին, այն էս, ոչ նրա ուղած ձևով: Եւ այդ ոչ թէ նրա համար, որ տպագրում նրանից անարդարացի վերադարձներ կրելու հաճոյքն ունենանք, այլ որ անհրաժեշտութիւն է ներկայանում, ինքնին պահանջ է առաջ դալիս, որ մարդիկ խօսեն, խօսի և մամուլը, քննադատութիւնը,— և մէջ տեղից վերայնէ այն խոյտառակ դրութիւնը, այն անպատասաբեր արարքը որ Քամալեան—Բալասանեան—Մելիք Ադամեան trio-ն իրար նկատմամբ բռնել են և շարունակում են. որ վերանայ և չշարունակուի այն պատկերացին խոյտառակ դրականութիւնը, որ նայն այդ trio-ն մի ամբողջ տարի է ահա հրամայում է ընթերցող դասակարգին լրագրների միջոցաւ և տունն ընկնելու* և վերջապէս նրա համար, որ օրինակը վարակիչ չլինի և ափեղ ցփեղութիւնների մէջ տունն ընկնելու հունար ունեցողները դրական ատպարկից դուրս մի այլ տեղ վերածեն իրենց ուժերը... և ոչ թէ պոռնոգրաֆիկայով զբաղուեն, որպիսին ներկայացնում է պ. Մելիք Ադամեանի «Իմ պատասխանը»...

Պ. Լ. Մ. Ադամեանը բարկացել է այն հանգամանքից, որ իր երեւմանի սրտակից բարեկամ, իսկ այժմ անձնական թշնամի Քամալեանը իր յօդուածներից մէկում պաշտպանելով իր գրքերի արժանիքը իր գրախօսին (պ. Բալասանեանին) պատասխանելիս ասել է, թէ «խուլերի ճաշակը հաշուի չեմ տունում»: Պ. Մելիք Ադամեանը ֆիզիկապէս իրօք խուլ է. ուրախ այդ ակնարկը իր վրայ ընդունելով, զայրտում է, թէ 1) ինչո՞ւ Քամալեանը իր ֆիզիկական պակասութիւնը պակասարկելի բան է համարում և 2) ինչո՞ւ իր «ճաշակը, չի հաւանում, քանի որ Քամալեանը իր ճաշակով է մարդ դարձել (էջ 178, 192, և 196): Սրանից զայրանալով, որ ոչ մի խելքը գլխին մարդ չէր անի,— պ. Մելիք Ադամեանը չի խնայում իր մարդ լինելը, չի խնայում և զրականութիւն, մամուլ, էսկիկայ և այլն բաներ, և ամենալիտի խօսքերով շարունակ հայհոյում է իր թշնամուն: Եւ հայհոյում է անխնայ, ամեն քայլափոխում. իւրաքանչիւր տողի մէջ,

* Ա. Քամալեանից Յ.—Ի՞նչու էր հերոստել. X հարուստը մախա-
թի ծակում, եւ Փորրոյի բարեկամներ. 4907 թիֆլիս.

Բ) Գրիգոր Բալասանեան —Հեռու փախիր զրական լիտիզանից,
Թիֆլիզ. 4907 թ.

Գ. Մ. Ադամեանի ներկայ գրախօսականի նիւթ եղած դիրքը:

Դ) Շմեղ.— X հարուստը կոպտաշտ եւ Մախաթի ծակում, Թիֆ-
լիս. 4908.

նոյն խակ ամեն բառից յետոյ: Աւ ինչեր ասէր, որ չէ ասում. «կըբոտ գըչակ», «անամօթ», «լիւրբ», «անբարոյական ուսուցիչ», «գըրական պոռնիկ», «խուլիգան», «էշ», «քոսոտ շուն», «դոմշի թըրէք», «անաբուռ», «աննամուս», «լիտի», «լպիւրշ», «արուա-գէտ», «անարգ արարած», «սխալմամբ մարդ կոչուած», «բա-րոյապէս ընկած», «ամենքից արհամարուած», ևայլն, ևայլն... կատարեալ ցեխ, մի խոշոր ապականութիւն, որ կըքից կուրա-ցած հեղինակը ուղում է շարտել իր անձնական թշնամու վրայ, բայց չի գիտում, որ շարտելու համար իր ձեռքն է վերցնում այդ ամբողջ ապականութիւնը, իր բերանից են դուրս գալիս այդ բնտիր մարգարիտները, և որ դորանով ինքնէլ իր ամբողջ էութեամբ արդէն այդ ապականութեան մէջ թաւալում է:

276 էրես Շարուհակ հայնոյելու համար մի տարօրինակ ե-ւանդ է հարկաւոր, որի տէրը գիտար թէ հոգու բնական վի-ճակ ունենայ: Որպէս զի միայն հայհոյելու համար խօսելու նիւթ ունենայ պ. Մել. Ադ. դիմումէ մի կողմից ծիծաղելի, միւս կողմից աններելի միջոցներ: Սյդպէս օրինակ նա պատ-մում է իր աշակերտական—ընկերական կեանքից մի գէպը. և իր թշնամու (Քամ.) հետ պատահած վաղեմի այդ մի չնչին գէպի զգուշացումով 15—26 էրես շարունակ հայհոյում է: Շատ բնորոշ է այդ կտորը: Դա ցոյցէ տալիս ոչ միայն այն, որ հեղինակը կա-տաղի բնաւորութեան տէր և բժախնդիր մարդ է, այլ և զուար-ճալի է այն ծիծաղելի եղբակացու թեամբ, որ իբր թէ ինքը ուղե-ցել է, դեռ հազիւ ներս. Դպւի դ. գառ. աշակերտ, իրենց զիւղի համար լաւ քահանայու դաստիարակել Քամ. ին:

Աւ այսպիսի տեղեր շատ կան, ուր կարեւորը ոչ այնքան նիւթն է, որքան այն որ նիւթի առիթով հնարաւորութիւն է գտնում իր թշնամուն մի գլուխ հայհոյելու, որ սիրտը հովանայ: Ճնշում դորձ գնելով Ձեր վրայ, կարդում էք այդ՝ ամբողջովին հայհոյանքից, ցեխից, կազմուած գիրքը և գալիս էք այն եղա-կացութեան, որ պ. Մել. Ադ. հայհոյելու և յականէ յանուանէ վիրաւորելու մի առանձին հիւանդութիւն ունի: Նա պիտի հայ-հոյի այն բոլոր մարդոց, որոց ինքը ճանաչում է, կամ որոց հետ երբ և իցէ հաշիւ է ունեցել, չնայած որ այդ մարդիկ ոչ մի կապ չունին՝ Քամալեանից վիրաւորուած լինելու իր խնդրի հետ: Սյդպիսի տեղերից է Սահակ քհ. Սահակեանի մասին պատմածը (38—42 էջ), որ իբր. թէ մի օր ՍՏ. քհ. հիւանդացած ժամա-նակը օգնել է նրան, բայց նա առողջանալուց յետոյ, երբ «ոչ-բարով աստուածաբանութիւն սովորած, Թիւրիզի յայտնի եկե-ղեցիներէ մէկում հազարներ ստացող միաբան էր, այնպիսի

ստորութիւններ արաւ, այնպիսի տգեղ դեր ստանձնեց իմ լե-
րաբերմամբ, այնպիսի անաղնուծիւն, այնպիսի երախտամո-
ռութիւն արաւ, որին կարող եր նախանձել անպիսան ու անագնիւ
Քամալեանցը» (Էջ 40): Իսկ թէ լինչէ արեւ իրօք Ս. քհ.ն այդ չի
յայտնում և չի տուում ոչ մի տեղ: Պ. Մեւ. Ադ. այնքան բժա-
խնդիր է, որ մի «և»-ի համար երեսներ է նուիրում, որպէս զի
փաստացի խօսած լինի. իսկ Ս. քհ.ն համար ոչինչ չի յիշում:
Նւ. գալիս էք այն եղբորակացութեան որ այդ բժախնդիր զրաբանը
կամ շօշափելի բան չունի յիշելու, կամ եթէ ունի էլ, այնպիսի
բան է, որ եթէ յիշի, դուցէ իր ասածի հակառակը կապացուցի:
Եւ այդ առանց փաստի մեղադրանքները համար, առանց խղճի
խայթ զգալու, անդուռն բերանով հայհոյող մարդը խեղճ Ս.
քհ.ն յանիրաւի մի շարք լիակ և կեղտոտ ածականներ է տա-
լիս: Ընթերցողի համար պարզում է մի տիպը հանդամանք, այն,
որ այդ անտեղի վերաւորանքը Ս. քհ.ն հասցէին գրել է միայն նրա
համար, որպէս զի մի կերպ դրա հետ կապի Քամալեանի անունը եւ
այդպիսով Քամ. ին վերաւորած լինի: Ուրիշ եղբորակացութիւն
հանել դժուար է այս անփաստ կտորից, քանի որ հեղինակը այն-
քան շատ բժախնդիր և փաստասէր է: Իսկ այս արդէն անցոր-
մալորեան նշանէ: Եթէ կարելի է գէպի Քամ. ունեցած կրքից
այնքան հուրանալ, որ առանց շօշափելի փաստի մարդ ցեխ
շպրտի մի քահանայի վրայ, որին թէ թիփլիղում և թէ դուրսը
ճանաչում են իբրեւ ըստ ամենայնի լաւ և զարգացած մարդ:
Երկար տարիների ուսուցիչ և քահանայ լինելով, Ս. քհ.ն ունի
մի շարք աշակերտներ և համակրողներ, որոնց համար օտարո-
տի է և անհասկանալի նորա հասցէին շուայած հեղանակի ան-
լուր հայհոյանքները: Իսկ թէ իրօք կրթուած քահանայ լինե-
լու համար յարգում է ծխականներից և լաւ վարձատրւում,
կամ եկեղեցու ծուխը իբրեւ կրթուածի հաղարներ է տալիս,
այդտեղ քահանան ինչով է մեղաւոր, որ նրան զանազան անուն-
ներով պ. Մեւ. Ադ.-ը հայհոյի: Ընդհակառակը այդ առթիւ
միայն պիտի ուրախանար «հասարակական դրժիչը» և «ժողովրդի
շահերից» խօսողը, իչպէս պ. Մեւ. Ադ. է իրեն անուանում: Ինչ
վերաբերում է Ս. քհ.ն աստուածաբան լինելու ծաղրին (որ
յամենեան դէպս պ. Մեւ. Ադ. ին անձնապէս չի վնասում) այդ-
տեղ արդէն առողջ դատողութիւն ունեցող մարդիկ լուծում են...
Թէ իրօք Ս. քհ.ն աստուածաբան է (այս բառի ոչ ամբողջա-
յին, այլ լաւ մտքով) այդ երևում է նրա սիրուն կերպով կազ-
մած մի շարք դատադրքերից: Սակայն օգտուելով ամբոխային
սրամադրութիւնից, կախում է «աստուածաբան» բառից և

շարունակ հայհոյում այն տրամաբանութեամբ միայն, որ իր անձնական թշնամի Գամա-ը նոյնպէս ուստուածաբանութիւն ուղղորդելու արասն է ունեցել: Այսպիսով թշնամուն անյատակ հայհոյելու միջոց ունենալու համար պ. Մել. Ադ. անարդարացի կերպով մէջ է բերում իր խնդրի հետ կապ չունեցող կողմնակի անձանց և առանց փաստի նրանց էլ հայհոյում է: Այսչափ էլ մարդ կուրացած և տարուած կլինի՝ կրքից... Այս լնչ հոկայական չափի կիրք է, որ խելակորոյս գրութեան է հասցրել հեղինակին: Գրքի սկզբից մինչև վերջը կրքից կուրացած, չի բաւականանում անասելի հայհոյանքներ տալուց, այլ և շարունակ թքում է... և այնչափ շատ է թքում, որ կարծէք թքարան լինի: Ձբաւականանալով գորտնով կիրքը այնտեղ է հասցնում պ Ն. Մել. Ադ.-ին, որ ուզում է իր թշնամուն «աչքի տակից տիկ հանել»: Մարդ մնում է շեւարած, թէ այսչափ կրքի տէրը կարճ է խելացի վայրկյաններ ունենալ: Նահատակելով Ձեզ, կարգում էք մի կերպ այդ մեծ աղբակոյտը, աչքի էք անցնում այս հսկայ 276 երեսանոց անկապ ցնդաբանութիւնների ժողովածուն, տեսնելու թէ ո՞ւր կհասնի սրա վերջը, և գալիս էք այն եզրակացութեան, թէ դուք ունիւր իրօք ցնորված մի «սրասկզիւնեանի» հետ և Ձեր առաջ ընկած է «խելագարի յիշատակարանը»... Ընթերցողի մաքով ահամայ այն միտքն է անցնում, թէ այս գրքի հեղինակի տեղը գուցէ դժանոյն է, բայց ոչ գրական ասպարէզը:

Յովհաննէս Թադէոսեան

1. Начальная Русская хрестоматія для Армянъ. 1-ая книжка դաստանդութեան բացատրութիւններով. աշխ. Սեդրաք Մանդինեան, Թիֆլիզ. 1907, Հրատ. Գուտենբերգի. Գինն է 55 կ.

2. Նոյնը 2-րդ книжка, Թիֆլիս, 1907 Հրատ. Բազումայ Հայոց կուլտուրական միութեան. Գինն է 75 կ.

Ռուսաց լեզուի այս երկու դասագրքերն էլ նորութիւն են մեր մանկավարժական աշխարհում: Պարոն Ս. Մանդինեանցը, մեր մանկավարժութեան հիմնադիրներից մէկը, այս դասագրքերով լրացնում է այն մեծ պահապը, որ դպրի է եղել իւրաքանչիւր փոքր ի շատէ բարեխիղճ և իւր կոչումն ըմբռնող ուսուցչի համար: Հայ դպրոցներին մինչև այժմ պահապում էր ռուսաց լեզուի դաստանդութեան մի ձեւնարկ, որ համապատասխան լինէր մանկավարժական տարրական պահանջներին: Հայ դպրոցները ողողել են մեր մանուկների դարգացման համար անհամապատասխան ռուսաց դպրոցների կամ միջադ-

գային դադարեցրելով թխուած դատաբարքերը, որ մանկավար-
ժական տեսակէտով արտուրդ են: Մանկավարժութեան տար-
րական պահանջներէց մէկն է մայրենի լեզուն հիմք դարձնել
օտար լեզուի ուսուցման համար և ծանօթից անծանօթն անց-
նել: Իսկ մի դատաբարք, որ կազմուած է միայն ռուս մանկան
համար, այս պահանջին ըստման տալ չի կարող, առաւել ևս
անյարիր պէտք է համարել, երբ դատաբարքը կազմուած է հայ,
վրացի և թուրք մանուկներէ համար միայնգամայն:

Պ. Մանդինեանցը իւր վերոյիշեալ դատաբարքերով դաշիս
է խորատկելու մեր մէջ անբապետող դարձած մանկավարժա-
կան այդ հիմնական սխալը: Ռուսած լեզուի դատաբարքն էլ իւր
հայացի ընդթը պիտի ունենայ հայ մանկան աշխարհայեացքի
համապատասխան և նորա ուսուցումն էլ պիտի հիմնուի մայ-
րենի լեզուի վրայ: Հեղինակը բառական կամ նիւթական թար-
գմանութեան փոխարէն, որով տաղտկալի էր դառնում դատա-
ւանդութիւնը, առաջարկում է իմաստի. հայացի թարգմանու-
թեան եղանակը: Պորանով նա մի մեծ չարիքի դէմ է մարա-
ռում, որը խոր արմատներ է ձգել մեր մէջ ի վնաս մայրենի
լեզուի մարքութեան և կենդանութեան: Մեր արդի լեզուի
խճողումն ու օտարաբանութեան բազմաթիւ երևոյթները մա-
սամբ հետեւանք է բառացի թարգմանութեան մեթոդի: Բառ
առ բառ թարգմանելով և ռուսերէնի դատաւորութեան հա-
մաձայն, մանուկը հետզհետէ ընտելանում է դորան, առանց
կարող լինելու գանադանել մայրենի լեզուի ինքնուրոյն յատ-
կութիւնները: Իսկ ինչ մանկական հասակից է իւրացրած,
դժուար է արդէն արմատախիւ անել ապագայում: Պ. Մանդի-
նեանցը իւր դատաբարքից իրաւամբ դուրս է վանել բառարանն
ու ֆրազալօգիան: մեռած գրքի փոխարէն ուսուցչի կենդանի
լեզուն ու բացատրութիւնը պիտի բռնէ, աչքից աւելի աշա-
կերտի լսողութիւնը պիտի վարժուի օտար լեզուի ուսուցման
ժամանակ, ինչպէս այդ ընականաբար կատարւում է ընտանիքում
մայրենի լեզուի վերաբերութեամբ: Հեղինակը պահանջում է կա-
նոնի ենթարկել նաև բանաւոր, գրաւոր և ընթերցանութեան
վարժութիւնները և ոչ թէ պատահականութեան թողնել, ինչ-
պէս յաճախ լինում է մեր դպրոցներում: Ահա այն դիւաւոր
սկզբունքները, որ հեղինակը բացատրում է Ա. գրքի յառաջա-
բանում և որով ղեկավարուել է իւր դատաբարքերը կազմելիս:

Նա ընտրել է ռուսաց գրականութիւնից գեղարուեստա-
կան արժէք ունեցող գրուածներ և նոցա դէմ դրել հայացի
թարգմանութիւնը հայ բանաստեղծներէ ձեռքով կամ նման

ըովանդակութեամբ մի բան հայոց գրականութիւնից: Այսպիսով ուսուցչին դիւրութիւն է ընծայուած ծանօթից անծանօթին տնցնելու, մայրենի լեզուն և աշխարհայեացքը հիմք դարձնելու նոր շէնքի կառուցման համար և աշակերտին վարժեցնելու ազատ թարգմանութեան: Առաջին գրքի վերջում պ. Մանգինեանցը գրել է նաև իւր առաջարկած սկզբունքներով դասաւանդութեան մի շաւիղ. Сказка о царѣ Салтанѣ հատուածը դասերի է բաժանել և գործնականապէս ցոյց տուել դասուանդութեան եղանակը: Այդ մասը ուսուցիչներին համար պարզ ցուցումներ է տալիս, թէ ինչպէս պէտք է ընթանայ ռուսերէնի ուսումը հայ դպրոցներում: Նրկրորդ գիրքը այդ բացատրութիւնները չունի, հեղինակը խոստանում է հրատարակել ապադայում: Այս գրքում «հայ աշխարհայեցողութիւնն ու բուն ռուսաց լաւագոյն ստեղծագործութիւնն» զուգակցուած են աւելի յաջող կերպով: Գործնական տեսակէտով գնահատելի է նոյնպէս, որ «Տարաս Բուլբան», որ մանուկների ուսումնասիրութեան գլխաւոր հատուածն է, ապուած է խոշոր տառերով:

Խորհուրդ կ'տայինք մեր ուսուցիչներին լաւ ուսումնասիրել պ. Մանգինեանցի այս դասագրքերը, որպէս զի անձամբ համոզուին, թէ պէտք է վերջապէս մեր դպրոցներից իսպառ վանել հին, հակամանկավարժական մեթոդով և հայ մանուկներին աշխարհայեցողութեան անհամապատասխան ձեռնարկները և լիտարինել լեզուի կենդանի ուսուցման եղանակով: Ա. Գիւրքը կազմուած է երրորդ նախակրթարանի համար, ուր ըստ նոր ծրագրի պէտք է սկսուի ռուսերէնի ուսուցումը, իսկ Բ. Գիւրքը Ա. դասարանի:

Գ.

Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք

ԷԶՄԻՍԾԻՆ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Շատոնց է որ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան կեդրոնը, Էջմիածին, անուշով միայն հեղինակութիւն ունի Տաճկահայոց մէջ: Տաճկահայոց բոլոր հոգևոր գործերուն կարգադրութիւնը կեդրոնացած է Կ. Պոլսո՝ Ազգ. Պատրիարքարանի մէջ: Պատմականապէս յայտնի է, որ Կ. Պոլսի Պատրիարքները ճանչնալով հանգերձ Ամենայն Հայոց Կաթողիկոսին գերիշխանութիւնը և ընդհանրական հեղինակութիւնը բոլոր հայ եկեղեցւոյ վրայ, միշտ ուղած են իրենց համար փառասոր դիրք մը ապահովել: Գոնէ նշանաւոր Եղիազար Կաթողիկոսէն ի վեր շատ ուշադրաւ է այս իրողութիւնը՝ նոյն ինքն եղիազարու՝ Էջմիածինէն և Սիսէն անկախ, ուղղակի Տաճկահայոց համար առաջադրած և կերպով մըն ալ իրագործած առանձին Կաթողիկոսութիւն մը հաստատելու ծրագրով: Սիսոն Կթզ. արզէն յայանապէս քննադատած է Զամբուի մէջ, թէ և քիչ մը անիրաւ կերպով, Կոստ Յովհաննէս Պատրիարքի բռնած ընթացքը՝ Կարապետ Կթզ.-ի ընտրութեան և հաստատութեան առթիւ, որուն մէջ Կ. Պոլսի Պատրիարքը այնպիսի հովեր կ'աւնէր, որ այլ ևս Կ. Պոլսի Առաջնորդին հովերը չէին: Ամենայն Հայոց Կաթողիկոսի Նուիրակներուն Կ. Պոլսէն վտարումները Պատրիարքներու զրդու մով, արտայայտիչ ապացոյցներ են Ազգ. Պատրիարքարանի ձգտումներուն, որոնք սակայն Պատրիարքներու փառասիրութեան արդիւնք չէին պարզապէս, այլ հետեանք էին հեղհեռէ ձեռնորուն դադաքականութեան մը, որով Օսմ. Կառավարութիւնը չէր կրնար հաշտ աչքով դիտել հետեւէն եկող աշխարհական և կրօնական սև է ազգեցութիւն իր երկրին մէջ գոյութիւն ունեցող պաշտօնական շրջանակներու վրայ: Կ. Պոլսի Պատրիարքութիւնը, իր ծագման մեջ առաջնորդութիւն մըն էր, հաստատուած Յաթիհ Սուլթան Մէհմէտի բարեկամութեամբ: Արդ՝ նոյն ինքն Օսմ. Կառավարութիւնը պիտի ուղէր, որ իր իսկ ձեռքով հաստատուած հոգևոր իշխանութիւն մը կեդրոն դառնար Օսմանեան պետութեան մէջ գոնուող Հայ եկեղեցիներու համար, և այսպիսի դադաքականութիւն մը այնքան իրաւացի էր, որ պիտի չլացնէր Պատրիարքներն ալ այդ բացառիկ դիրքին ճոխութեամբ:

Կովկասի, հետևաբար Ս. Էջմիածնի, Օսմ. Կառավարութեան

ձեռքէն ելլելով՝ Պարսիկ և Ռուս Կառավարութեանց ձեռք անցնելը, աւելի ևս զօրացուց Կ. Պոլսի Պատրիարքին բացառիկ դիրքը. վասն զի այլ ևս ոչ է յարաբերութիւն արտասահմանի հետ լրտեսութեան հաւասար բան մը կը նկատուէր, և արդէն Կաթողիկոսական Նուիրակներուն պաշտօնին ջնջումն ալ Թուրքիոյ մէջ իսկապէս հիմնուած էր լրտեսութեան կասկածին վրայ: Աւելի յայտնի պաշտօնական գէտքեր չուշացան էջմիածինը Կ. Պոլսէն կամ Թուրքիայէն դատելու: Պօլսէնի մէկ կողմէն, Սահմանադրութիւնը միւս կողմէն առանձին առանձին կարծես կը կերպաւորէին հոգևոր իշխանութեանց որոշ կեդրոններ: Մակար Կթղ. -էն ետքը իրաց վիճակը բոլորովին փոխուեցաւ: Խրիմեանի Կաթողիկոսութիւնը, — որուն համարմտ չէր ամենեկին Օսմ. Կառավարութիւնը, որովհետեւ հայկական շարժում ըստած անհաշիւ իւրտումներուն բուն հեղինակը ճանչցուած էր, — Տաճկահայոց մէջ տեղի ունեցած կոտորածները՝ բոլորովին հեռացուցին էջմիածինը Կ. Պոլսէն կամ Թուրքիայէն: Ռուսիան՝ արդէն հայ յեղափոխականներու կեդրոն նշկատուած, յեղափոխական Կթղ. մը Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռին վրայ նստած, ասոնք քաղաքականապէս վստ և շատ խրտուրիչ տպաւորութիւն մը կ'ընէին Օսմ. Կառավարութեան վերայ, որ ամէն միջոց ի գործ դրաւ և հասկըցուց Ազգ. Պատրիարքարանի, թէ ինքը՝ Կառավարութիւնը՝ իր երկրին մէջ, իր երկրին համար նայող հոգևոր իշխանութեան կեդրոն կը ճանչնայ իր հաստատած Պատրիարքարանը: Վերջին ատեններ այս քաղաքականութիւն ուղղակի արգիւնք եղաւ Տաճկահայոց կարգ մը Սուլտորդներուն եպիսկոպոսութեան եթէ ոչ խափանումը, զոնէ անպայման յետաձգումը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսին անունը միայն կը յիշուի Տաճկահայոց Եկեղեցիներու մէջ, և Ազգ. Պատրիարքարան թղթով միայն կը մշակէ իր յարաբերութիւնը, այն ալ ամուսնական ինչ ինչ խնդիրներու համար, և կենդանի յարաբերութիւնները կ'արդելուն պաշտօնական ձգձգումներով: Օրմանեան Պատրիարքի յարաբերական զբաղումներուն ամէնէն փափուկ կետէրէն մէկը եղաւ վերջին տարիներու մէջ, Տաճկահայոց եպիսկոպոսացուներուն էջմիածին երթալու խնդիրը, և Կառավարութիւնը այնքան յայտնի կերպով դժկամակեցաւ այս մասին, որ ըսաւ. Պատրիարքին. «Յունաց Պատրիարքը ինքը կը ձեռնադրէ իր եպիսկոպոսները, Դուն ալ քուկիներդ ձեռնադրէ», և երբ Պատրիարքը բացատրեց, թէ այդ իշխանութիւնը Կթղ.ին է Հայ Եկեղեցոց մէջ, շատ լաւ, ըսաւ. Կառավարութիւնը, եթէ այդպէս է, թող Կիլիկիոյ Կթղ. -ը ձեռնադրէ. այն ալ Կաթողիկոս է. ինչ հարկ կայ էջմիածին զրկելու եպիսկոպոսացուները. Օրմանեան հասկըցուց՝ թէ Ամենայն Հայոց

Կթղ.-ին իրաւունքն է Կ. Պոլսի Պատրիարքութեան եպիսկոպոս-
ները ձեռնադրել Կառավարութիւնը չպնդեց յայտնադէս և չպըն-
դեր, բայց անցազիր ալ չտուաւ, և հիմայ Ամենայն Հայոց Կթղ.-ին
վախճանումով՝ խնդիրը ինքնին ջուրը ինկաւ Թերեա Խրիմեան
Հայրիկ չվախճանած, այսինքն՝ դո՛ւն է՝ 11, 2—2 տարի յառաջ, Տաճ-
կահայոց համար իր վերջին եպիսկոպոսական ձեռնադրութիւնը
կատարէր, եթէ Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը չփութար Ազգ. Պատ-
րիարքարանի համար գաղտագողի ձեռնադրութիւն մ'ընել՝ եպիս-
կոպոսացնելով Ատանայի Առաջնորդ Մուշեղ Ծ. Վ.-ը, եթէ Սահակ
Կթղ.-ին մնար՝ պիտի չփութար այդ ձեռնադրութիւնն ընելու,
բայց Մուշեղ Վրդ. ապօրինի միջոցներու գիտեց և Ատանայի Վա-
լիին ձեռքով ստիպեց Կթղ.-ը, որ զինքը եպիսկոպոս ձեռնադրէ.
և այս բոլոր գործողութիւնները տճապարարելով և Ազգ. Պատ-
րիարքարանէ գաղտնի կերպով կատարուեցան, և ետքը սկսան լրա-
գրական չտեսած նկարագրութիւններ այս ձեռնադրութեան մասին
և բանակցութիւններ Ազգային Պատրիարքարանի և Կիլիկիոյ Կա-
թողիկոսարանի մէջ, որ յայտնի վախճան մը չունեցաւ դեռ:

Թէ Մուշեղ Եպս.-ի ձեռնադրութեան մէջ ինչ գեր խաղցաւ
Երուսաղէմի հաշուական խնդիրը, որուն հեղինակներէն է Սահակ
Կթղ., իբր երբեմնի Լուսարարապետը Ս. Յակոբայ վանքին, թէ
ինչեր ըրին յայտնի լրտես Կէօջէ օղլու Անտոն էֆ. և Երիցեան
Գէորգ Եպս. եւն, ձախողութեան մասնելու համար Օրմանեան
Պատրիարքի գիմուսներուն արգիւնքը՝ որպէս զի Պատրիարքարանը
ընկճուի, ասոնց պատմութիւնները զլուելի են Ըսենք միայն, թէ
Մուշեղ Եպս.-ի Ազգ. Պատրիարքարանէ գաղտնի ձեռնադրութիւնը,
հերոս Գիւտ Խաչին, չտրհիւ հայ լրտեսներու, Կառավարութեան
համար ուշադրաւ և յայտնի առիթ մը եղաւ անհետեանք ձգելու
Օրմանեան Պատրիարքի գիմուսները՝ իր եպիսկոպոսացուները Էջ-
միածին զրկելու մասին: Եւ հիմայ, ինչպէս գիտել տուինք, Ամե-
նայն Հայոց Կաթողիկոսին մահը, ինքնին վերացուց խնդիրը—
չենք գիտեր որչափ ժամանակի համար:

Կաթողիկոսական նոր ընտրութեան առթիւ, երբ Պատրի-
արքը գիմէ Կառավարութեան՝ որպէս զի հաճի անցագիր տալ Տաճ-
կահայոց պատուիրակներուն, յայտնի պիտի ըլլայ, թէ Օսմ. Կա-
ռավարութիւնը ինչ միտքի վրայ է դեռ Էջմիածնի և Ազգ. Պատ-
րիարքարանի, կամ Ռուսահայոց և Տաճկահայոց յարաբերութեան
նկատեամբ: Առ այժմ կանուխ է ու է կարծիք յայտնել այս մասին:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

— Կովկասի Հայոց Բարեգործ. Ընկերութիւնը որոշել է բանալ Թիֆլիսում մի կենդրոնական հայկական զբաղարան-ընթերցարան և այդ առթիւ ընտրուած է մի մասնաժողով նախագահութեամբ Լէօն և քարտուղարութեամբ Լ. Բաբայեանի: Մասնաժողովը որոշել է ամենից առաջ աշխատել ձեռք բերել հայերէն լոյս տեսած բոլոր գրքերը և կովկասագիտութեան ու հայագիտութեան վերաբերեալ ամեն լեզուներով հրատարակուած բոլոր գրուածքները: Ապագայ այդ հսկայական և կարևոր գաղարանի իրը հիմք պէտք է ծառայէ Բարեգործական Ընկերութեան զբաղարանը:

— Թիֆլիսում հրատարակուած է մի նոր հայերէն պատկերազարդ շաբաթաթերթ «Գրականութիւն և Կեանք» անունով Գր. Բալասեանի խմբագրութեամբ:

— Յայտնի վաճառական Բագրատ Գէորգեանը համաձայնութիւն է յայտնել Բաքուի Հայոց Կուլտուրական Միութեան յառկացնել 10,000 ըսւելի, որպէս զի Միութիւնը բանայ մի տարրական դպրոց Ադուլիոյն կից Բաղաքիկ գիւղում:

— Կառավարութեան կարգադրութեամբ Թիֆլիսում արգելուած է ժողովրդական համալսարանում հայերէն դասախոսութիւններ անելը: Փակուած են նաև Յովնանեան դպրոցին կից գանուդ հայկական հանրակրթական կուրսերը:

— Բաքուում բժիշկ Զախարէգեանը իւր բոլոր կարողութիւնը, մօտ 40 հազար ռուբլի կտակել է Բաքուի Հայ. Կուլտուր. Միութեան՝ գիւղական դպրոց ու զբաղարան հիմնելու նպատակով:

— Մայիսի 5-ին Թիֆլիսում ինքնաուսանութեամբ վերջ գրեց իւր կեանքին և 9-ին խուռն բաղմութեամբ ու պակնեւորով թողուեցաւ Խոջիվանքի գերեզմանատանը հայ երիտասարդ զբաղէտներից մէկը—Գրիգոր Վանցեանը:— Ներսիսեան դպրոցն աւարտելով հանգուցեալը ուսել էր Գերմանիայում 4 տարի և վերադառնալով Թիֆլիս անձնատուր եղել մանկավարժական ասպարէզին, ստանձնելով հայերէնի դասեր Թիֆլիսի Առևտրական դպրոցում: Նա յայտնի էր և պարբերական մամուլի մէջ

իւր գլխաւորապէս հայերէնի վերաբերեալ լուրջ յօդուածներով ու հայկական կեանքի ուսումնասիրութիւններով, որոնց գլուխ գործոյն է նորա «Հայ բօշաներ» աշխատութիւնը:

Հանգուցեալը կազմել է նաև մի շարք դասագրքեր մեր դպրոցներէ համար, որպէս՝ «Հայ հեղինակներ», «Համառօտ հայոց պատմութիւն», «Պատմական քերականութիւն», «Դպրոցական քերականութիւն», «Գրպանի ուղղագրութիւն» և այլն:

Հանգուցեալի եղբրական մահը ամէնքին ցաւ է պատճառել. նա թողել է մի նամակ, որով խնդրում է իւր մահուան համար ոչ ոքի չմեղադրել:

— Արատահմանի հայ թերթերը հաղորդում են, որ Մոսկուայի դրամատիք Յովհաննէս Ժամհարեանը 30,000 Քրանկ է նուիրաբերել Երուսաղէմի Ս. Յակովբեանց ժառանգաւորաց դպրոցին, որպէս զի այդ դումարով նոյն դպրոցում յատկապէս կրօնական գիտութեանց նուիրուած երկու բարձրագոյն դասընթացքներ բացուին:

— Թիֆլիսեցի Ե. Զոհրաբեանը Ախալցխա քաղաքին 800 ռուբլի է նուիրել, որ իւր անունով մի հիւանդանոց հիմնուի:

— Մայիսի 13-ին ձեմարանական ընտանիքում մի դժբախտութիւն ևս պատահեց. մեռաւ թոքերի արիւնհոսութեամբ Ա. լտարանի սոն տաճկահպատակ 22 տարեկան երիտաւորդ Արշակ Արարատեանը: Հանգուցեալի ծնողները Էջմիածին էին եկել 1896 թուի գաղթին և հայր ու որդի տեղաւորուել ձեմարանում, որդին իբրև ձեմարանի սոն, հայրը իբրև նոյն հաստատութեան ծառայ: Վաղամեռիկ Արարատեանը ջանասէր աշակերտներէց էր. հանգուցեալին թաղեցին Գոյիանէի դերեզմանատանը. դադաղի վրայ վշտահար ընկերները գրել էին թարմ պսակներ:

— Նորերս Ֆրանսիայում մեռաւ գիտութեանց ձեմարանի անդամ Ֆրանսուա Կոպպէն, ամենքին յայտնի գրականագէտներէց մէկը, որի երկերը թարգմանուած են շատ լեզուներով, ինչպէս նաև մի երկուսը հայերէն:

— Շուշեցի հանգ. Հայրապետ Ղալամեանը կտակով յատկացրել է 4000 ռուբլի բարեգործական նպատակի:

— Եգիպտոսի Հայոց բարեգործ. միութիւնը 380 եգիպտական ոսկի է ուղարկել Հայաստանի կարօտեալներին:

— Անխոնջ հնարան պրոֆ. Մառը յունիսի սիկդըներին

վերսկսելու է Անիում և շրջակայքում իւր պեղումները: Յուր-
գելի հնախոյզը մտադիր է Անիում հիմնել յատուկ թանգա-
րան, ուր ժողովել կարելի լինի պեղումների բոլոր արդիւնք-
ները. ինչպէս նաև պատրաստել տալ հռչակաւոր մայրաքա-
ղաքի յատակագիծը և տեղատարակ Անիի աւերակների պահ-
պանութեան խնդիրն ու կառուցուելի թանգարանի հարցը
լուրջ հողի վրայ դնել: Անիից դուրս պեղումներ կատարելու է
պ. Մառը գլխավորապէս՝ Երերոյքի տաճարում ու Զաքարիա
սպարաւարի առհմի կառուցած ապարանքներում:

— Թիֆլիսում եռանդուն կերպով շարունակում են հե-
տաքրքրուել կաթողիկոսական խնդիրներով և այդ առթիւ
արդէն ընտրուած պատուիրակները, դաւառից եկած ներկա-
յացուցիչների հետ միասին խորհրդակցական ժողովներ են դու-
մաբում:

— Մայիսի 22-ին Թիֆլիսում — Արախտիքական թատրոնում
շքեղօրէն տօնուել է Գրական դործիչ Լէօ-ի 25 ամեայ յօբե-
լեանը: Մուտքը թատրոնի դահլիճ եղել է ձրի տոմսակերով:

Յորեկարին բեմ են առաջնորդել երկու հայ վեսերան-
ներ — Գ. Սուսդուկեան և Ղ. Աղայեան, որոնք և առաջին շնոր-
հաւորական խօսքերն են արտասանել: Ապա հետզհետէ շնոր-
հաւորել են ներբողական խօսքերով բոլոր պատգամաւորները,
որոնց թիւը եղել է մի քանի տասնեակ: Նորին ամենապատ-
ւու թիւն Տեղակալ Սրբազանի օրհնութեան թուղթը կարգա-
ցել է բժշկապետ Բ. Նաւասարդեանը, իսկ Էջմիածնի ձեմա-
րանի կողմից շնորհաւորել պ. Ա. Ահարոնեանը:

Յորեկեանի առթիւ ստացուած բազմաթիւ հեռագրերից
կարգացուել են մի մասը, որոնց մէջ և Էջմիածնի ձեմարանինը:
Յորեկեանը ստացել է և թանկագին նուէրներ:

Յորեկարի շնորհաւորական ջերմ խօսքերով հանդէսը փա-
կուելուց յետոյ, նորա բազմաթիւ յարգողները ճաշ են սուր-
քել «Փանտաղիա» այգում:

— Կովկասի փոխարքայի ամուսին կոմսուհի Դաշկովա-
ն մօտ օրերս այցելելով Թիֆլիսում «Մեղու» ընկերութեան ար-
հեստանոցը, նուիրել է 100 ռուբլի: Ընկերութեան ընդհ. ժո-
ղովը մրաձայն ընտրել է կոմսուհուն ընկերութեան պատուա-
ւոր անդամ: —

— Պետերբուրգում աիկ. Զաբէլ Բերբերեանն ու պ. Եղիշե
Փաղդասարեանը հրատարակել են «Արցունքներ» անունով մի

գրական-երաժշտական, գեղարուեստական ժողովածու, որի արդիւնքը յատկացրուած է հայ սովեալներին: Ժողովածուն պատկերադարտ է և հաղմուած է հայ կին գրողներէց թէ ինքնուրոյն և թէ թարգմանական:—

—Յայտնի հայ բարեգործ Ա. Մանթաշեանը յարգուով Թիֆլիսի առաջնորդ Գարեգին սրբազանի միջնորդութիւնը, յատկացրել է Ներսիսեան դպրանոցի նոր շինութեան համար 150—200 հազար ռուբլի: Թիֆլիզի առաջնորդարանում վերջերս կայացած մի բաղմամարդ ժողովում որոշուել է շինութեան մակարդակի համար 2500 ռուբլ. մրցանակ նշանակել և այդ առթիւ ծրագիր մշակելու համար ընտրուել է մի մասնագործով ճարտարապետներէց, մանկավարժներէց և մի բժշկից: Շինութիւն կառուցուելու է տիկ Նազիրեանի Ներսիսեան դպրանոցին նուիրաբերած և Ստօկնազի մօտ ընկած հողի վրայ:—



ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Սուրբ Գրքի նորագիտ հին ձեռագրեր.—Անցեալ տարի Գոտտն Մենինը և ամերիկացի գիտնական Ջարլզ Քրիքը Գիզէի եգիպտացի առևտրականներէ մօտ եղած հնոտիներէ մէջ գտել են Առաւօտաշնչի հին ձեռագրեր, որոնք դուրս են եկած եղել Վերին Նզիպտոսի հին Ահմէմ քաղաքի պեղումներէ ժամանակ: Այժմ Մենինը Journal des Debats թերթում այս չափազանց կարենոր գիտն մասին մի քանի տեղեկութիւններ է տալիս: Ամերիկացի գիտնականներէ կարծիքով այդ ձեռագրերը պիտի վերագրել Քրիստոսի Դ. ե. և 2. դարերին: Նրանց մէջ կան Մովսիսի հինգերորդ գիրքը, Յեսու Նաւիայի գիրքը, Սաղմոսը և համարեա ամբողջ Նոր Կտակարանը: Նրանց մէջ կան շատ նոր վարիանտներ և արժէքաւոր լրացումներ այն ձեռագրերէ համար, որոնք պահուած են Բրիտանական Թանգարանում և Վատիկանում, և Մենինի կարծիքով պիտի յարուցանեն Սուրբ Գրքի հին բնագրի նոր ստուգում *:

* Նորերս հրատարակուել է Ն. Կտակարանի՝ յատկապէս աւետարանների ուսումնասիրութեան համար արժէք ունեցող մի հատուած՝

«Ձեռք եւ սիրք».—Անգլիայում մինչև այժմ պահուել է մի սովորութիւն, որով նահանջ տարուայ ընթացքում կենն իրաւունք է ունենում աղամարդուն յայտնել իւր սէրը և առաջարկել իւր ձեռքը և սիրտը: Այս աւանդութեան այժմեան անգլիացիք աւելի շուտ հեղնութեամբ են վերաբերում, սակայն մի քանի դար առաջ այդպէս չէր: ԺԱ. դարում շոտլանդական պարլամենտի կարգադրութեամբ աղամարդը մերժելու դէպքում ենթարկւում էր մինչև 100 ֆունտ-ստերլինգ (628 ռ.) տուգանքի. բայց այդ մերժողը իւր դէմ էր յարուցանում հասարակական կարծիքը: ԺԵ. դարում արդէն այդպիսի անսովոր ամուրիներին աւելի մարդասիրաբար են վերաբերում. նրանց վրայ միայն պարտաւորութիւն է դրւում մերժած առաջարկին պատշաճ յարգանքով վերաբերուել: Սակայն բայց այդ սովորոյթի կանոնները համաձայն մերժման վերաւորանքը վերացնելու համար աղամարդը կնոջը պիտի նուիրէր մետաքսէ թաշկենակ, որ այն ժամանակ թանգ էր:

Ներխանքի մահը.—«Столичная Почта» թերթի յաւելումածում դրուած է մի հետաքրքիր վիճակագրութիւն երեխաների մասին: Ներդպական Ռուսաստանում 1895—1899 թուականները ընթացքում ծնուել են 23,256,842 երեխաներ. որանցից մինչև մի տարեկան դառնալը մեռել են 6,186,643, ընդհանուր թուի $4\frac{1}{4}$ -ից աւելին. իսկ մէկից մինչև 5 տարեկան դառնալը 9,479,378, ուրեմն ընդհանուր թուի 40 $\frac{1}{10}$ -ից աւելին: Այսպիսով ծննդից մինչև 5 տարեկան դառնալը մեռնողների թիւը համարեա թէ ծնողների թուի $\frac{5}{4}$ -ն է լինում:

Այս թուերն աւելի զարմանալի կը լինին, եթէ համեմատենք միւս պետութիւնների երեխաների մահուան քանակի հետ: Մինչդեռ Նորվեգիայում ծնուած 1000 երեխաներից մեռ-

Օքսիրինքոսի պապիրոսների Ե. հատորի մէջ: Հրատարակիչներն են Դրեն-ֆել եւ Հունտ: Պապիրոսի այդ հատուածը պահել է Յիսուսի կեանքից մի վիճաբանութիւն տաճարի մի պաշտօնեայի հետ լուացման եւ արտաքին մաքրութեան մասին. Դիտնականներից ոմանք եբրայական կամ եղիպտական անվաւեր աւետարանների մաս են համարում, բայց պրոֆ. Բուսէտ համաձայն չէ այդ կարծիքին եւ ենթադրում է, թէ Դ. աւետարանի հեղինակին ծանօթ մի աղբիւրի մաս կարող է լինել: Սակայն կասկածելի է եւ ենթադրական հէնց այն կարծիքը, թէ Յովհաննէս ալփաի մի աղբիւր է ունեցել աչքի առաջ:

Նույժ են 96-ը, Պերմի նահանգում Նոյնչափ ծնունդները մեռ-
նում են 455-ը: Համարեա Պերմի նահանգից յետ չեն մնում
Մոսկուայի (1000-ից 363-ը), Նիժեգորոդի և միւս նահանգ-
ները:

Այս երեւութի պատճառները հետեւեալներն են. ա) անտե-
սական անտպահով դրութիւնը. բ) ընակչութեան անկրթու-
թիւնը, որ պատճառ է դառնում երեխայի արհեստական ուր-
նուցմանը. որանից է, որ մեծ մասամբ երեխաները մինչև մի
տարեկան դառնալը մեռնում են ստամոքսային հիւանդութիւն-
ներէից. գ) վարակիչ հիւանդութիւններ, որոնց պատճառով
Ռուսաստանը երեխաների մահուան թուով գերազանցում է
միւս պետութիւններէից 2—7 անգամ. և դ) մօրն անխնամ պա-
հելը և նրան չափազանց աշխատանքներով ծանրաբեռնելը
յլութեան շրջանում և նրանից յետոյ:

ԻՅԲՃԱՅԱՐԺ չմուշկ.—Փորձեր իէն լինում չմուշկներով ման-
գալու ձեռք գործադրելու ոչ միայն սառցային հալթ մակե-
րեւութի վրայ, այլ և սովորական ճանապարհներէ վրայ տարուայ
ըլոր եղանակներէն. այդ փորձերը մօտ օրերում, որք սն կարելի
է դատել, պսակուեցին կատարեալ յաջողութեամբ: Զուիցե-
րիայի ճարտարապետ Կուլլերը կարողացել է հնարել այս նպա-
տակին ծառայող ինքնաշարժ չմուշկ: Այդ չմուշկը մի անիւ է,
որ ամրացնում են ոտքին դրսի կողմից և որը թեքուած է դէպի
ներս: Ոտքին ամրացնելու համար այդ ներսի կողմից ունի եր-
կաթեայ տափակ շերտ, ներքանի երկարութեամբ, որ անուի
վրայ ամրացրած է կենտրոնից քիչ ցած հորիզոնական ուղղու-
թեամբ և ընկնում է ներքանի տակ: Սրա երկու կողքերից ուղ-
ղահայեաց բարձրանում են երկու շինքեր, որոնք համարեա մինչև
ծունկն են հասնում, ուր նորա վերջանում են կաշուէ կամ
ռետինէ լայն շրջանակով, որը ամուր գրկում է ոտքը: Սովո-
րական չմուշկով սահել իմացողը մի քանի րոպէում սովորում
է այդպիսի ինքնաշարժ չմուշկով ման դալ, իսկ վաղքի արուես-
տական ճաբպիւթիւնը ձեռք է բերում վարժութեան միջոցով»

(E. C. II.)



«ԱՂՐԻԻՐ»-Ի ՅՈՒՆԵԼԵԱՆ

Ինչպէս արդէն յայտարարել էինք, այս տարի աշնանը Թիֆլիսում կատարուելու է «ԱՂՐԻԻՐ» մանկական ամսագրի 25-ամեայ յօրելեանը, որի համար ընտրուած է յատուկ յանձնաժողով բաղկացած հետեւեալ անձերից՝ Իսխանյանի Արդուքեան-Երկայնաբազուկ Սոփիա, Տ. Տ. Առսամեան Հեղինէ, Սպենդիարեան Յովիանէ, պ. պ. Բաժինջաղեան Գեորգ, Բարխուդարեան Գեորգ, Մելիք Ազարեան Ալէքանդր, Յարութիւնեան Իսահակ, բժիշկ. Նաւասարդեան Բագրատ, Նար-Դոս, բժիշկ. Շիսեան Արսաւէս, Սպենդիարեան Յովհաննէս, Սոլովեան Յովակիմ եւ Քալանթար Ալէքանդր:

Մեր ազգի վերածնութեան գործում նորաբողոք սերնդի պատշաճաւոր կրթութիւնն այն միակ յենարանն է, որի վրայ հանգիստ սրտով կարող ենք դնել մեր բոլոր յոյսերը: Յայտնի է, թէ յատկապէս մանկական աշխարհին նուիրուած մի ամսագիր որ աստիճան բարձր ու վեճմ կոչուի՝ ունի կրթութեան ասպարէզում: «ԱՂՐԻԻՐ»-ը 25 տարի ծառայել է այդ կոչմանն ամենայն հաւատարմութեամբ, և մեր փոքրիկ ազգը կատարելով մեր այդ անդրանիկ և երկար տարիներ նաև եզակի մանկական թերթի քառորդ-գարեան յօրելեանը՝ կատարած պիտի լինի իր իսկ կուլտուրականութեան զօրաւոր փակտորներից մէկի տօնը: Յայտարարելով այս մասին ի գիտութիւն ընդհանրութեան, յանձնաժողովս կոչ է անում ամեն մի հայաբնակ քաղաքի հասարակութեան՝ կազմել ձեռնհաս անձերից տեղական մասնաժողովներ՝ ըստ պատշաճին մասնակցելու յօրելեանին: Յանձնաժողովիս գլխաւոր նպատակն է յորելեանի առթիւ կազմել մի ֆոնդ՝ տպահովելու համար «ԱՂՐԻԻՐ»-ի հրատարակութիւնը: Յօրելեանը որ օրը կատարուելու մասին կը յայտարարուի առանձին:

Յանձնաժողովի նախագահ՝ Բժիշկ. Բ. Նաւասարդեան

Քարտուղարներ } Բժիշկ Ա. Շիսեան
 } Նար-Դոս

Ծանօթ.—Յանձնաժողովիս հետ յարաբերութիւն ունենալու համար պէտք է դիմել հետեւեալ հասցեով՝ ТИФЛИСЬ Д-РУ Баграту Абраамовичу Навасардяну, директору первой ч. лѣчебницы.

ՀԱՅ ՏԵՍԱԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՏՈՐ Ա. ՀԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Հ Ե Լ Ա Ե Գ

Յրաւանդ վարդապետ Տէր Մինասեանց

XII+390 էջ.

Ճանապարհածախսով գրնն է մի բուրլի քսանհինգ կողէկ

Դիմել էջմիածին ԵՐՈՒԱՆԴ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ.



Հ Ո Վ Ի Ի

Ազգային, հասարակական եւ գրական շարքաքերք

Երրորդ տարի

Տարեկան բաժանորդագինը 4 ռ.

Կէս տարուանը 2 ռ. 50 կ.

Հասցեն՝ Тифлисъ редакция „Овивъ“.

Խմբ.-Հրատ. Եղնիկ ա. քահ. Երզնկեան.



ՀԱՅՐԵՆԻՔ

ԱԶԳԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԽԹԱԹԵՐԹ

Բացուած է բաժանորդագրութիւն ապրիլից

բաժնէզինը 9 ամսի համար 2 ռ. 50 կ.

« արտասահման 3 ռ. 50 կ.

ՀԱՏՈՎ 7 ԿՈՊ.

Խմբագրութեան հասցեն՝ Թիֆլիս, Պօլից. 7.

Խմբագիր՝ ԳԻՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑ

Հրատարակիչ՝ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՏԻՄՈԹԷՈՍԻ ԵՊԻՍԿՊՈՍԱՊԵՏԻ ԱՂԷՔՍԱՆԴՐԵԱՅ

ՀԱԿԱՃԱՌՈՒԹԻՒՆ

ԱՌ

ՍԱՀՄԱՆԵԱԼՄԵՆ Ի ԺՈՂՈՎՈՅՆ ՔԱՂԿԵԴՈՎՆԻ

Ի ԼՈՅՍ ԸՆԾԱՅԵԱԼ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ

ԿԱՐԱՊԵՏ Ժ. ՎԱՐԴԱՊԵՏ Ի

ԵՒ

ԵՐՈՒԱՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ Ի

ԳԻՆՆ Է ճանապարհածախսով 4 րուբլի

Դիմել էջմիրածին՝ ԵՐՈՒԱՆԴ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

1908

ԱՄԱՆ

6

ՅՈՒԼԻՍ-ՕԳՈՍՏՈՍ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՅՈՒԼԻՍ—ՕԴՈՍՏՈՍ 1908 թ.

1. ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ. Քաղուածք յօրադրութեանց Սինոդի 606—614
ԿՐՕՆԱԿԱՆ—ԵԿԵՂԵՑԱԿԱՆ
 2. ԿԵՆՐԱՆԻ ՀԱՅ ՎՈՒՍ. Գ. Երվանդ . . . 615—617
 3. ԴԱՐՃԵԱԼ ՂԵՂԵՍԱՆ ԲԱՆԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՍԱՔԱՍ
Բ. ՍԱՐԳՍԻԱՆԵՐ . . . 617—624
 4. ՄԱՅՐ ԱՌՈՒ. 625—626
- ԳՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ *
5. ԴԵՏՐԳ ԴՈՂՈՒՍԵԱՆ, ՄԻՍԱՐ ՄԵԺԱՐԵՆԵՐ, ԵՂԵԱ ՏԷ-
ՄԵՐՃԻԱԿԱՆ 627—632
 6. ՀԱՅ ՆԱՀԱՅԱԿԱՆ ԴԵՐԵԱՍՏԱՆԵՐ Խ. ՍԱՄԱԷԼԻԱՆ 633—649
 7. ԱՇԽԱՐՀԱՐԱՐԻ ՀՈՂՈՒՆԵՐԸ. Մ. ԱՐԵՂԻԱՆ . . . 650—666
 8. ՄԵԺ ՀՈՂԵԱ Գ. Ս. ՊԵՐՈՎ 667—690
 9. ԲԱՐԶԷՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԺՈՂՈՎԻ ԹՈՒՆԿԱՆԵՐ ԵՒ ՏԵՂԸ
ՍՏԱՆԴ ՎԱՐԴԱՅԵՍ 691—707
 10. ՏԻՄՈԹԷՈՍ ԿՈՂԻ ՄԱՍԻՆ ԸՐԱՊՈՆԵՐՈՒՄ ԵՒ ՈՒՂԵՐԸ,
Գ. Տ. ՄԻՐՅԱՆ 707—798
 11. ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ. Ն. Վ. Տ. ՄԻՆԱՍԵԱՆԵՐ. ԸՆԴՀ. ԵԿԵՂ.
ԱԿԱՄԺ. Գ. Վ. ՅՈՒՆԻԱՆԵՐ.—ՍԱԽԱԿ Մ. ԲԱԽ.
ՍԱԽԱԿԻԱՆԵՐ. ՀԻՆ ՈՒՍԱ, ՍՐԵԱՂԱՆ ԱԿԱՄԺ. Գ.—
ԲԺԻԵԼ ՍԻՄԵՈՆ ՇԱԽ-ՆԱԳԱՐԵԱՆԵՐ. ՍԵՂԵՐԱԿ ՄԱՆ-
ԴԵՆԵԱՆԵՐ ԵՐԸ ՍԵՐՈՒՄ ԵՐԵԱՆԻ ՀԱՅՈԿ ԹԻՄԱԿԱՆ
ՀՈՂԵՐ ԴՎԵՐԱՆՈՅԻ. ՄԻ ՊՈՒՆՈՂԵՐԱՓԻՍՏ . . . 765—720
 12. ՏԱՃԿԱՆԱՅԲ. ՍԱՆԿԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱՂԵՐՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ՕՐՄԱՆԵԱՆ Ս. ՊԱՐԵՐԵՐԸ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ . . . 720—722
 13. ՆԱՄԱԿ ԽՄԵՐԱԿՐՈՒԹԵԱՆ 732
 14. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ